S. Nierses,
Episcopus Lambronensis.
Oratio synodalis et duae
alterae homiliae.

Venetiis 1787.

251
471-42

ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ
ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄՊՐՈՆԱՑՈՅՈՅ

Ա.ՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ տարբոնի կիլի
կեցւոց ։

ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ։

Եւ ՀԱՌՔ ԸՆՏԻՐՔ 'Ի ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՀԻ ,
Եւ 'Ի ԳԱԼՈՒԱՏ ՀՈԳՈՒՈՅՆ ՍՐԲՅ ։

Տպագրեալ Բաղդասարեանց ուղղագոյն
օրինակաց ։

'Ի Հայրապետութեան Տն Ղուկասու Հայոց
կաթուղիկոսի ։

Յամի թն . 1787 . 'Ի Հոկտեմբերի . 1 .
Եւ 'Ի Ռոմականուէն հայոց . տպարանէ .

8391-57

'Ի ՎԵՆԵՏԻԿ
'Ի տպարանի յովհաննու փիլացեան ։
Հրամանաւ Ռէյնարդոյ ։

243

Orazione funebre, e due altre
Omelie di S. Marco Lombardo
nerso. 1787

EX BIBLIOTHECA
FRIDERICI IACOBI.

ՀՅԱԾԽՈՒՄԲ և 'ի պիէղբրաչան ժողովն պարսոնի, որ էղև 'ի համարբէշաչ կնոնոաղիկոսէն հայոց գրիգորէ յեղբօրորդ-ւոց աբէն ներսեսի կլայեցւոյ, և 'ի ջաղաչաչ արքայէն հայ-ոց լանէ, սակա դուռ էկեղեցւոյ։

Ամենաչան խօսք մեծի և աբէն ներսեսի այնմ ճշմարտի ջաղաչի աղեռաչալի, և ճշմարտ վարդապետի։

ՈՂ ՀԱՅՐԱՐ ՕՄԻՐՈՒՐ ԵՒ ՎԱՐ-դապետք ՀՇմարտուէն։ Ամ քսի ժողովրդեանն գլուխք և հովիւք։ Ամ տանն այ վերակացուք և մատակարարք. զոր տեսանեմ այսօր գումարել 'ի միշունչ և 'ի միմարմին, և առ գլուխս հանուրց պատկանեալ։ Ամ զձեզ ած 'ի մի 'ի խաղաղս նաւահանգիստ՝ խաղաղարարք տիեզերաց, բայց թէ որ յերկնից տուաւ մեզ խաղաղութիւն հոգին սբ. և ոչր աղաղաւ, բայց թէ առ սկիզբն առնել շինուէ քակեալ և կործանեալ տաճարին այ. զոր սկզբնաւորն նաբուգոդոնոսոր տապալեաց։ Ամ՝ որ երբեմն 'ի վաղ ժամս յաւար էառ զսորա սրբութեան մաքուր և սբ սպաս պաշտամանն. զոսկեզէնն ասեմ և զարծաթեղէնն. և ետ որդւոց իւրոց և հարճից անմաքուր խրախճանութեանցն ըմպելիս։ Ամ դէաք և մեք գերեալք, որ-

գարև 'ի մէջ ուռեացն անպաղուն կախեալք ըզ-
կտակարանս այ մերոյ, որդիքս սիոնի. և հառա-
չէաք արտասուօք 'ի յանողորմ առաստանն։ Ուռ-
ցեալ էին և լեզուք մեր 'ի հաճոյական այ փառա-
բանութենէն. քանզի ոչ ախորժելի վերին խաղաղու-
թենն երուսաղէմի սրդուոց՝ յօտար երկիր խառնա-
կութեամբ երգել զայ մերոյ օրհնութիւնն։ Այլ ամբ-
լցաւ ծամ բարկութենն. և չափ մեղանացն՝ որոյ
փոխանակ պանդխտեաք 'ի ծառայութենն տեղի ետ։
Կառաքեցան ամբն եօթանասներորդ, զոր խօսե-
ցաւ ամ բերանով երեմիայի մարգարէի։ Նչեցին
նախ քան զայս հոգւոյն այ անդեաս և զաբարիաս.
եղեն աւետարանիչք մեզ դարձին և վերստին փրր-
կութեն. զփառս վերջին տաճարիս՝ որոյ հանդեր-
ձեալ էք լինել նորոգիչք, առաւել քան զառաջ-
նոյն գուշակեցին արտաքսեալք։ Նորա այս յեսու
յովսեդեկայ, առ 'ի գլուխ զշքեղազարդն պսակ.
զարթոյց հոգին այ զզօրաբաբէլն աղաղաքիելի. և
ահա եղեն մեզ գերեդարձք և առաջնորդք յերու-
սաղէմ։ Լաստի և տեսանեմ պայծառ զամբնն ձեր
զդէմս։ Քանզի ահա հասեալ են ոտք մեր առ
դրունս սիոնի. սակայն չև ևս զկատարեալն ունիմք
ուրախութի սեպհական։ Զի որպէս այս, մինչդեռ
տուն այ մերոյ քակեալ և կործանեալ տեսանի.
զիարդ ցնծութի անվթար. յորժամ փոխանակ զար-
դուցն շքեղից տաճարին՝ միայն զխանձողսն տե-
սանեմք 'ի ճարակմանէ հրոյն մնացեալ 'ի նաբու-
զարդանայ։ Սակայն մի վհատիք, քանզի լերուք
ճարտարապետք իմաստութեանք. բուռն հարէք նորո-
գել զբնակութի այ ձերոյ. ինքն զձեզ ած, և ինքն
գործ զայս հրամայէ բերանովք սրբոցն մարգարէից
կատարել։ Զատ որում եկեալ զաբարիաս խօսի առ
մեզ բանիւն այ։

Զսա

Լ՝ասա՛ ոչ երանելի մարգարէ, է՞ մեզ կարելի սա-
կաւաւորացս և նորոգ զերծելոցս՝ զձշմարիտ սողո-
մոնի զտաճարս դարձեալ ըստ առաջնոյն փառացն
իւրոց նորոգել։ Պատասխանէ մարգարէս։ Լ՝ասպէս
ասէ Տէր ամենակալ. զօրասցին ձեռք ձեր, որ
լսէք զբանս զայսոսիկ յաւուրս յայսմիկ 'ի բերանոյ
իմոյ. և եղիցի որպէս էիք յանէծս 'ի մէջ ազգաց
տունդ յակոբայ և տունդ իսրայէլի, նոյնպէս ապ-
րեցուցից զձեզ, և եղիջիք յօրհնութի։ Լ՝աջալերե-
ցարո՛ւք, և զօրասցին ձեռք ձեր. զի այսպէս ա-
սէ Տէր ամենակալ. որպէս 'ի բարկացուցանել զիս
հարցն ձերոց չարչարեցի զձեզ. այսպէ՛ս և այժմ զբաղ-
ջացայ, և նոյնպէս պատրաստեալ եմ և խորհեալ
եմ բարի առնել յաւուրս յայսմիկ երուսաղէմի և
տանդ յուդայ. քաջալերեցարո՛ւք։ Լ՝ու այս բանք
են զոր առնիցէք։ Լաւսեցարո՛ւք զձշմարտուն իւրա-
քանչիւր ընկերի իւրում, և դատաստան արդա-
րութեա՛ն և խաղաղութեա՛ն դատեցէ՛ք 'ի դրունս ձեր։ Լ՝ու
իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում զառաջին չարիսն
մի՛ խորհի՛ք դուք 'ի սիրտս ձեր. և զերդումն սուտ
մի՛ սիրէք. զի զայս ամատեցի, ասէ Տէր ամենա-
կալ։ Լ՝այլ դի՛ք զսիրտս ձեր 'ի ձանապարհս ձեր.
ելի՛ք 'ի լեառն. հարի՛ք փայտ, և շինեցի՛ք զտունդ.
և հաճեցայց դովաւ և փառաւորեցայց ասէ Տէր։
Լ՝ուր՝ ահա լո՛ւսայք դուք ամենեքեան ձայնի Տն Տայ
ձերոյ. այնմ՝ որ ժողովեաց զձեզ 'ի բոլորից հողմոց
երկնից։ Լիոգնի դատերքդ, որք անայք 'ի բաբելոն
խառնակուե՛ք, և խեռվուեն քաղաք, և զարթեայք
ահա 'ի կամս սրբոյ մերոյ քահանայապետիս՝ մնա-
յորդք Տամ ժողովրդեանդ, ակսեալք գործել զգործ
տան Տայ մերոյ յտի՛ քոնի։ Լ՝ու թէ բարուք թուի յաչս
ձեր, նախ քան զայս, ընկալարո՛ւք զխորհրդակ-
ցութի ուրումն եղբի օրէնսգիտի. զմանկունս ծնեալ

մեզ 'ի քաղդէացոց սերմանէն զվիմի հարցուք ։ զիղձս երանութեան հարցն մերոց մեք սեպհականեսցուք ։ զի մի բարկասցի ՅԱԾՆ մեր , դեռևս տեսեալ զմեզ յօրինաց նորին խոտորեալս ։ Այնաւանդ զի մի սատան լիցին մեզ 'ի բարւոք գործառնութեան սոյն տաճարիս շինութեան ծնունդք օտարացն ։ Լաւ ապա լինիցի մեզ վայելչապէս զշինուածոյ տաճարիս բուռն հարկանել ։ Յետ այսորիկ առատ գտցուք զպաշտպանութի ամենաբաւական ձեռինն 'ի տան իւրոյ նոր

բոգուն ։

Ամէն թերևս ոք ընդարձակութիւն ապացուցիս բամբասել զմեզ արտաքոյ արշաւել խորհրդոյս զօրութեան ։ Ինձ ոչ բնաւ այս կարծիք , որ հաւանեալս եմ ՀՇՄԱՐՏՈՒԹԵՆ՝ որ 'ի պօղոսէ վերաձայնի . այն ՈՄ օրինակաւ ասէ լիներ առ նոսա , և գրեցաւ 'ի մեր վարդապետութիւն ։ Վանդի թէ հաւատամբ ղերծանել արեամբ ՀՇՄԱՐԻՏ գառինն յաներևոյթ փարաւոնէ՝ ոչ և նոքա 'ի ղգալոյն , և անցանել ընդ ծով մեղացն՝ ոչ և նոքա ընդ կարմիրն , և ունել առաջնորդ զՀոգևոր վէմն՝ որպէս և նոքա զմարմնաւորն , և մտանել քնիւ քնիւ յերկինս , որպէս և նոքա յեռուանաւեայ յերկիրն աւետեաց . և եղև այս ՈՄ ընդ մեզ սիրով և հաւատով , որպէս եղև ՀՇՄԱՐՏԱՊԷՍ . և աղաղակեն ՈՄ գիրքն ՈՄԾԱՇՈՒՆՉԸ , թէ զստուերն հանդերձելոյ բարեացս նկարագրեցին օրէնքն . ապա և տաճար շինեցաւ 'ի մէջ մեր ՈՅ՝ որպէս և առ նոքօք . և խորան վկայութեան շրջեցուցանեաք ԸՆ մեզ յառաջ քան ըզնոյն՝ մինչդեռ յանապատն պանդխտեաք ։

Լաւ ԸՆԷՐ է ինձ պատրուակաւ զընթացս բանիս 'ի յառաջ ձգել . և ոչ մաքուր հաւատոյ ձեր առաջի զոյն մերկացուցանել ։ Կանգնեցին մեզ առաքեալքն սՊՔ հրամանաւն քնի , մինչդեռ յանապատ

պատ հեթանոսացն հալածանաց շրջեաք , խորան վկայուէ մաքուր հաւատոյ . ըստ որում ասէ առաքեալ , ես հին եղի զմ՝ քո ։ Լրդ իւրաքանչիւրոք զգոյշ լինիցի 'ի շինելն . զի դուք էք տաճար ՝ոյ կենդանւոյ , և հոգի ՝ոյ բնակեալ է 'ի ձեզ ։ Լու քո իբրև զորդի իշխէ 'ի վրայ տան իւրոյ . որոյ տունն մեք իսկ եմք . և տանս քահանայապետ քո ։ Օ այս տուն հաւատոյ , զոր 'ի վրայ քոի շինեցին նոքա , և քո 'ի վրայ իւրեանց . 'ի վրայ այդր ասէ վիմի շինեցիոց զեկեղեցի իմ , շրջեցուցին հարքն մեր բաղում ժամանակս յանապատ կռապաշտունն հալածանաց փառաք և պատուհով ։ Լու աստ և 'ի ներքոյ այսր հաւատոյ իմանալիս տան , յորում էր տախտակ ՝ածագիծ մարմնոյն քոի , և գաւազան նորին ծաղկեալ , վկայքն պատարագեցան , մարտիրոսքն նահատակեցան , քահանայապետքն սրբք զառաքինութի նց ՝ոյ նուիրեցին . մինչև կամքն ՝ոյ քաղցրացաւ . և որպէս զնա յերկիրն պարգևաց ած զմեզ 'ի խաղաղութիւն եկեղեցւոյ առ բարեպաշտ թագաւորքն ։ Վ՝ այսորիկ որպէս սողոմոն զդիւրաշրջելի տաճար խորանին կանգնեաց , և յարձանաց տուն ՝ոյ հաստատեաց , այսպէս և բարեպաշտ արքայն կոստանդիանոս զայսրանդր տարբերեալ տուն հաւատոյ եկեղեցւոյ քոի՝ 'ի ձեռն տիեզերական ժողովոյն Նիկիայ անխախտելի ամրութիւ՝ պնդեալ հաստատեաց . և գրեթէ նոր ձևացեալ պայծառացոյց զաղաւաղեալն 'ի պանդխտուէ հալածանացն անապատի , առաջին գեղոյն շքեղաղարդեալ ։ Լու շինեցաւ այս տաճար մեր ՝ճշմարիտ հոգևոր առ կոստանդիանոսիւ՝ 'ի ձեռն սրբ յիշ . հարցն . որպէս նոցայն զդալի առ սողոմոնիւ՝ . և գիրն եղծաւ , իսկ ՝ճշմարտութիս 'ի նոյն ձև երանկոյ անվթար

գեղեցկացաւ։ Եւ խորանն վկայութեան շնորհացն քոյ, զոր առաքեալքն կանգնեցին, և հետևողքն շրջեցուցին, առ սովաւ անխախտելի սնդութեա՛ն ի ձեռն սրբոյ ժողովոյն Նիկիայ հիմնեցաւ։ Եւ արկաւ ապա յայս տաճար դահոյք ոչ, ոչ սեղան ոսկեղէն քաւութե՛ն զոր մովսէս հրամայեաց, և բեսելիել շինեաց. այլ հեղութի՛ խոնարհութե՛ն և սէրն նորա, զոր քո՛ հրամայեաց, և առաքեալքն նորին գործեցին և մեզ աւանդեցին։ Հանգչեր ի՛ սա նա. որ երբեմն չունէր տեղի՝ ուր զգլուխն դնէր. հաձեցաւ ի՛ սմա բնակել, քան ի՛ կառս քերովբեականս։ Իսկ յորժամ տեսին մարդիկ թէ տաճար ոչ է՝ զեաք, և հոգի նորա սուրբ բնակեաց ի՛ մեզ. փոխանակ անշունչ տարերաց իմաստնացեալք խորհրդով, ոչ՝ յայնժամ ցեղքն իսրայելի՝ տային նիւթ խորանին ոչ, ոչ ոսկի կապուտակ կամ ծիրանի զգալի, այլ զանձինս իւրեանց. ոմն մաքրութի՛ն, ոմն խոնարհութի՛ն, ոմն վկայական արեամբ։ Լուռնուին ձարտարապետքն իմաստունք և գործեին սաքոք զառաջատ և զխորան վկայութեանն քոյ։ Ոչ զոք ի՛ նոցանէ խարեալ մերժէին, թէ և յանպատկան նիւթոյ, թէ պղինձ, թէ մազ այծեայ, ըստ իւրում չափոյ և շնորհացն՝ պատկանէին զնոսա ի՛ նիւթ խորանին հաւատոցն, այսինքն՝ զի և պոռնիկք զղջացեալք եղեն ի՛ տուն քոյ զարդք, և մարդասպանք ողորմութի՛ն գտեալք, և ուրացուո՛ն սևացեալքն՝ և դարձեալ զղջացեալքն։ Զանգի պիտոյ է ամենայնն ի՛ զարդ խորանիս հաստատակաց՝ թէ խուժ թէ դուժ թէ սկիւթացի, և ամենայնն ի՛ քո՛, և յամենայն քո՛ յարմարեր։ Ոչ թէ յեգիպտոսէ միայն խաբեցին՝ և առին զայս նիւթս, այլ յերուսաղեմէ մինչև ի՛ լիւբիկեայ, և ի՛ հարաւոյ մինչև յունիկուրայ. և ի՛ ժառանգու-

գուլթէն սեմայ մինչև 'ի ծագս հիւսիսոյ տանն
յարեթի հետիոտս ընթացեալ, զամենեսեան ա-
շակերտեցին հոգւով զօրացեալքն և մարմնով տա-
ռապեալքն։ Օ հաւատոյ խորանս յերկրի կանգ-
նեցին. որպէս զի ներգործուի գործոյն այ՝ տա-
յի այ, և մի մարդկային մարմնոյ։ Լու զիարդ
մարդկան կարելի, որ 'ի հոգիացելոյն արբոյ կա-
տարեցաւ հրաշալի. նոքա, որ զերրս անգիւն աշ-
խարհի, մարդ մի՝ և անձն մի՝ և շունչ մի՝ և մար-
մին մի՝ և տաճար մի՝ այ իւրեանց արարին։
Ով աքանչելեացս, գոր՝ առ որ տկարանայ բռնուի
թագաւորաց և ուժգնուի իշխանաց, վշտացեալքն
և չարչարեալքն զօրեցին աւարտել։ Նոքա որք
մեռեալ էին աշխարհի, և կենդանիք այ, նոքա
յայս զարմանալի միակրօնուիս ածեալ զամենե-
սեան փակեցին։ Նոքա որք խաղաղարարք եղին
տիեզերաց, և յօդակապք 'ի քաղան բաժանելոյն.
Նոր վասն այսպէս զօրացեալք. յայտ է, վասն զի
անըստգիւտ հաւատով 'ի գործն այ կանխեցին.
զի առ հանդերձեալ փառսն միշտ արթնութեամբ
հայեին։ Լուստի և առհաւատչեայ փրկեցելոյն
զանձինսն յօժարութիւն դնէին, ըստ այնմ զոր գրէ
առաքեալ. նոմիրիմ 'ի վերայ պատարագի և պաշ-
տամանն ձերոյ, ուստի և խնդամ և ուրախակից
եմ ամենեցուն ձեր։ Լու որպէս հիմն եկեղեցւոյ
պետրոս ասէր՝ զանցս չարչարանաց եղբայրութիւն
ձերոյ յանձինս կատարեալ. այսպէս եղեալ պատ-
կեր քրիստի երկնաւոր խաղաղարարին արեան և խաչի,
ապա կարացին հաստատեալ զնոյն 'ի յերկրի, աշա-
կերտք սիրոյն սիրելի։ Լու խնդրեմք, զի՛նչ պտուղ
խաղաղութեն յայնժամ, զոր ետուն աշխարհի. զի՛նչ
այլ, բայց եթէ երկիրս երկին եղև. և փառքն որ
'ի բարձունս էր այ, և յերկիրս տարածեցաւ. և
սրբ-

արքաբանութիւն սրովբէից 'ի բերանոյ հասարակաց մարդկուէս ելից զայս տաճար հաւատոց հոգևոր՝ անհանդիստ աղաղակաւ ։ Ի կայքն զինեին , և զօրագլուխքն մարզէին . առաջիկուքն պընտէին . և վարժիչքն քաջալերէին , ձիգնութեամբն ժուժկալ լինէին , և զողորմուին առատացուցանէին . զնէրն տարածանէին , և զծնեալն 'ի նմանէ որդիս յարգեալ պատուէին , միշտ երկնային մանանայիւն պարարեալք կերակրէին , և յաւետարանական վիմն առագեալք ծաղկէին ։

Լտես բարձրեալն ոճ և հաճեցաւ . հայեցաւ 'ի նորն հաբել 'ի միածինն իւր որդի , և 'ի պատարագ մարմնոյ իւրոյ յեկեղեցի , և հոտոտեցաւ 'ի հոտ անուշից ։ Լհան զնոսա այնուհետև յանապատ կուսապաշտ իշխանացն հալածանաց , և ած 'ի սաղիմ հոգևոր , և մարմնաւոր խաղաղութիւն 'ի ձեռն բարեպաշտ թագաւորաց ։ Լ.ռ 'ի ձեռս ըզգաւազանն երկաթի , և սկսաւ նովաւ հովուել զեկեղեցի իւր . ոչ սաստկութիւն որպէս զիսրայել , այլ քաղցրութիւն և ողորմութիւն . զի որ սաստիւն փշրեաց զնոսա , քաղցրութիւնն պնդեալ միայոյց զոսոսա . և զի խրատն վարժեաց զորդիսն 'ի հնազանդութի , յետ այնորիկ և զսէրն նոյ սկսաւ ոճ ցուցանել ։ Լ.միտիեաց զսուր բարկուէն և զբաժակն պղտոր , զոր արբոյց դատեր սիոնի , և փորձեաց , և ետ նոցա ընդ հոգևոր խաղաղութեն և զմարմնոյ անդորրուին ։ Լկուն արար զանուրն կուսապաշտից ՝ որուէն 'ի պարանոցէ նոցա . և արդար իրաւամբքն յարոյց զԹագաւորս արդարս և ոճծապաշտս ։ Լտ 'ի ձեռս նոցա զվրան ժամու հաւատոյ իւրոյ , զի անտաշ 'ի մարդկային հնարից արձանաքն հոգևոր վիմայ զնոյն շինեսցեն ։ Լ.ծ 'ի ձեռն բարեպաշտն կոստանդիանոսի , նոր ժեր

սողոմոնի , 'ի չորից եղերաց աշխարհի զՀարտա-
րապետս իմաստունս , և շինեաց նոքաք զտաճար
հաւատոյ եկեղեցւոյ իւրոյ վայելուչ , որ գրուհա-
գրեցին զսա անապական իմաստիցն ոսկւով ։ Այլ
նկարեցին զսովաւ զքրովբէս երկնայինս յերկրի ,
և արարին զՀամ տիեզերքս մի տուն միոյն քոի և
եկեղեցի ։ Այլ ոք էր աղքատ յայնժամ 'ի բարե-
գործութեէ ։ այլ իբրև զքարինս էր ոսկի և ար-
ծաթ յերկրի մերում , զմաքրուինն իմա և զսբր-
բութինն ։ Այսոքան սոպա համարձակ քահանայա-
պետք յաջորդք քո 'ի վերայ տանն իւրոյ , հոլիւք
իմաստունք սկսան զհօտսն արածել ։ բժիշկք լի-
նել , և զփտեալ անդամսն յապաւել ։ քահանայքն
արթունք զնոունկ ժողովրդեանն նուիրել ։ Այլ
յայնժամ իբրև զփեսայ շքեղազարդեալ էր տե-
սանել զՀեմմեալն յառագաստ իւր քո ։ Զայն ար-
ձակեր քաղցր առ կոյսն ողջախոհ ։ ընդարձակեա
զտեղի խորանի քո և զսրահից քոց , կանգնեա , մի
խնայեր ։ երկայնեա զապաւանդակս քո , հաստա-
տեա զցիցս քո , յաջ և յահեակ թռուսջիր ։ և
զաւակ քո զՀեթանոս ժառանգեսցէ , և զքա-
ղաքս աւերեալս 'ի կռապաշտիցն՝ շինեսցես ։ Մի
ասէ երկնչիր ։ թէ մինչև ցայժմ նոքաք յամօթ ա-
ռարի զքեզ ։ զի երդոհայ և ոչ ևս զզջացայց 'ի
քեզ բնակել հաճութիւն , որ ես հանգիստ իմ յա-
ւիտեանս յաւիտենից ։

Յայնժամ որ վարանէրն դաղտնի սկզբնաչարն
թշնամին , ծանուցեալ թէ մեքենայքն իւր խայ-
տառակեցան , տիեզերքս ՀՀծպաշտութիւն ծաղկեցան ,
պատրեալքն դարձեալ փրկեցան , ժառանգորդք
դրախտին 'ի Հայրենիսն փութացան , երկրաքարշ
հեշտութինն տեղի ետ , և երկնայինս սրբութինն
պայծառացաւ , գործի ատելութեն խորտակեցաւ ,

և պտուղ սիրոյն ակաւ բազմանալ ; յոյս ամենե-
ցուն 'ի ստորնայնոցս վերացաւ , և յերկնային կայ-
անն հանգեաւ : Ի՞նչ ասեր յորջէն չարու-
թե՝ իբրև զառիւծ գոչելով շրջէր՝ բացեալ ըզ-
կոկորդ չարութեն , ջանացեալ առ 'ի կլանել զե-
կեղեցին փրկեալ քնիւ : Սակայն տկարն նկուն լի-
ներ 'ի սկզբանն , և մի շունչն և մի մարմինն 'ի
գլխոյն զօրացեալք՝ անգործ զմեքենայս թշնամ-
ւոյն առնէին : Ոչ ձգեր 'ի սովորական նետիցն 'ի
վերայ ոմանց պառնկութիւն կամ սպանութեամբ ,
կամ այլով ախտիւ հարեալ զնոսա , երագէին
բժիշկքն իմաստունք , և յառաջին առողջ բը-
նութիւնն հաստատէին : Ի՞նչպա տեսեալ թէ որով
սովոր էր պատքել՝ ձախակողմեան մարտն խայ-
տառակի , զաջակողմեան զինուցն բուռն հարկա-
ներ : Ի՞նչ զի՞նչ այս , այսինքն զի որպէս 'ի սկզբ-
բանն հերձուածողական մարտիւ ամենապատիրն
խաբեութիւն , նենգողն կարթիւ , հատուածեալ 'ի
բաց հերքեաց զմարդիկ 'ի դրախտէն . այսպէս և
այժմ ընդ ամրակուռ սպառազէնս մեր՝ սովաւ 'ի
հանդէս մտանէր : Ո՞ւրեմն է ինձ ասել մասնաւոր
նետիւք զձեզ խոցոտել՝ և 'ի յաղթութենէ 'ի դե-
ռևս ելանել . համանկործան կարօտանամ մեքե-
նայից , պիտոյ է ինձ գործի առ ամուր արձանս
ձեր ազդող : Ի՞նչ սեր առիք օրէնս , և զմիմեանց
վերս այնու բժշկէք , յատելութեն զայն փոխանա-
կեմ , և իսպառ կործանեմ : Կայաղաղութեն առիք
պատուհիրան , և 'ի մի մարմին զօդեցայք . 'ի թըշ-
նամութեն զայն դարձուցանեմ , և զմիութեամբ 'ի
բազում հերձեմ :

Տե՛ս զամենաչարն , թէ զի՞նչ ասեր անղեղջ մա-
խանօքն . գործի ասէ այսմ մարտիս , և անհնար ,
ո՛չ յիմանցս ասուն զոր իմասանացայք ճանաչել՝ պատ-
ուաս-

բաստեմ. ոչ զմեզ զոր ապաշխարութիւն ընդէք, և ոչ զատելութիւնն զոր սիրով նուաճէք, ոչ ըզ-տարապարհակ վարեն, զոր յօժարընթաց լինել-լոյն կոխեցիք, և ոչ զնախատելն կամ զապանա-նելն, զոր յուսով խոստմանցն արհամարհեցիք։ Ա.յլ զի՞նչ. ամենեցուն ձեր աչք 'ի յոյսն և 'ի գլուխն ձեր քո հայի. ինձ չի՞ք այլ հնար զձեզ քակտելոյ, բայց թէ՝ այլևայլ զառ նա հայելն ուսուցիս առնել։ Ա.ռ որպէս զուղիղ բանն այ՝ նախահօրն ձեր թիւք մեկնեալ՝ գթեցուցի, այս-պէս կարելի է և այժմ զբառս գրոց ումանց 'ի ձէնջ այլև այլ ցուցանել, և նոքօք զամենեսեան խուսվեցուցանել. թերևս կարացիս զմիջնորդն խա-զաղութիւն, խաւարեցուցանելով զմիտս ձեր, ատե-լութիւն տալ պատճառ տեսանել։ Որ՝ թէ կարա-ցիս զկենաց ծառն, որպէս նախահօրն ձեր, և ձեզ մոլորութիւն մտաց՝ չարի գիտութիւն ուսուցա-նել։ Ա.ղդարև այս է ինձ հաճոյական մեղք. հակառակութիւնն, առ որ ոչ զղջումն տեղի գտա-նէ. ամբարտաւանութիւնն է ինձ խաւար ըղձալի, զոր ոչ լոյս գիտութիւնն փոխանակէ։

Ո՞ այս ոչ միայն խորհեցաւ երեքարք, այլև ա-քար. ոչ միայն ելամեցաւ՝ այլև կատարեաց։ Ա.ր-ձակեաց զումբաքարսն, և զտաճարն քոի խախ-տեաց. բարեաց զաղերն, և զընտիրսն վիրաւո-րեաց։ Որ՝ աղէտիցս, 'ի տանէն զչարսն բուսու-ցաներ, և զվերակացուս խորանին քակտիչս և քայ-քայիչս առաղբեր. զմատակարարսն 'ի տապալելն կցորդ իւր ընդուներ. և զՀոգիւնն հօտիցն օձ-տողս զիներ։ Ո՞ մակեդոն հոգւոյն պարգևաց թըշ-նամի յարուցաներ, և ածութիւն նորին զժխտելն խրատեր։ Ո՞ նեստոր, միածնին փառաց, և ան-ճառ խորհրդոյ տնօրէնութիւնն զլացող լինել յոր-

գորեր։ Օ Լուիքէս, զնաւար խաւարաւ բժշկել վարդապետեր, և զներմարդութիւն ունայն ցուցանել յորդորեր։ Լ.ու ապա զինչ, ողբոց է այսուհետև Հաւ՝ բանիս պատմութի, զի տապալեր այնուհետև զմիութի եկեղեցւոյ 'ի մասունս բաղումս։ Պակեր տաՀարն ՝ այ, զոր շինեաց Հշմարիտն սողոմն 'ի ձեռն իմաստուն Հարտարապետացն. եղծաներ գործ երջանիկն առաքելոց։ Լ.ուրբուցաներ մեզ բաժակ բարկութենն ՝ այ աներևոյթն նաբուգոդոնոսոր մինչև իսպառ, 'ի գերութիւն վարեր զքարինս տաՀարին ՝ այ 'ի խառնակութե և 'ի հակառակութեն բաբելոն։ Լ.ու ոչ միայն զքարինսն, այլև զսպաս սրբութե տաՀարին յափշտակեալ տարաւ 'ի տուն իւր յերկիրն սինաիր։ Մի կարծէք վայրապար զառացեալս, այլ հայեցարուք յընթացս մեր հոգևոր՝ ըստ նոցա մարմնոցն յարայուցի։ Ղունին զսպասն մեր մանկունքն բաբելոնի, և հարձքն նաբուգոդոնոսորայ աներևութի։ Օ բաժակ սիրոյն, որով մեքն պաշտեաք միմեանց՝ թերևս ոչ տեսանէք այժմ 'ի ձեռս նոցա։ Օ խնկանոցն ոսկի, այսինքն զաղօթսն ասեմ փոյթ, միթե ոչ առին նոքա և ունին։ Օ արդարութիւն իրաւանց և դատաստանի, որով զարդարեր տաՀարս ՝ այ, տեսէք՝ և տեսեալ էք, զի որդիք օտարացն առին 'ի մէնջ և ունին։ Լ.ինոքիկ մեր էր երբեմն Եզբարք սեպհական, այնոքիկ՝ մինչև էաք խռովութեն գերեալք, մերոյ տաՀարիս էին զործիք պաշտաման. զայս ապաս մերն Հարք եռուն մեզ 'ի պատիճ սրբութեցն։ Լ.ոքա ուսան 'ի քեռ զՀիզութի, և մեզ աւանդեցին. նոքա առին 'ի նմանէ զնոր օրէնս սիրոյ բաժակին, և մեզ ընձեռեցին։ Լ.ղօթք և նորայն բանական պտուղ՝ մեր էր, զոր այժմ տեսանեմք 'ի ձեռս անիմաստիցն։

տիցն։ Ի՛ դարուն եկեղեցւոյ քրիստոնէից էր հաց։ որով նոքա լցեալ են, և մեք սովամահ մեռանիմք։

Ի՛ յսպէս զմի տաճարս իմանալի, իմանալին թշնամի կործանեաց ի՛ յարացուցի դգալոյն, և զըսպաս սորա գերեաց, բայց 'ի տապանակէն ՝այ՝ 'ի հաւատոյն ասեմ։ և բայց յաճային հրոյն, 'ի սրբութէն ասեմ, զորս թագոյց իմաստութէն ՝այ 'ի ջրհորս խորս գրոց սրբոց վարդապետութէն։ ՝աճեղէնս ինն գոլով և հրեշտակականս, զորս ո՛չ գտաւ թշնամին արժանի պիղծ ձեռօքն շօշափել, այս միայն թագեաւ 'ի նոցանէ վերնականն խնամօք։ Ի՛ սպա թէ ոչ տաճարն այսինքն միութիւն ազգաց քրիստոնէից, և խաղաղութէն որ առ ի՛ բերաս՝ տապալեցաւ 'ի թշնամեացն արուհեստից, և շինեալքս 'ի վերայ միոյ հիմանն կործանեցաք, միայն անձանց գոլ զհին քն, և ո՛չ եղբարցն, ուստի և քակտեցաւ յառ միմեանս մարտէն անեղեւոյթ թշնամոյն ներգործութէ, պարիսպք դըստեր սիոնի խախտեցան, և ո՛չ դադարեցին։ միոյ տաճարին քարինք 'ի զանազան աղգաց, առ իւրաքանչիւր յօդ անտաշ դարձան, և զփառս տանն կործանեցին։ Ի՛ աշեցան 'ի սրոյ բարկութէն, և 'ի սովոյ տգիտութէ։ և առ գետս բաբելացւոց տվեալ նստէաք, արդարև 'ի լաց և 'ի յողբս նոցա, որք զհայրենին աշխարհի պայծառութի՛ ըզմտաւ ածէին։ Ի՛ սկ անմոիցն և երկրաքարշիցն, որպէս եգիպտոս նախ՝ նոյնպէս և այժմ բաբելոն եղև ըղձալի։ նոքա որք խստութէ՛ սրտի, որպէս խստորով ցանգան զիմանալին իւրեանց մարդ՝ սրնուցանել։ Ի՛ յլ իմաստունք լացին և լային և լան միշտ կենդանի բանիւքն իւրեանց, և զայս թշնամութիւս աշխարեն, որպէս քարինք տանն ՝այ

ՅԸՐ-

ցրուՀեալեն որպէս աղբ զՀանապարՀաւ , 'ի ցեղ
ընտրութեանէ , և 'ի միմեանց դարձեալ յարՀամար-
Հութիւն . տեսին զի զանպտղութիւնէ կախեցան այ-
նուՀետև՝ մերն կոտակարանք ։ Վասնզի թէպէտ և
ունէաք 'ի գերութենն ընդ մեզ զօրէնս այ մերոյ
իւրաքանչիւրոք , սակայն դանդաղէաք զ'ի նմա-
նէ յանձինս մեր արկեալ զսերմանիսն բուսուցա-
նել ։ Օ՛ի զնարդ կարելի՝ ոչ ունելով զտաՀարն
այ , զնաղաղութիւնն ասեմ , զերդ ՀՀն երգել ։ Սա-
կայն ծանիք , զի այս յետ գերութեանն եղև , և
քակելոյ թշնամւոյն զտաՀար խաղաղութեանէ մերոյ ։
Վասն թէ ոչ՝ պատուղն , որ նախ քան զայս 'ի
միաշնչութեանէ անդ , և մինչդեռ 'ի տաՀարին խա-
ղաղութեանէ էաք տայր ՀամՀ՝ ձեզ թողութիւն իմաս-
տասիրել , քան թէ բանիւ զանՀառն ՀառՀել . զի
մի յոլովութիւն ՀառՀս նախընթացութեանէ 'ի ստորև
մնասցուք խորՀրդոյս զօրութեանէ ։

Յերիս բաժանեալ Ճ , այսինքն , ասիա , բոպիա , և
լիբիա , յորժամ 'ի վերայ միոյ վիմի Հաւատոյ խա-
ղաղութիւն էին պնդեալ , զիարդ ոչ է ամենն յայտնի ,
թէ անտանելի պտղախայծութիւն առաքինութեանն ա-
ռատանային ։ Յեգիպտոս քաղաք սեղեկ , ըստ կան
խաղուշակ մարգարէութենէն էր այ յայնժամ , և
հռոմայեցոցն Հրուն իբրև զդաւազան երկաթի ,
նեցուկ պնդութեանէ և ամրութեանէ Հանուրցս լինէր ։
Վասքայիայ , ելլադայ , մակեդոնիայ , թեսաղոնիկայ
առ ասիեաւ , առաքելովքն վարժեալք , 'ի պողո-
սէ առոգեալք , և արմատացեալք , և զնորա սեր-
մանան շնորՀիւն այ աճեցուցանէին ։ Վանաւանդ
տայր և Հայաստանեայցս Ճ , մինչ դեռ 'ի միութեանէ
եկեղեցւոյ վէմն պնդեալ էր՝ պտուղ այ առատ և
բազում . և յերկիր մեր իբրև զաստեղս երկնից
բազմացան սեղանքն այ լաւ տեսլեան սրբոյն գրի-

գորի. Հօտքն լուսակիզն, արօտքն դալարի, հո-
վիւքն արթունք, և սուլիչքն քաղցրալուրք. զի եւ
հիւսսի խստութեն, և ինչեայ հարաւ սիրոյ հոգ-
ւոյն քնի։ Այլ յորժամ միութի տիեզերից պա-
ռակտեցաւ, պատահումն որպէս. յորժամ 'ի վե-
րոյ զանազան վիմի կարծեցաք զհաւատս մեր շի-
նել, և ընդ միմեանս սկսաք մարտնչել, կործա-
նումն որքան։ Յորժամ մարմինն քնի քակտեցաւ
'ի միմեանց, վերն անտանելի. յորժամ անդամքն
միմեանց թշնամիք դարձան, վիրաւորեալքն ան-
չափ. յորժամ զմիջնորդն խաղաղութե զնոր մեր
յո՛ քո՛ թշնամութե առաք նիւթ, պտուղ նորին՝
փոխանակ սիրոյն ատելութենն։ Յորժամ փոխա-
նակ յերկնից մեզ բերեալ նոր օրինաց վարդապե-
տին՝ զաշխարհակալիս առաք զօրէնսն, վատթա-
րացեալք բթեցաք յամենայն առաքինութեց։ Ինչ
թուի այնքան զօրեալք, մինչ զօրհնուի ոն գեր-
չացն չերգել. այսինքն զհաւատս և զխոստովա-
նուիս, զոր 'ի գերեալսն իւրաքանչիւրքն ամբողջ
պահեցին։ Այս թե ոչ՝ թշուառութիք բազումք
փոխանակեցին զբարօրուի մեր. և ոչ միայն ըստ
նելքին, այլև ՚ի արտաքին կրից այնուհետև վը-
տանգեցաւ ազգք քրիստոնէից։ Այնչի զոր ըստ
նախայօժար կամաց ատեցաք զհոգևորն խաղա-
ղուի, զրկեաց ՚ն՚ և 'ի մարմնով զնոյն ունելոյն։
Օ՛ի այս է սովորուի նորա. յորժամ հոգւով կոր-
ծանիմք զբօսեալ, անտես առնէ և զմարմնոց վը-
դումնս. էր վասն, զի թերևս 'ի խթելոյ մարմ-
նական նեղուեցն զարթուցեալք՝ ընդ թմբրութի
հոգւոց զղջացուք։ Օ՛որ օրինակ է տեսանել՝ բա-
զում անգամ իէլի եղեալ. ըստ որում և նախաս-
գիծ յարացուցիչդ պատուհասեցան։ Այլ անխայ-
եալ ՚ն՚ 'ի տաճարն, և ոչ 'ի ժողովուրդն. այլ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՍԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Ս. ՄԱՐՏԻՐՈՍԱՆՑ
ՄԱՏԵՆԱՐԱՆ
ԱՐԱՐԱՏ
ՄԱՍԻՍ
ՄՈՒՍԱՆԱՆ ՄԱՍ
ՄԱՍԻՍ

մատնեաց զնոսա 'ի բաբելոն 'ի ծառայութիւն. մինչև զարթուցեալ պատուհասիւ մարմնոյն, անձամբ զանձինս 'ի ծառայութիւն մեղացն զերծուցին. և փրկեալք այնուհետև ոչ 'ի մարմնոյ վտանգից, զառաջինն ժառանգեցին հայրենիս։ Այսպէս տեսանի և մերս յայտնապէս ճշմարիտ քննողաց. և որք ընդ ամենայն տիպ ապացուցի նոցա ճանապարհ արարաք, հարկաւորապէս և ընդ այս շաւիղ հոլովեցաք։ Լատի և յետ կամաք մեր գերեալս 'ի հակառակութենն խորհուրդատ՝ գերեցաք անագան ուրեմն և ըստ մարմնոյ. զի զայրացաւ վերն, և ոչ կամեցաւ բժշկել քաղցրութիւն։ Յոտից ասէ մինչև ցգլուխս չիք առողջութիւն. վասն այնորիկ երկիր ձեր աւերակ, քաղաք ձեր հրձիգք. զաշխարհն ձեր առաջի ձեր օտարք կերիցեն, որպէս զի ակամայ առողջասցիք։

Եւ զինչ էր յանցանքն այսքան սաստիկ պատուհասիս արժանի. յայտ է անաչառ մտաց իմաստնոյ. զի ոչ էր մեղք ըստ մարմնոյ՝ որ ներելի էր տկարութեն, այլ ըստ հոգւոյ՝ որ տկարանայ առնուլ ապաշաւանաց ժամանակ, զոր սակաւուք թուէել ոչ է անպատշաճ։ Այսինքն՝ զի դարձաք միմեանց թշնամիք, ոչ ըստ մարմնոյ՝ այլ ըստ հոգւոյ։ Տեսցաք զիրեարս, ոչ վասն առ միմեանս դրժելոյն, այլ վասն զոհ կարծել սիրելոյ, շրջեցաք զառիթ խաղաղութենն զքո՝ հակառակութեամբ մերոյ պատճառ։ Անուցաք աշակերտք նորա, ոչ զմիմեանս սիրելովն, այլ ատելութեամբն։ Դադաք հիմն իմաստից մեր՝ ոչ զհաշտութենն հօր պատարագ, այլ զնախանձն որ 'ի կայենէ սերմանեալ։ Դարձաք հոգեկիրքս 'ի լինելոյ հոգևորս, և ախտացեալք ըստ մարմնոյ գտաք ինչաւորս։ Քաղաքս որոյ և զօրէնս կենաց լքեալ որ 'ի հոգւոյն, հպատա-

տակեմք օրինաց մարմնոյ փոխանակ նորա։ Եւ զիարդ ոչ այսպէս. զի ամենեքեան ասէ պօղոս, եթէ հրեայք և եթէ հեթանոսք, մի հոգի արքաք. և 'ի մի հոգևոր էութի փոխեցաք, և 'ի մի գլուխն զանազան անդամք, և 'ի մի մարմին պատկանեցաք։ Իսկ մեք այժմ՝ աղգս մարմնով բաժանեալք՝ և հոգւով միացեալք ս, հակառակ սահմանի և օրինացն առաքելոյ ընթացաք։ Պահեմք զընտանուն մարմնոյ և զգուութ առ իրեարս. և 'ի կցորդութենէ հոգւոց հրաժարեմք. 'ի ձաշս մարմնոյ և յըմպելիս հաղորդիմք միմեանց, և 'ի քսի սեղանոյն խորշիմք։ 'Ի տունս բարեկամաց սիրով ընթանամք այլասեռքս քրիստոնեայք, և 'ի տունս այ ժողովարանս այլևայլ աղգաց մի քրիստոնէից դժուարաւ։ 'Ի հաւատս բանից և 'ի պատմութիւնս խօսից՝ հաւատարիմք իրերաց, և 'ի հաւատն որ առ ած, միմեանց անհաւանք։ Մի քրիստոնեայք անուանիմք, և 'ի մի շաւղաց վերայ հետևիմք, և յիրերաց ճանապարհակցութէ խելագարեալ զարհուրիմք։ Օ որոց տեսեալ այ զանմտութիւնս մեր՝ լիք եթող զմեզ 'ի խնամելոյ ըստ մարմնոյ, որպէս և երբեմն զդուստրն սիոնի, մնասուանդ թէ ևս առաւել։ Օ ի որում շատ տուաւ, շատ ասէ խընդրեսցի 'ի նմանէ. և որ մեծամեծաց շնորհացն յանցեաւ, և մեծամեծ գանիւք պատժեցաւ. զի ոչ երբէք զրկէ ողորմութի զարդարութինն այ, յորժամ ոչ ունիցի նիւթ զղջումն մարդոյ։ Եւ զարդ քանզի մեղաք օրինաց սիրոյն, և յանցեաք ընդ խաղաղութենն պատուէր՝ և ոչ զղջացաք, յաղթեցաւ ողորմութինն յարդարութենէն, և եբարձ 'ի խռովելոցս հոգւով իրաւունքն՝ և զմարմնոց խաղաղուն։ Եւ զի այս այսպէս է, ահաւասիկ առձեռն պատրաստ տեսանեմք զգործն բանիցս վկայ։

Մերևս ոչ դարձաւ դրախտն ՝ի յառաջինն իւր բնութիւն՝ եղեալ հնոց երկաթի. ոչ նկուն եղեալ պարտեցաւ բաղում անգամ անպարտելի զօրութենն հռոմոց։ Այլ զՀայաստանեայս դիպուածք՝ յետ այսորիկ ՝ի ձերդ ապաստան առնեմք բնութիւն, թէ ուր պարտ էր մեզ զայս հանդէս գումարել, և յորում վայրի վաստակեցաք, միայն ածել զմտաւ։ Եւ այս էր վասն եղբարք, ազաչեմ անաչառ կամաք գիտեցէք. զի քակտեցաք զմի մարմինն քրիստի ՝ի բաղում մարմինս. զի բաժանեցաք զմի եկեղեցի նորա՝ ՝ի բաղում մասունս. զի քրիստոնեայք ոչ պօղոսեան կամ կեփայեան անուամբքն պանծամք, այլ և՛ վատթարացն և գազանաբարոյիցն։ Մոռեալ զանունն քրիստի, Հայկինն և արամայ, հռոմոց և եղլենացւոց անուամբքն մեծամանեմք ՝ի վերայ իրերայ. և առ կշտամբանան պօղոսի ընդդէմ մեր, առ այս հեղգալուր լինիմք։ Ով անմիտք ասէ, Հայկն ՝ի խաչ եղեալ է վասն ձեր, կամ յարամայ անուն մկրտեցարուք. ապա թէ ոչ՝ զիարդ երկրորդ համարեալ զանունն քրիստի, որ ՝ի վերայ ձեր մեռաւ, նախնեաքն հեթանոսաքն պարծիք։ Մերևս ոչ է այսպէս. քանզի յորժամ հարցմանն պատասխանեմք իրերայ՝ զդաւանութիւն անուան յուսոյն մերոյ քրիստի ՝ի վերայ մեր, ոչ բաւականանայ այնու լսողն չինել, այլ կարօտիմք ըստ հեթանոսական անուանանն ՝ի վերայ յաւելուլ։

Օ մեղս առ ՝ի մահ մեղաք անապաշաւս թշնամութիւնք. զի ժխտեցաք պատուիրանին որ աւանդէ մեզ՝ թողլոմն զթողուն գտանել. զի ոչ զմի հոգի սէր, այլ բովանդակ ազգ՝ զազգք, և եկեղեցի՝ զեկեղեցի, և օրէնք՝ զօրէնս նախատեն։ Յանցանք՝ որում չիք ներումն թողութիւն, ասայ անսուտն բերան. այն զի անշեղջ է ՝ի չարիսն։

Օ՛

Օ՛ի թողաք զսէրն՝ որ է գլուխ պատուհիրանին և աղաւեր քարեաց, և բուռն հարաք զթշնամութենէն՝ դատակ եղեալ ամենայն չարեաց։ Այս ա՛հա զի սէր ոչ նախանձի, ատելութիւն օրինաց վարժեալքս նախանձեցաք։ Սէրն ոչ գրգռի, մեք զօրհանապաղ երկնեցաք, և երկնեմք առ միմեանս զչարութիւն։ Սէր ոչ նախանձի, մեք նախանձելով յաչաղեմք զորս առ միմեանս ուղղութիւն։ Սէր ոչ խնդրէ զիւրն, իսկ մեք ոչ թէ միայն խնդրեմք, այլ անիրաւութիւն զընկենումք զիրաւունս իրերաց, և զմերն կացուցանեմք՝ վերջացեալք 'ի խաղաղութենէ։ Ո՛չ ջանամք զյանցանս միմեանց բժշկել, այլ վերս 'ի վերայ վերաց կուտել, և իւրաքանչիւրոցս յաղթող և արդար երևել։ Այս է խոտորնակ ճանապարհ և մոլար, ըստ որ այսօր հեաւիմք, և զգործով ածատեցութիւն՝ պիտակ քանիւ ածիրութի առդնեմք։ զՀնշմարտութիւն մարանչելս ընդ քո, ստայոդ խօսիւք՝ խաղաղութի առ նա համարիմք։ Այս է մուրրումն չարաչար, որ ընդ զղջումն պատերազմի։ և ամբարտաւանութի կործանող՝ որ հեզութի զրկողացս թուի։ Այս է խաւար տգիտութե աղջամուղջ՝ որ լոյս 'ի մէնջ մեծարի։ և մեռելութի անկենդան, որ զկենդանութի խնդրել հրաժարէ։ Յայսմանէ եկն մեզ լոյսն քո, և լուսաւորեաց։ և յայսպիսի մահուանէս կեանքն, և կենդանացոյց։ քանզի կենդանացոյց յառանց զղջանալոյ 'ի մեղսն վարակելոյ, և լուսաւորեաց ճառագայթիւք սէր պատուհիրանին, որում մեղաք մեք և հարքն մեր, անօրինեցաք և յանցեաք։ և խոստովանիմք արդարութե և յիրաւի ածեալ զայսոսիկ այ 'ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Օ՛ի ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպէս և պատուհիրան ընկալաք։ վասն այսորիկ և մատնեաց զմատնողս

զանձինս անարեւոյթ նեղչաց՝ մարմնով, տերանց խստասրտաց, ոչ ամն եւթանասներորդ. այլ մանաւանդ հարիւրեակս եւթներորդ. յորս տառապեցաւ 'ի բաբելոն խառնակութիւն և թշնամութիւն գերեալ եկեղեցի քոյ։ Զ.նդր՝ ուր ծերքն դատաւորք ոչ զարդար դատաստանն, այլ զանօրէնութիւն բղխէին։ քանզի և զայս գտանեմք եղեալ առ մեզ ըստ մարգարէութեանն. և եւ անօրէնութիւն 'ի բաբելոն 'ի ծերոցն դատաւորաց։ Զ.ս զի ևս յայտնեցից զբանս՝ բուռն հարեալ զանաչառութիւն գաւազանեն, ոչ տեսանեք զիւրաքանչիւր ազգի առաջնորդս և դատաւորս՝ գլուխս և կանոնս հաստատեալ, ոչ խաղաղութիւն այլ թշնամութիւն. և օրէնք՝ զի՞նչ, բարեացն որ առ միմեանս ներհակս, և միոյ հատարակաց Ճշմարիտ հաւատոյ ընդդիմաբանս։ Ջ.ան՝ ոչ այլինչ 'ի բանսն, քան զմի եկեղեցի քոյ 'ի միմեանց պառակտել. և որ սրգեամբք հերձուածող լինի, պիտակ զանունն նախատանաք 'ի վերայ եղբօրն առնու։ Զ.վ ծեր և դատաւոր, եթէ չար է հերձել զքոյ անդամն, և վասն այսորիկ եղբայրն 'ի քէն նախատի, դու ընդդէմ դուն գործեալ առ 'ի նոյնդ ջանաս տաւիցդ գրութիւն. թերևս ո՞չ ուսար, թէ մի՛ յաղթիր 'ի չարէն, այլ յաղթեա՛ բարեաւն չարին. թերևս ո՞չ լուար, մի՛ լինել բանակռիւ յոչինչ պէտս և 'ի կործանումն լսողացն։ Օ.սրտնութիւդ գարձուցեալ 'ի սատանայէ՝ ընդդէմ եղբօրն կագիս. և զայս ոչ բանիւ լոկով, այլ արձանագրութիւն. և հիմն ունիս քեզ ոչ զսերն որ 'ի քեզ, այլ զմախանսն որ 'ի բանսարկուէն։ Զ.չ երկնչիս՝ դուցէ և քեզ տացէ վայ նոքն, որ վակես զիականս խաղաղուն. դու ոչ մտանես, և զորս մտանեն, ընդդէմ կացեալ արգելուս։ Զ.ովիս, և 'ի քեզ

զգո-

զգուլութեան բանդ սահմանեա. և թերևս ա-
ռատանաս յաղդ քո և 'ի ցեղ. և զայլ ամենայն
տիեզերս բռնադատես բաժանել 'ի քնե, և ծանր
թուի քեզ լուր նոցա բարեպաշտութենն։ Նա-
խատեցն քրքրիս. և զբարիոք լուրն ոչ կարես տա-
նել։ այդպէս ուսար 'ի տնէն քումմէ. այդպէս
վարդապետեաց որ ասացն. եթէ սիրէք զսիրելիս
ձեր, որ շնորհ է ձեր. զի և մաքսաւորք զնոյն
գործեն։ Այլ դու մանաւանդ և զսիրելին ատես,
թէ ընդէր յայլմէ ազգէ և ոչ յիմմէ ես. այ մե-
զադրեա որ բաժանեաց զլեզուս։ Պիտի թշուառու-
թեամբ. որ բան կարէ զայսր կեղծ չարի ընդար-
ձակութի պարունակել։ Ապատինք եղաք քոնի
քրիստոնեայքս, և ամենի նոր առաջի հօր և հրեշ-
տակաց սրբոց. զի թէ ասծ փառաւորեալ է 'ի
խորհուրդս սրբոց իւրոց, որպէս և է, ապա և նա-
խատեալ է 'ի չարութի մտաց մերոց, և հայհոյ-
եալ է անուն նորա 'ի մէջ այսոցն չարաց։
Եւ արդ զի՞նչ. խսպառ մնացաք 'ի նոյնն, և մինչև
ցյաւիտեան անտեսս եղեաք 'ի տնէ. և դեռ ևս
ոխս պահէ մեզ բարձրեալն։ ոչ երբեք. եկ 'ի գլուխս
ամացն թիւ, զոր խօսեցաւ ասծ 'ի ձեռն երեմիայ
մարգարէի, ծառայուն մերոյ ժամանակ և սահ-
ման։ Գայտնեցաւ սերն քո 'ի վախճան յաւի-
տեանցս՝ յանարգութի առաջին մեղացն ատելուն։
Ատես զի ոչ կարաց ձեռն մարդոյ կատարել զ-
րութի. արար աջ տն զփրկութի անքաւ զորու-
թեն։ Լուտարանեն այսուհետև մարգարէքն ըն-
դարձ փրկուես. քանզի ոչ անձանց՝ այլ մեզ մա-
տակարարք լինէին, ասէ երջանիկն առաքելոց
պետրոս։

Խօսեաց զաքարիաս. ուսո՛ դարձելոցս վհատեալ սրբ-
տիւք՝ յոյս. ասէ։ Այսպէս ասէ տր ամենակալ,

եթէ տկարանայցէ ինչ առաջի մեացորդացս ժողովրդեանդ այդորիկ յաւուրս յայսմիկ, մինթէ և աջ իմ տկարանայցէ, ասէ Տէր ամենակալ։ Լ. յսպէս ասէ Տէր ամենակալ. ահաւասիկ ես փրկեմ զժողովուրդ իմ յերկրէ արևելից, և յերկրէ արևմտից. ածից զնոսա և բնակեցուցից 'ի մէջ Երուսաղէմի. և եղիցին ինձ ժողովուրդ, և ես եղէց նոցա Աստուած Ճշմարտութիւն և արդարութեամբ։ Լ. Եւ արդ զօրացիր դու զօրաբաբէլ ասէ Տէր. և զօրացիր յեսու յովսեդեկեայ քահանայ մեծ, և զօրացի ամենայն ժողովուրդ երկրիդ ասէ Տէր, և գործեցէք. զի ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ։ Լ. Եւ բանն զոր ուխտեցի ընդ ձեզ՝ յելանելն յերկրէն եգիպտացւոց, և հոգին իմ որ կայր 'ի միջի ձերում՝ քաջալերեցարուք. զի այսպէս ասէ Տէր ամենակալ, դարձեալ միւսանգամ շարժեցից զերկինս և զերկիր, զծով և զցամաք. և միանգամայն շարժեցից զամ ազգս. և եկեսցեն 'ի միասին 'ի փառս անուշան խմոյ, ասէ Տէր ամենակալ։

Լուսաւոր եղբարք զնախաձառ մատակարարութիւն մարդարէիս. առ ձեզ է ասացեալս, ցեղապետք նորս իսրայէլի։ Վասն տայ զքաջալերութիւս, ուստի յոի փոխան 'ի մէջ մեր՝ նորա պատուոյն քաջալերեալ. և նորոյ զօրաբաբէլի՝ որ յարևմտից յարևելս ձգեաց զընդարձակութիւն ձեռինն՝ առ 'ի շինուածն տաճարիս. և դուք համապատիւ եղբարք՝ հաւատացէք մարդարէիս, թէ ոչ յանձանց այլ յայ աստանօր գումարեալ ածայք։ Լ. զպա մի՛ զբ վարկցի զայս սիւնհոդոս մեծ՝ մարդկայինս խորհրդոյ. մի՛ զանծայինս խորհրդածութի՛ մարմնաւոր յաջողուածն, այլ բարձրացեալ աջոյ կարողին. առ որ քաջութիւն խրախուսելն արժան է

ասիյն, որպէս և հրամայեաց մարգարէն։ Զան-
զի անհնարինքն 'ի մէնջ կարծեցեալք՝ նմա դիւ-
րահնարք. և կամքն գործ կատարեալ, և իմաստն
գլխաւորեալ. ուստի և զսովորականն նորա այս
խորհուրդ տեսանեմք. նա որ 'ի վերջանալ մարդ-
կային հնարից՝ ապա զառատուն շնորհսն զեղու։
Տկարացաւ մինչև ցայսօր իմաստ մարդկեղէն ըզ-
հաստատեալն վաղուց խաւսվութի նոհաձել 'ի խա-
զաղութի. իմաստութին այ քա զօրութք կատա-
րեաց. մի՛ ոք ընդդէմ դարձցի, զի մի՛ ածամարտ
գտանիցի։ Դարձոյց ետր զգերուն սիոնի՝ 'ի խաւ-
վութն ծառայութենէ 'ի հայրենին իւր 'ի խա-
զաղութի. մի՛ ոք 'ի բաբելոն հեշտութքն փոխա-
նակ մխիթարուն 'ի սուգ փոխեսցի։ Հաս ժա-
մանակ՝ զի լցցին բերանք մեր խնդութք և լե-
զուք մեր ցնծութք. մի՛ ոք ծառայելով մախանաց
յետնեալ գտցի յուրախութենէ։ Արքարէացսն
զայս հարքն մեր երանելիք. մի՛ ոք բարբառոյ նո-
ցա ապառումն պատասխանեսցէ։ Ի՛ այպանես-
ցի մարգարէութի 'ի վտանգելոյն անհաւատութ,
մի՛ ընդ խաղ արկցի առ նոսա հոգւոյն այ աղ-
դումն. մի՛ անաչառ վարդապետութիւնն այլ ևս
լիցի աչառանօք մարդկան պատրուակեալ։ Ի՛
այլ լոյսն ընդ գրոհանաւ լիցի թագուցեալ. մի՛
կարծեսցի տկար՝ ածն զօրութեց կատարիչ խորհրդ-
դոյս։ Ա՛չ եմք անարժան քրիստոնեայքս՝ քան
զհարս մեր զհեթանոսս, որք զզեղումն նորին
պարգևայն այնչափ առատութք ընկալան։ Որ եր-
բեմն օտարացն ետ զայս շնորհ սիրոյ և խաղա-
ղութ, յիւրոցս ո՛չ արգելու, յորժամ զգաստացաք
առ 'ի գնոյնն խնդրել։ Մինչափ էր փակեալ
դուռնն, մինչ ո՛չ բախեաք. յորժամ սկսաք 'ի բա-
խել, և մտանելն է համարձակելի։

Ո՞՝ շարժեաց զայս խորհուրդ ոչ եղբարք. որ մարդ-
կեղէն իմաստութի՛ եղև սատար առաջադրեալ
ածային գործոյ։ Ա՛չ զոք ունիք ասել, բայց թէ
զածն և զոր մեր յն քո՝ զաղբերն խաղաղութե՛.
որ ետ մեզ զնոյն, և միշտ ծաղկեցուցանէ յեկե-
ղեցւոյ իւրոյ անդադրան։ Բ.ուրդարև հաւատաս-
ցուք, զի որ եհարն՝ նոյնն և բժշկեն է կարող.
որ փորձեացն՝ նոյն այսուհետև և զելն կամեցաւ
առնել. և որ կործանեացն՝ կամի զի կանգնես-
ցէ. և կանգնէ ո՞րպէս. մեզ անհասանելի է խոր
խորհրդոյն ընդարձակութի՛, այլ միայն զայժմուս
տեսանեմք առաջարկութի՛։ Լսէ թէ յո՞րքան բա-
բիս հանդերձեալ է աւարաել, տնօրէնն և ուղ-
ղիչն զչափն գիտէ։ Յուսացուք թէ որպէս 'ի խաչ-
վելն՝ զբաժակ բարկաւէն լցեալ մրրով 'ի ձեռաց
նորա արբեալ գերեցաք, այսպէս և 'ի խնդրելն
զխաղաղութիւն, զքաղցրութի՛ ողորմութե՛ ուխտ
ձաշակեմք։ Բ.այց լո՛ւր դու յեսու քահանայ մեծ,
լո՛ւր դու և ամենայն մերձաւորք քո, որ նրս-
տինդ աւադիկ ամենեքեան առաջի քո։ Բ.յսպէս
ասէ՝ որ ամենակալ. յաւուր յայնմիկ կոչեսջիք
իւրաքանչիւր զընկեր իւր ընդ որթով իւրով և ընդ
թզենեաւ։ Լսո՛ւր, զի ձեռք քո ասաց՝ որ՝ հիմն
արկցեն տանս այսմիկ, և ձեռք քո կատարես-
ցեն զսա։ Ո՞վ է այն այր կիւսահմայ և թերա-
հաւատ, որ անգոսնէ առաջի քո զաւուրս փոքրը-
կունս, և զժամանակս յետինս. և խանդայ ընդ
փրկութի՛ ժողովրդեանս՝ ոն։ Բ.հաւասիկ զարթու-
ցեալ է՝ որ յամպոց սրբոց իւրոց 'ի սրսկել 'ի վե-
րայ քո զցօղն հնորհաց, զգեցուցանել քեզ զպճնը-
նաւոր, և դնել 'ի գլուխ քո խոյր սբ, դնել ընդ
քեզ վկայութի՛։ Օ՛ն եթէ 'ի ձանապարհս իմ
գնասցես, և 'ի խաղաղութի՛ առաջնորդեսցես ժո-

ղովուրդ-

զուլրգեան խմոյ , զու զատեսցես զնոսա մինչև խ-
պառ ։ Լ՝ուարուք և դուք նահապետք ազգաց մե-
ռոց 'ի ծագաց երկրէ , որ հասեք ընդ դմա 'ի սիոն
քաղաք փրկութեան մերոյ , ահա հասեալ են ոտք
մեր առ դրունս երկնաւորն երուսաղէմի . և հան-
գերձեալ եմք շինել զիմանալի տաճարն ՅՀ , որ
հիմնեցաւ 'ի վերայ պետրոսի , և քակտեցաւ 'ի բա-
զում մասունս 'ի նաբուգոդոնոսորայ ։ Լ՝ուցուք
թէ ախորժէք , նախ զօրէնս ՅՀ 'ի ձեռս մեր և
ընթերցցուք . վայելուչ է առ 'ի նմանէ խրատուլ
զՅԾային գործոյս բուռն հարկանել . քանզի յեէմ
եմք , և ոչ թէ յերկիրն բաբելացւոց . սուրբ ան-
մարթ էր զսրբութիւնն՝ շանց առաջի արկանել .
'Ի սիոն եմք . Ճաշակեսցուք յաղբեւրացն իէլի .
զերծաք 'ի մախանացն գերուէ , ապրեցաք 'ի ծա-
ռայեցուցիչն ոխակալուէ , զիջուցաք զհպարտու-
թիւն . այսուհետև ոչ յօտարաց , այլ 'ի սիրոյն քնի
մեք գերեալ լինիմք ։ Մ՝աշեցաք զՅՀ բարձրութիւն
մոլորութիւն մտաց 'ի վերայ գիտաւէ օրինացն նր , և
քաղցեալ տեսանեմք զձեզ կենացն մանանայի .
Լ՝ուցուք զօրէնս նորա , ընթերցցուք , և նովաւ
հանդերձ 'ի շինուՀած հաւատոյ տանս բուռն հար-
ցուք ։ Ցուք ինձ հրաման գեղեցիկ յանդգնութեա ,
և օրինացն ՅՀ վրէժխնդրուք , լինել եղը 'ի մի-
ջի ձերում . ունկն դիք քաղցրութիւն , և լուՀարուք
զընթերցուՀած օրինացս ։ Յերկիրն ասէ՝ յոր մտա-
նես 'ի մէջ այլազգեացն ատարաց , այսինքն դիւացն
փորձանաց , զուստր խորհրդոց քոց մի տացես դրս-
տեր նորա . յայտ է թէ զբանն և զարութիւն՝ չար
խոհեմութիւնն և թիւր բարկութիւնն . և զդուստր
նորա մի առնուցուս ուստեր քում . այսինքն զա-
նիրաւ ցանկութիւն՝ բնաւորականիս բարւոյ առաջ-
քինուէ ։ Օ՝այս եռ ելքարք որպէս երբեմն եղը .

տեսանեմ գրեալ յօրէնս ՝ի մերոյ . ուստի և փրկչ-
կիմ արտասուօք , բուռն հարեալ զօձիս սրտի պա-
տառեմ , որպէս և նա զգեստուցն ։

Ո՞ւր գտանի ՝ի մէջ մեր՝ ո՛չ այս օրինացս դրժող .
քանզի արդարև ամենեքեան արարքք խաղա-
ղութեան ընդ դերիչս մեր . կոխեցաք զօրէնս ՝ի
մերոյ , և ամուսնացուցաք զպոռնուութեան մեր ընդ
դևն բարկուէ , և զիմաստ մեր ընդ երկրային յի
մարութիս ։ Ուստի և ծնաք ՝ի նոցանէ այս ընդ
երկար ժամանակ զոխակալուն առ եղբարս , զյա-
չաղանս բարեաց նոցա , զստելութեան առ նոսին ,
զանուանն ՝ի մերոյ հակառակութիւն ՝ի մէջ մեր
զհայհոյութեան ։ Լրդ զի՞նչ , մնասցէ՞ն կենդանի ,
կամ լիցի՞ն այլոց համանմանից հարք և սերմա-
նիչք ։ Ո՛չ եղբարք . առէ՛ք զբարուք խորհրդակցու-
թիս . զսերմն քաղդէացւոց զքարի հարցուք , և
զտղայս բաբելացւոց վիմաք փշրեսցո՛ւք ։ Սատա-
կեսցի՛ն սպանցի՛ն , որպէս զի մի՛ սերմն օտարոտի
ապականեսցէ զմերս բարետոհմուն ։ Ո՛ւ և մի՛ոք
պահեսցէ կենդանի զմախանս ՝ի նախնեացն ՝ի մեզ
սերմանեալ ։ Ա՛ի ոք առլցեալ զգիրս նոցա թշնա-
մութեա՛ն՝ ՀՀմարտութեա՛ն վարկցի ջատագով , որ ո՛չ
է ՀՀմարտութեան , այլ հակաՀառութեան . և ամե-
նայն ոք որ հակառակամարտն է , զյաղթողն լի-
նել որքան կարէ՝ ախորժէ ։ Լրկցո՛ւք զնոսա ՝ի
բոլոր քոյ , և նուազ փորձեսցուք զընտրութիւն ։
Զառ բարի ասէ՝ պտուղ բարի առնէ , և ծառն
՝ի պտղոյն Ճանաչի . և մարդ բարի զբարին բըղ-
խէ , և ո՛չ զչարն . զսերն , և ո՛չ զատելութիւնն .
զխաղաղութիւնն , և ո՛չ զթշնամութիւնն . զյաղթիչն
սիրէ՝ որով և նուաՀէ , և ո՛չ զյաղթեալն՝ որով ըզ-
մարտն գրգռէ ։ Ղանդի որպէս սիրոյն բնութիւն
է պարտիլն , և ո՛չ խնդրել զիւրն , զի մի՛ ՝ի հա-
կա-

կառակութիւնն բարեսոհմութիւնն աղաւաղեսցի ։ ընդդէմ սորա զկնն թշնամութենն միշտ 'ի մէջ զընկերն ատելութիւն՝ ներգործէ ։ Սա թէ գիտէ զանձինն ստութի , զփոյք հպարտութենն յանգուցանել խուսափէ ։ Բաղում անգամ և տկարանայ առ ճշմարտութենն ընտրութի 'ի նախանձուն խաւարէ կուրացեալ ։

Յայսմանէ յառաջ քերեն ումանք բանս , և թըշուհառական մտօք առ թշնամունն զմեզ մարդեին , որ թէպէտ 'ի գիտնոց՝ սակայն սիրոյն քաղցրութենէ տգէտ եղելոց ։ Օ ի այսչափ ասել բաւական է , և ոչ յայտնել զառականս ծնողաց , ոչ և խրատ ընկալաք ։ Բայց զայս միայն յաւելումք , թէ երկքորդին յայտնեցաւ՝ առաջինն լռեսցէ ։ և ոգիք մարգարէից , մարգարէից հնազանդին ։ Մանաւանդ զի և ոչ է խռովութիւն , այլ խաղաղութիւն , զորոյ մեք բուռն հարաք ։ Պտուղ հոգւոյն զմերս ասէ առաքեալ , որ է սէր խնդութիւն խաղաղութիւն ։ և ոչ թէ զնոցայն , որ էր հեռ նախանձ բարկութի և հակառակութի ։ Բանզի՞ ոչ է կարող ճանաչել , թէ և 'ի տղայաբարոյիցն իցէ , զայս կուրացուցիչ պտուղ նախանձու , որ գրէ մեզ զհրաժարեալն 'ի բազմութենէ աղգաց քրիստոնէից 'ի սիրոյ , և որոշել յօրինաց նոցա , յեկեղեցւոյ և 'ի միաբանութենէ , և 'ի հաղորդութենէ ։ Ով յանդգնուն օրինադրին , զի մի այլ յաւելից յաղթել 'ի թշնամանաց ։ և զի՛նչ այսքան ժպրհութեաս ունիս նիւթ , ՈՎ դու տիեզերաց բամբասող , և ոչ զչափ անձին ճանաչող , եթէ զքո՝ ՈՎ համանգամայն և մարդ դաւանեն ։ Դարձեալ և նոքա առ իւրեանցն այսու ախտիւ զգածեալք՝ 'ի մէնջ հրաժարեն , եթէ զքո՝ ՈՎ և մարդ խոստովանիմք ։ Ով թըշուհառութիւս , ո՞ չար բանասարկուին որսողի , թէ ոչ պատ-

պատրեալ զմեզ մնոտիւք 'ի ցանց ատելութեանն պաշարեաց. և 'ի միոյ քոի վերայ, միով խորհրդով՝ օրինաց նոր ներհակս զինեաց։ Դառս ինն և քընՆութիս ընդդէմ միմեանց ուսոյց բաղբաղել, և զսէրն՝ մնոտի ածխիրութիւն կոխել։ Զբաացե ըզմեզ երեմիա, կամ թէ այլոք իբրև զնա ցաւակից մարգարէ։ Մարգարէքն քո ասէ ով խորայել, տեսանէին քեզ զուր տեսիլս, և առեղծուածս մարգարէանային։ Ոչ միջնորդ խաղաղութեն զքո՝ հինն ատելուն և հակառակուն առաք, և զիարդ ոչ եմք արտասուաց արժանի։ Ոչ գլուխ անգեսան որմոյն միուն՝ բաժանման խարոց արկին 'ի մէջ մեր՝ մարգարէքն յիմարեալք. և զիարդ ոչ լացցեն զմեզ Ճշմարտութեանն աշակերտք։ Ոչ ի ոք 'ի ծագս աշխարհի եկեղեցի քի. որ ոչ զքո ածէ և մարդ դաւանէ. և թէ այս այսպէս է, ապա ընդէր այսքան հակառակուիս 'ի մէջ մեր բռնացեալ։ Որ ազգ զլացաւ զերախտիս ոն իւրոյ մարդկուէն, կամ ժխտեաց փառաց նորին և ածուէն. 'ի քրիստոնեայս անուանելոց՝ և ոչ ոք։ Դանդի ոչ եթէ լեզուօք միայն զսոյն դաւանեն, այլև զանշուն տարերս առնուն բաղկակից և ջատագով հաւատոցն. և զզանազան տնօրէնուիս ածացեալն յոի գծագրութիւն կերպարանեն, և գունովք երանգոց Ճշմարտեն։ Զգնին և աշխատին 'ի վերայ սորին յուսոյ. յիշեն զխոնարհուէն 'ի սէրոյն. և զքանչացեալ շնորհ ունին պարգևացն. նային 'ի փառս ածութիւնն. և բարձրանան յերկքէ յերկինս։ Դե այսպէս շնորհօքն ով՝ տիեզերք յուսոմն առ քո տաւաղին, ամենեցուն յուղղեն կալով պողոտայ՝ յիւրաքանչիւր ազգս և ցեղ։ Դե մի գլխոյն է անդամ, սպանիա, և արևելք, յոյնք և բարբարոսք, հայք և վիրք, ասորիք և եգիպտա-

տայիք. 'ի նա են յարեալ ամենեքեան հոգւով. և
զնա զգեցեալք հաւատովք։ Եւ զայս մասնաւո-
րապէս յայտնէ ներգործութիւն շնորհայ հոգւոյն
յիւրաքանչիւրսն արդեամբք զօրացեալ. յորոց ոմք
զանձինս տաճարս ՅԻ արարին, վայելեցին 'ի շնորհս
նՇ, պաշտպանելով ձեռին նՇ 'ի նշանս և 'ի բժշ-
կութիւնս և 'ի գործս զարմանալիս, քննողացն
յայտնի։ Եւ ոչ թէ մարդիկն, այլև անշունչ
տաճարքն, և նշանքն 'ի նոցանէ յանուն քՇ արա-
րեալքն. զորս անկար է անկատար հաւատոց կա-
տարել։ Զանզի ուր ոչ հաւատ՝ զիարդ հոգի, և
ուր ոչ հոգի՝ զիարդ զօրութիւն։

Բայց որ թշնամին է սիրոյ, և օրինադրին նորին
քՇ, քննութիւս բայից ուսոյց, զնոսա առնուլ նիւթ
հակառակութեան, զոր և ես ըՇմ անգամ քննեցի՝ ըզ-
հակաճառութիւն երկուց կողմանցս գրով և անգիր,
և գտի ոչ ընդ միմեանս, այլ ընդ հերձուածողս՝
որ ոչ են այժմ 'ի միջի, մարտուցեալս. և կեղա-
կարծութիւն առիրեարս՝ զթշնամութիւն միջնորդ 'ի մի-
ջի անմատչելի հաստատեալ, հարկանեն զօտարս,
և միմեանց 'ի վերայ համարին։ Օ որ օրինակ թէ ոք
զօդ վիրաւորելով, ընկերին կարծիցէ ազդել ըզ-
խոցուածսն. և նա որ ոչ հարկանի, ընդ վայ-
րապար հարուածն օդոյն գժուարի, և այսպիսի
անոտեօք 'ի թշնամութիւն յարուցեալ, ոձիրս մե-
ծամեծս գործեսցեն։ Այսպէս է տեսանել այս-
օր՝ զազգաց քրիստոնէից առիրեարս կիրս։ Զան-
զի մերս է հակաճառութիւն ընդդէմ այլ ազգաց 'ի
կարծիս, թէ զքՇ յերկուց բնութեաց անճառաբար
միացեալս 'ի խոստովանել, զյատկութիւն անուանց
բնութեանն՝ և զգոյութիւն որոշեն. և զէութիւնն՝
ոչ թէ միացեալ այլ բաժանեալս խոստովանին։
Եւ բովանդակն թէ դՇի ժողովն, թէ մանաւ-

կերտի, թէ որ սիւնեցւոյն թուղթ, թէ շիրակացւոյն, տարօնացւոյն, կամ թէ այլ ումեք. առ այսպիսի դաւանուի մարտնչին ընդ բաժանմամբ ածն և մարդ դաւանողն։ Լ։ այս նեստորի է կարծիք, և ոչ թէ մեծի այ եկեղեցւոյն, և տիեզերաց արքունական աթոռոյն։ Վանզի նոքա անարգիչք բաժանմանն եղեն և լինին. և տան զերկուց բնութեանցն կոչումն քնի՝ ոչ այլ ինչ խորհրդով, բայց զի ածն զնոյն և մարդ խոստովանեցին, և զի տիքէսի չար ախտն տապաստ արկեալ տապալէսցեն։ Օ մի քո յերկուց ձանաչեն բնութեանց. վասն զի ածն է և մարդ, և ոչ թէ 'ի ձանաչելն՝ զանձառ խառնումն բաժանեն։ Ա՝տաց աչօք տեսանեն, զբանն մարմին եղեալ՝ և 'ի մարմնի բնակեալ. և ոչ թէ մարմնոյ աչօք քակտելով զնոյն զննեն։ Լ։ այսմ ամ ածաշունչ գիրք, և մեք վկայեմք՝ զմին քն, ածն և մարդ դաւանել։ Լ՝ուրդ միոյ քնի՝ որում մեք ածութեի տամք, նոքա բնութեի 'ի վերայ յաւելեալ զէութեն հաստատուի յայտ առնեն. և որում մեք մարդկութեի, նոքա դարձեալ յաւելուածով բնութեն անուանեն՝ զէութեի մարդոյն ստուգեն. և զմիութեին 'ի վերայ սոցին՝ հաւասար մեզ ամբողջ հաւատան, չունելով անաչառ քննութեի՝ առ այս ինչ մեզ նիւթ հակառակութեի։ Օ ի նոյն է ածն և մարդ ասել զքն՝ և երկու բնութեի. մանաւանդ առաջինդ ոչ միայն զէութեին, այլև զսահման էութեն յայանապէս մակադրէ. իսկ երկրորդս՝ լոկ զէութեն առանց սահմանի։ Լ՝պա յայտ է, թէ որ ածն և մարդ դաւանեաց, զայլևայլ բնութեան 'ի վերայ միոյ անձինն ստուգեաց։ Իսկ չար առ այս՝ ընդ ասոյդ տեսութեն և յանձնաւորուի բաժանել, յորմէ հեռի ամենևին գտանիմք և մեք և նոքա. նեստորի գոլով

այս չարափառուն , որ նզովեալ է յեկեղեցւոյ ։ Դարձեալ հակառառեն և նոքա ընդդէմ մեր և առաւելանՁ , սակայն 'ի կարծիս մնասի վարանեալս , իբր թէ զմիուին խոստովանելով 'ի վրՁ փրկչին քՁի , ընդ նմին և զյատկութիՁն ածային և մարդկային բնութեցն շփոթեմք ։ Լաւ յետ միուեն համարեալ՝ թէ ոչ խոստովանիմք զնա ածՁ և մարդ , այլ 'ի յատուկ բնութի այ փոխեալ ասեմք զմարդոյն ։ Յորմէ ախատեչարէ չնորհՁքն այ հեռի գտան եկեղեցիք հայաստանեաց 'ի սկզբանէ և այսր . և յայտնի ամ գրուՁք հարցն մերոց՝ ածՁ և մարդ զնա գաւանեն ։ Լաւ ոչ ունայն ցուցանի առ մեզ իմաստութիՁն խորհրդոյն քՁի , որ պահեալ էր առ այ 'ի սկզբանէ . և յայտնեցաւ 'ի յետին ժամանակս 'ի փառս մեր ։ Լայլ գիտեմք ստոյգ , և հաւատամք ՁՁմարիտ , զի թէ էր ծանուցեալ զերևեանն մարմնով ածՁ՝ իշխան Ձիս , ոչ արդեօք զՁորն փառաց 'ի խաչ հանէին՝ ըՁ առաքելոյ . Լայլ լոյսն 'ի խաւարի անդ մարմնոյն , լուսաւորեր անՁառաբար ածուին . և խաւար բանսարկուն որ հալածէր զմարմինն 'ի ժամանակի անդ տնօրէնութեն՝ ոչ եղև նմա հասու նախ քան զյարութին ։ Դիտեմք ընդ ամին և զխորհրդոյս զօրուն , թէ էր եղև այս՝ 'ի յայտնութիՁ հոգւոյն այ . և համեմատեմք ընդ հոգևորս՝ զհոգևոր Ձառաս ։ Լայսինքն՝ զի մարդոՁն այ մարդն փրկեսցի . զի միոյ մարդոյն արդարութիՁ լիցի յամ մարդիկ արդարութի . որպէս միոյն յանցանօքն՝ դատապարտուն ։ Ո այս գիտեմք և գաւանեմք , և ոչ զչնորհս լինելոյ բանին մարմին՝ զանամք ։ Սակայն առնումք զմի բնութի ասել բանին մարմնացելոյ՝ անՁառ խառնմանն հաչակ՝ ըՁգէմ նեստորի . և բան ասելով՝ և մարմնացեալ , զյատկուն այլևայլ բնութիՁնցն հաստատեմք ըստ սրբոյն կիւրղի ։ Լաւ ոչ ասեմք 'ի վրՁ

բանին մարմնացելոյ զմի բնութիւնն՝ զյատկութիւն
էութեանն չփոթելով, որպէս նոքայն կարծեն. այլ
ըստ անձնաւորութեան երկուքն 'ի մի անձնաւո-
րութիւն, և յաճութիւն և մարդկութիւնն յատկութիւն։
Լաւ մի բնութիւն է քացոցութիւն 'ի վերայ նորին ըստ
միութեանն, և ոչ թէ էութեանն սահման. զի այսմ
անկար է լինել։ Լաւ ոմն և ինքն երբեմն զանձն
միայն որդի մարդոյ ասէր, երբեմն հաց յերկնից
իջեալ. երբեմն մարմին տեսեալ, և 'ի փիլիպպոսէ
ոճ ծանուցեալ։ Լաւ որդ՝ յորժամ զայս ասեմք, ոչ
թէ յորդի մարդոյ ասելն, մուռանամք գիտել զնա
որդի ոյ. կամ 'ի յերկնից խոստովանելն ոճ՝ զը-
լանամք զ'ի յերկրէ լինելն. այլ միայն զմիւսն հե-
տեւեցուցանեմք։ Լայսպէս և զայս է տեսանել. զի
ասելն մի բնութիւն բանին մարմնացելոյ՝ ըստ անձ-
նաւորութեան անձնաւորութեան է հրատարակիչ,
և ոչ թէ բնութեանն կորուստ. քացաստացութիւն ան-
ուանն, և ոչ էութեանն սահման։ Օ որ օրինակ սո-
վորութիւն է զոճ վերն մաքրութեան՝ հուր անուանել,
և վերն պարզութեան՝ լոյս. նա և քաղուստ առնումք
'ի վերոյ նոր այսպիսի անուանք։ Սակայն ոչ թէ մի ոք
'ի սոցանէ՝ զէութիւն նոր ստուգէ, որ անհասն է, այլ
միայն զներգործութիւն կամաց նոր մեզ յայտնի ցու-
ցանէ։ Լորդ՝ մեղանչեմք զանհասն հասանելի ան-
ուամբ պարագրել. ոչ երբեք. այլ յասելն զայս՝ և
այնպէս զանհասութիւն հաւատամք և գիտեմք։ Լայ-
պէս և մի բնութիւն ասացեալն 'ի վերոյ քի՝ ոչ թէ զէութիւն
նոր հաստատէ, որ յերկուքն էր անշփոթ և յայտնի,
այլ զներգործութիւն անձնաւորութեան քացաձայնէ։
Սակ յորժամ 'ի քննութիւն մտեմք սահմանել զասացեալ
անուանն 'ի վերոյ իրին, որպէս զոճ որ հուր անուանե-
ցաք, ոչ ստուգեմք հուր լինել, այլ այլ անհաս
էութիւն. սակայն վերն մաքրողական ներգործութեան՝ այսոր
կո-

կոչեցաւ։ Իստ այսմ և զքո՝ զոր մի բնութիւն ասաց-
ցաք, ոչ կարեմք 'ի քննելն այսպէս ստուգել, մա-
նաւանդ և ոչ կամիմք. այլ անձառ միութենն քա-
ղոյ՝ զայս բացաձայնեցաք։ Եւ 'ի սահմանելն գը-
տանեմք զմիացեալսն, և յետ միութենն զանշփոթ
գոյացութիւն՝ մարդկութենն և ՝ածութեանն։ Եւ
զիարդ խելագարի մարդ, և կամեսցի զայ որ առ
մարդկուիս շնորհն՝ ունայն ցուցանել, և ՝ամ՝ածա-
շունչ գրոց ընդդեմ կգրել։ Մի լիցի զայս զմտաւ
ածել, որ առ մեզս՝ այ եկեղեցւոյ։ Իյլ որպէս է
սովորութի գրոց, երբեմն ասել զնա ՝ածի միայն, և
երբեմն մարդ միայն. սակայն յաստեղն պարզ բա-
նիւ զմին՝ զորութիւն և զմիւս ը նմին 'ի ներքս փա-
կէ։ Իստ այսմ և յասել մի բնութի բանին մարմ-
նացելոյ, մի ասելով՝ զանձառ միաւորութենն ՝ընդ-
դրտէ։ Իսկ բան մարմնացեալ ասելով, զայլևայլ
բնութիսն հաստատէ։ Իհաւասիկ յայտ եղև հարք
սքՀ, թէ չիք ինչ 'ի մէջ մեր վ'ա առ քո խոստովա-
նութեան հակառակուի, որք 'ի մի շաւղաց վերայ
ընթացաք՝ և ընթանամք։

Իյլ ընդէր ասեն, ոչ ոք զայս մինչև ցայսօր յայտ-
նեաց, այլ մանաւանդ և զնորին հակառակն։
Իյ է այս քննելի. մանաւանդ թէ և բաղումք
ասացին 'ի մերոցս՝ առաջնոց սրբոցն եղեալ հե-
տևողք։ Իսակայն բարք մարդկան հակառակասէր
է. զայնս որ ՝ձմարտութեն էր ՝ջատագով և խաղա-
ղութեանն՝ անգոնեցին. և զառ թշնամութիւն
մարդիչ բանսն՝ սիրեցին և գրեցին։ Իպա թէ ոչ՝
ուր դիցուք զբանս յոհաննու իմաստասիրին և
հայրապետին, որ զայս առ մեզ՝ վկայութք հարցն
սքց ստուգէ։ Օ եղբի հայրապետին, և զնուրոյ
ժողովոյն զհաւանութենն։ Օ վահանայ հայրապե-
տին զհամաձայնութենն առ մեծ եկեղեցին հռոմոց,

և զնորին հետեւողաց Թադաւորացն և վարդապետաց ։ Յորոց մի էր և իմն ածաշնորհ՝ և յոքունց գերազանց՝ հրեշտակն 'ի մարմնի գրիգոր նարեկացի ։ Որ և զորոյ աչօք տեսէք , և բանիցն աշակերտ էք , և հիմանն արկելոյ շինիչք , զորքոյ հօրն մերոյ ներսէսի՝ զայսմ հետեւողուն ։ Որքա ամբեան զայս երկնչին զնորհուրդ՝ և ծնան , զոր դուք հանդերձեալ էք կատարել , և սովաւ զեկեղեցի այ կերակրել . և այլ բազում ընդ սորօք . որ ուսումնասիրացն է յայտնի , և աշխատելոցն առ 'ի բանից նոցին աշակերտուն . մեր հարք , և մերոյ տոհմիս նահապետք ։ Վասնզի ոչ ներէ ինձ ոմանց տկարութի՝ մերոյս արտաքոյ ելանել . ուստի և զօրացեալ շնորհօքն այ , սոքօք զասացեալս հաստատեցաք ։ Այսպս թէ էին ոմանք դարձեալ՝ որ սոցա ընդդէմ զինեցան , գիտեմ և ես զնոսա . ճանաչեմ և զբանիցն զորութի , և չեմ անտեղեակ ։ Ուստի և գտանեմ զսոսա՝ թէպէտ սուրբս և իմաստունս , սակայն ոչ 'ի սիրոյն օրէնս ճշմարտութիւն վայելողս . որք ոչ վարկանէին իւրեանց յանցանս , զմիութիւն եկեղեցւոյ քոի անտի խորհրդով քակտումն . ուստի և յանդգնաբար 'ի նոյն մխեցան ։ Որոց ներեսցէ ած աղօթիւք ձեր , ըստ մեծի այս մասին յանցանաց սխալման , և մի յիշեսցէ զանձեցուցանելն զայսր չար սխտի ճարակումն ։ Որոյ պտուղ ոչ այլ ինչ տեսանեմք , բայց միայն զանարգուն անուանն քոի ։ Որով տեսանեմք այժմ զբազումս վարժեալ , և ողբամ արտասուօք , զի յառաւել սովորութիւն բնութի լեալ է իւրեանց առ ազգս քրիստոնէից , և յեկեղեցի նոցա ատելութի . և զսխտ չար թշնամութեն հայհոյութիւն չար յաչաղանօքն յագեցուցանելով՝ քոի համարին լինել վրէժխնդիր ։ Որ թշուառութեն ։ Այս թէև առ

առ Հաւատոյ բան լեն հաւանական խոստովա-
նուի յայլ աղգաց , ոչ կամին 'ի սերն խոնարհել .
այլ բուռն հարկանեն զայլ կարծեաց , թէ նոքա
զմերս ատեն աղգ . վասն այսորիկ և 'ի մէնք ատես-
ցին . կուփեն և կեղեքեն և հայհոյեն զմեզ , յա-
ղագս այսորիկ և 'ի մէնք հայհոյեսցին :
Ա'վ մտացի դու , և ո՞ր ուսար վիրօք զվեր բժըշ-
կել : Պօղոս բամբասելոյն ընդդէմ օրհնեաց . ըզ-
հալածիչն յանձն առ . 'ի հայհոյելն աղաչեաց . և
այնպիսի մաղթանօք զտիեզերս աշակերտեաց . ըզ-
քեզ հետևող նորին՝ ո ուսոյց չարի չար հատու-
ցանել : Ա՞չ գիտես թէ զՀուրն՝ ջուր շինուցանել ,
և ոչ հուրն . զըմբոստանալն՝ խոնարհուին նուհա-
ձէ , և ոչ ընդդիմահարութինն . չարն՝ բարեաւն
յաղթի , և ոչ չարեաւն : Ա՞պա թէ դու առ այս
հեղգաս , հեզ լինել տկարանաս , սիրել վերջանաս ,
զիարդ 'ի հակառակամարտէն զնոյն պահանջես .
թերևս զնմանէ զանց արար բանսարկուն , և առ
քեզ միայն ներգործէ : Ա՞յն մարմին է՝ որում դուդ
ես վիճակեալ . և նոյն մախանացն ծառայ , որում
դուդ վարակիս . մանաւանդ թէ ըստ այսմ խոր-
հելով , ևս առաւել . զի դու 'ի նմանէ , և ոչ թէ
նա 'ի քէն հատաւ . դու զնա , և ոչ թէ նա զքեզ
անգոսնեաց 'ի սկզբանէ : Դու ձիթենի վայրենի
պատուհաստեցար յանբուն քո 'ի բարի ձիթենոյն .
զի զպտղոսին յիշատակեցից . ոչ թէ դու զնա , այլ
նա արմատ գոլով երբեմն զքեզ կրեր 'ի վեր ունե-
լով : Ա՞ռ զի այժմ ոչ եմք այպէս , տկարացաւ և
նա ստ օրէնս սիրոյն . առեալ զայսոսիկ նիւթ՝ մա-
խացաւ , առաւել զպատուհասն պարտն պահանջելով .
Ա՞ռ ոչ բարեաւն ջանացեալ զչարն յաղթահարել՝
ժխտեաց հայրենի գթոյն . և ստահակութիւն որդ-
ւոյս թշնամի ընդդէմ կքրեցաւ . և երկոքին կող-

մանքս յայսմ վիրէ վշտացաք։

Եղբ՝ մնացուք խսպառ. պտղաբերեսցուք առ յա
պա զհայհոյուէն պտուղ. թողցուք զորոմնս չարին
'ի մէջ մեր, մինչև հնձէն և յայրել պատրաստեն
հրեշտակք։ Դիտեալով զուղիղ դաւանուն, միայն
սովորութիւն սիրոյն վերջասցուք։ Մի՝ եղբարք իմ
աղաչեմ, մի՛ զայս խորհել. բարի է խոնարհելն.
մեք ջանասցուք նախ յափշտակել զշնորհն. կամիմք
զն սիրեսցուք, մեք նախ զսերն առատացուսցուք.
մերոյն լուծիցուք վարդապետին քոյ՝ որ ասէ. օրպէս
կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արա-
րէք և դուք նոցա։ Նախ դուք արարէք. և այնու
զնոցայն կամն ստատար և հաւասար ձերոյն ժառան-
դեք։ Յառաջեսցուք ապա մեք լինել աղբեւր խա-
ղաղուն. կանխեսցուք մեք զդրախտ միաբանութեն
առոգել։ Մէջ որ զբեռն ընկերին բառնայ՝ կատա-
րէ զօրէնսն քոյ. ոչ որ նախ խոնարհի, նախապա-
տիւ բարձրասցի. ոչ որ զկատարեալն ունի սեր,
ոչ խնդրէ զլուրն։ Զ հայրենեացն օրէնս պահես-
ցուք ամբողջ. մի՛ ջանասցուք լուծանել զօրէնսն
ոչ, և զմերս հաստատել զաւանդուն։ Դարձցուք
զդայթակղուն եղբարցն յանձանց. և լիցուք նոցա
բժիշկք. տացուք յանձինս կամաց նոցա տեղի, և
տիրեսցուք նոցա։ Լինի բաղում անգամ պատա-
հումն հիւանդի՝ առ 'ի յոչ ճանաչել զվէրն. եթէ
ճանաչեն՝ խոնարհեսցուք զի բժշկեսցեն. ապա թէ
անձամբ յանձինս ըստգտանիմք, ընդէր յայտնել
դժուարիմք։ Համամայր եմք որդիք, մի՛ կարծես-
ցուք հրապոյրս պղտոր մեզ արբուցանել. եղբարք
են և ոչ 'ի թշնամեաց. ծանիցուք զթշնամոյն ըզ-
բանսարկուն 'ի մէջ եղբարցս սրկեալ՝ զոխակալու-
թիւն հաստատող։ Պատուհիրան ընկալաք, արեգա-
կանն ոչ մտանել 'ի վերայ բարկութեն. յիշես-
ցուք

ցուք զորքանուն յանցուածոց օրինաց՝ և զղջաս-
ցուք։ Հրապարակեսցուք զներգործութիւն չարա-
խօսին, և խայտառակեսցուք զնա։ Օ՞իարդ թո-
ղութիւն կարող եմք խնդրել յայ, որ նախ զմեր
թողուլն ուսաք առաջի նորա ցուցանել, և առ
այս յապաղիմք։ Լու այն զի հրաման ընկալաք,
ոչ քրիստոնէից եղբարց. այլև հեթանոսաց ցու-
ցանել զայս։ Մի երբէք կացցես յարդարութեան
քում, վարդապետէ մեզ ոմն 'ի հարցն, որ ձշգրիտ
գիտէր զմեքենայս չարին. մինչև ցերբ յաջակող-
մեանն գթեմք անզղջականապէս։ Մի՞ խանդամ
նշաւակեալն վերստին խայտառակեսցի. հաղբ բաղ
մահնար վարմին 'ի լոյս եկեալ՝ մի ստուերասցի։
'Ի պատուիրանս այ մերոյ, քան զթշնամին՝ մեք
յառաջեսցուք իմաստնանալ. քան զթնամին իմ՝
աղօթեր մարդարէն, զիս արա 'ի պատուիրանս քո
իմաստուն։ Յայժ կարևոր տեսանեմ այսօր զայս
աղօթս մեզ. զի մի ածսիրութեն կարծեօք, յանծա-
ռեցուն հաղբս լիցիմք կործանեալ. բաւական լի-
ցի մինչև ցայժմ՝ ըստ պատուիրանին մնալոցուց-
ցանելն, և ընդ խաւար որպէս 'ի լոյս ընթացուցա-
նելն։ Պատապարտեսցի այսուհետև զրպարտիչն
մեր, որպէս 'ի սկզբանն. իշխան աշխարհիս դա-
տապարտեալ է եղբարք, և սերն և խաղաղութիւն
'ի փրկչէն մերմէ նորոգեալ. սերն ոչ ազգի առ
իւրն ազգ, այլ ամենեցուն քրիստոնէից լինել 'ի
քո՞ մի ազգ։ Լ.այսպէս յոգէ խաղաղութիւս, որ ըզ-
շնորհան 'ի գլխոյն յանդամն ինջուցանէ. մի գլուխ
ունիմք զքո՞, միոյ գլխոյ անդամոց զիարդ հնար է
'ի միմեանց պառակտել. վերս ունիմք, 'ի միմեանց
բժշկեսցուք. առողջութի՞ 'ի փառս իրերաց զուարա-
ճասցուք. մի անհաւատք լիցուք, առ 'ի վշտակցելն
միմեանց. մանաւանդ թէ մի և զանդամոց նախա-

պատուհուն արհամարհեցուք։ Մեք ախորժեք՝ և այսմ լինցուք անսաչառ ընտրութիւն որոշիչք. բաղդատուն աչաց զեղբարսն համեմատեցուք. ունկն գոլով մեր, մի՛ զի չեմք ակն՝ ասասցուք, եթէ չեմք 'ի մարմնոյ անտի. քանզի ոչ եթէ զներգործութիւն իրին վայրապար բանս լուծանէ։ Դ՚օքա տեսին, և մեք լուաք. զոր տեսին՝ զնոյն և մեզ ուսուցին. յառաջ եղեն 'ի քո, և ընդ նմա իշխանութիւնքն յաջողեցան։ Դ՚անզի և զայս ոչ կարծեմ ասել վայրապար. պօղոս տնկեաց զորթն, և Հոգւով նորա լցեալ հարքն՝ յիւրաքանչիւր ժամանակս զջուրն արբուցին, և ՝ած աճեցոյց։ Մ՚ի 'ի բարունակացն և մեք՝ 'ի նոյ որթոյն սաղարթ ծաղկեցաք. կարգս և օրէնս նախ անձանց հաստատեցին, և ապա մեզ առաքեցին. գրովք սրբովք նախ զինքեանս կրթեցին, և ապա զմեզ վարժեցին. նա և հնորհքն ՝այ զնոյն քաղաքաւ և աշխարհաւ անշարժ զնա պահեաց։ Մ՚րդ՝ եղբարք աղաչեմք, առ որս մեք կարծիմք ունել թերութիւն, և նոքա ջանան յուղղուն, մի՛ իբրև զանզգամս 'ի մանկանց՝ ընդդէմ պատասխանեսցուք։ Մակ յորս ըստգտանեմք զնոսա թշնամուք, և գրոց սրբոյն խորհրդակցուք՝ լինցուք սիրով վիրացն բժիշկս։ Դ՚աղումս գիտեմ փափկութիւնն գործել դանդաղութիւս որով յօրանան. դիւրաւ որսայ գուռղուշն 'ի մառացութիւն պատուհիրանին, որով պանծանան։ Մ՚իտեմ վանել արծութեն ծառայեցուցիչ, որով խրոխտանան։ Հպարտս առադրեմ գիտութիւնն. զոր մայր ունելով 'ի նոյն ապաստան եղեալ Հոխանան։ Մ՚րդ՝ կրեցն լինցուք մի՛ աղճատիչք, այլ ցաւակիցք. մի՛ էպերիչք, այլ առողջացուցիչք. մի՛ կսկծեցուցիչք, այլ դարմանիչք. մի՛ երգիծանիչ, այլ մխիթարիչ։ Դ՚անզի զայս գիտեմ անգամոց սովորութիւն, որով և մեք անուանիմք և պան-

պանծանամբ 'ի գլուխն մեր քո։ Սանարհեսցի ակն առ ունկն, և ունկն աչացն լիցի ուսուցիչ. եթէ սխալեսցն յորմէ աւանդեացն՝ վերստին ուսցի. և եթէ ամբողջ պահեաց զհայեցուածսն, զկալաքարծութիւնն հաստատեսցէ։ Մի դանդաղեսցուք՝ մանդ և փութասցուք բժշկել և բժշկիլ։ Որ քո ամբառնայ հնարն բժշկուէն. նորա գոլով մարմին երկուցս կողմանց, զքո բժշկել մի դժուարեսցուք։ Եթէ մեզ և եթէ նոցա լիցի առողջութի, փրկչին մերոյ է անուանն սրբութի, ըստորում և հիւանդութեան հայհոյութի։ Զի մեծ հնարի խաղաղաբարացդ. այ տիրապետ որդիուն. երանի՛ ասէ խաղաղարարաց, զի նոքա որդիք այ կոչեսցին։ Զոնա՛յք զնոն անսուտ ձեզ խոստմունս. խրախուսեցէ՛ք առայս բարբառոյ յոյս՝ փողք տիեզերաց. ելէ՛ք 'ի վերս աւետարանական բարձր լերինն՝ աւետարանիչքդ սիոնի. բարձրացուցէ՛ք, մի՛ անխայեք զբարբառս ձեր՝ աւետարանիչքդ երուսաղէմ. բարձրացուցէ՛ք, մի՛ երկնչիք յաւանդութենցն երկեղէ։ Խաղաղութենէ՛ք աւետարանիչք, ընդէր ամաչէք. քո՛ի բերէք զնմանութենն և զվկայութիւն, մի՛ պատկառէք. պողոս զայս ձեզ հրամայէ. ո՞վ տիմոթեէ՝ մի՛ ամօթ համարիր զվկայութի տուն յեր։ Զու զինչ այլ քո՛ի ճշմարիտ վկայութի, քան եկեղեցւոյ նորա լինել յօդ միաբանութե. զինչ այլ մեծ առաքինութի, քան նմանել քո՛ի, և զխաղաղութենն՝ զոր նա արեամբ հաստատեաց, բերանոց բարբառով վերստին ուղղել։ Զչակերտք առաքելոցն՝ առաքելական հետոցն զկնի փութացէ՛ք. 'ի բաց փախեսցուք 'ի սրտից մերոց զչար դանձն՝ որ բաղխեաց մեզ զանազան չարչարանս. և ո՞յք են նոքա. ո՞վ կարէ թուել։ Զստի սկսաք լինել առանց թագաւորի և իշխանութե. յայսմհետէ եղաք ստրուկք հեթա-

թանասաց տէրութենն. կարդ մեր 'ի բաց հատեալ հաղբիւք չարին յարմատոյն, սկսաւ սին սաղարթիւքն լինել. ժողովուրդք անիմաստք՝ և առաջնորդք տգէտք, և մանկունք իշխանք՝ գողակիցք գողոց, և եկեղեցիք սպանդոկք և մաքսատունք օտարաց, և այլ բազմ՝ զորս դժուարի բանս թուել, և ընդ անձին ոգորել։ Սակայն առաջի բժշկացդ է վերացս խայտառակելն. ոչ թէ վայրապար մերկանամ զվերս, այլ որպէս զի հնարիւք ձեր առողջ 'ի նմանէ լինիցիմ։ Որ թշուառուեաս. այնքան յաչադանքն գրաւեալ զառաջնորդական զմիտս, ոչ զի զայսքան իմ զվերս թողեալ առանց ջանի բժշկութեան, զայլս անդուռն բերանով նախատեմ. մոռացեալ զոն երգիծանել զայնոսիկ՝ որք դերանովք ջանացին զշիջս դատել։ Որ չարաչար կուրութեաս տյսմիկ, զոր տգէտքն և անիմաստքն՝ բուռն և կատարեալ տեսուն առգնեն. և զչարն ոչ բարի ողջունեն, և զթիւրն ոչ զուղիղ։

Այս զինչ է այս. մտադիրութեամբ լուարուք, և յայտնեցից ձեզ զծածուկ ախտս՝ որով տառապի եկեղեցի քրիստոնէից։ Հայ արար ոճ առ 'ի կերակուր մարմնոյ, և գինի առ 'ի յարբուցն նորին. զայն հայն և զգինին՝ առ քո յոյսն մեր՝ օրհնեաց և սրբեաց, և իւք մարմին և արիւն անուանեաց, և մեզ փրկութեան յիշատակ աւանդեաց։ Այդ՝ սովորութիւն ունիմք զսոյն հայ միշտ 'ի փառս և 'ի յիշատակ քոյ օրհնել. և մի օրհնութիւն է, և մի անուն քոյ, զոր իւրաքանչիւր ազգս՝ զանազան լեզուօք 'ի վերայ նորին անուանեմք։ Այս 'ի ներս անկեալ թշնամութիս, զնոյն հայն մինչև եմք օրհնեալ անուամբն քոյ, առնումք յիւրերաց, և ուտեմք համարձակ։ Այսպէս յորժամ զքոյ անունն 'ի վերայ յիշատակեմք, և նորա մարմին

մին զնոյն կատարեմք՝ միալ օրհնութիւն. հայն 'ի հռոմին խորշի հաղորդել յօրհնեալ պատարագն, և հռոմն 'ի հայոյն։ Այլ զհայ՝ զոր մի աղօթիւք միով օրհնութիւն, մի քիչ անուշամբ անուշանեմք, միոյ հոգւոյ շնորհիւ իւրաքանչիւրքս կատարեցաք, յետ այնորիկ անգոնեմք զիրերաց. նախ քան զօրհնելն առանց գարշելոյ ուտէաք. և յետ քան զանուշամբն օրհնելոյն գարշիմք։ Այլ լեռնայեալ չարեացս, նիւթ արարաք զատուերս անհաստատս. և զոր միութիւն քրիստոնէից խրատեցաք՝ հեթանոսաց ընդդէմ ցանգ արկանել, զայն միմեանց անջրպետ ձգեմք։ Այլ փակեցին գիրքս սքի հարցն՝ ոչ զօտարս, այլ զմեզ ընդ մեզօք. զի նոքա յանհաւատիցն հրաժարեցուցին զայս խորհուրդ. իսկ մեր մի հաւատ ունելով, առ նոյն և մի աղօթս, սակս նորին խորհրդոյ զնոյնն առ իրեարս նախատեմք յանդգնութիւն. անգիտացեալք թէ յանձինս դառնայ վերն և թշնամուին։ Զանաւանդ թէ զՀմարիտն ասել, առ քն՝ առ որ և գիտաւորութիւնն է երկուցս խորհրդոյ, այս է ատելութիւն պտուղ՝ և արիւն հետևողքն։ Զոքա մանկունք դատերն բաբելացւոց, զորս զքարի հարկանել թախանձեմ. արդ՝ ապանցուք զվաղուցն ծնեալս, և սիացուք այսօր երկնել՝ զոր քն արկ սերմն յարգանդ մտաց մերոց. զմեծ սէրն, զանչափ գութն, զդնելն զանձինս 'ի վերայ իրերաց։ Արդ՝ եթէ ոչ զանձն, գէթ զկամն. չիք քան զխաղաղութիւն բարի 'ի կեանս մեր, թէ ախորժեմք. ոչ այն զոր աշխարհս տայ, այլ այս՝ զոր քն երբեր յերկնից. վասն այսորիկ և աւանդեցաւ յեկեղեցի հանապազ զնոյն աղերսել։ Խողքոյ է առ ուծ խաղաղութիւն, առ եղբարսն խաղաղութիւն. չիք հնար ումեք ընդ ուծ առնել խաղաղութիւն,

մինչ

մինչ չև առ մարդիկ զնոյն ուղղեսցէ։ Զարդ՝ զի կարօտ եմք ամենեան առ ՀԱԾ խաղաղութեն, հիմն արկցուք նմին զառ եղբարսն միաբանութի. աղաչեցաք վասն խաղաղութե զՀԱԾ՝ և աղաչեմք. արդ պարգևէ, ամփոփեսցուք։ Հաստատել զեկեղեցի իւր սէր՝ 'ի Հոնէ խնդրեցաք. այսուհետև կամեցաւ կատարել զնոյնն. եղցուք 'ի լեառն աւետարանական հաւատոց, հարցուք փայտս անփուտս, և նեցուկս սմին կառուսցուք։ Զայսպէս ասէ Հոր ամենակալ, հաձեցայց դովաւ, և փառաւորեցայց 'ի ձեզ։ Մինոք ասիցէ, թէ ոչ է ժամանակ ամփոփելոյ ըզքակեալ քարինս Հոն տանն, և դարձեալ զնոյն չինել. մի եթէ ձեզ միայն իցէ բնակել 'ի տունս դմբեթեայս. և տունս իմ աւերակ կայ, ասէ տէր։ Տեսանէս, թէ որպէս մարգարէս տրտնջէ 'ի դիմաց Աստուծոյ։ Զու արդ զի՞նչ. պարզ տեսանես զասացեալս, և ոչ խորհրդաբար և հոգեպէս։ Որ ապա յայնժամ դիցուք զեսայեայ ասելն. երկինք ամթոռ իմ են, և երկիրս պատուհանդան ոտից իմոց. և ես յո՞ հանգեայց, քայց թէ 'ի հոգիս մարդկան հոգեպէս։ Զարդ՝ զառերեալ զայս տունս իւր 'ի խռովութենէ չինել, թախանձէ մարգարէիս։ Զայսպէս ասէ Հոր. կարգեցէք զսիրտ ձեր 'ի ձանապարհս իմ. զի մինչև ցայժմ վարեիք բՀմ, և ժողովէիք սակաւ. ուտէիք, և ոչ յագեիք. ըմպէիք, և ոչ լինէր յագուրդ. զգենուիք, և ոչ ջերմուիք նոքօք. և որ զվարձս իւր ժողովէր, 'ի ծրարս ծակոտեալս ժողովէր։ Իսկ այսուհետև ողորմութիւն և գթութիւն խօսեցայց ընդ ձեզ, ասէ Հոր. և եղիցի յայսմհետէ՝ լուսոյց ես երկնից, և երկինք լուսիցեն երկրի, և երկիր լուսիցէ ցորենոյ և գինոյ և ձիթոյ, և նոքա լուսիցեն ժողովրդեանդ իմ։

Զհա

Բ.հա հնչեցին ձայնք աւետեաց յականջս ձեր. այ-
սուհետև զարթիք, և սկիզբն արարէք շինել զե-
կեղեցի ոյ կենդանւոյ։ Տուք 'ի ձեռս Քարտա-
բապետիդ սյդորիկ իմաստնոյ, ոմն զասկեղէն զարդ-
տի հնաձանդուԹի, ոմն զարծաԹեղէն համակա-
մուն, այլք բաղմերանկք քարինս սիրոյ, համա-
շունչ լինել՝ միախորհուրդ։ Մի ինչ ըստ գրգռ-
ուռնէ, մի ինչ ըստ մնապարծուռնէ. այլ զմիմեանս
լաւ համարել առաւել քան զանձինս. յաղԹիլ և
ոչ յաղԹել. զրկիլ և ոչ զրկել. զի ընդ սիրե-
լեացն է միաբանուԹիւն՝ և ոչ ընդ Թշնամեաց հա-
կառակուն։ Որոյ աղաչաւ գրէ առաքեալ. ընդ-
էր ոչ դուք զրկիք. և ոչ դուք առաւել նեղիք։
Բ.ընդ տղղոսի հաւանիմք՝ զրկելոս և խոնարհե-
լոս զսէրն հաստատել. և ոչ ումեւսիտ մար-
դոյ։ Մարտ մեր հասարակաց՝ լիցի առ հասա-
րակաց մեր Թշնամին սատանայ. իսկ առ եղբարս
հանդարտք ուսաք լինել հանապազ. մանաւանդ
զի և նա բաղում անգամ 'ի խոնարհուԹէն պատ-
կառէ. եԹէ զարմատ չարին սա յաղԹահարէ,
քանի՞ առաւել զրմբռնեալսն 'ի նմանէ զմիտս մեր
նուճանէ։ Մի ինչ մարմնական 'ի հոգևոր գործս
խառնեսցուք, մի յաչաղանք. մի լիցուք զուր
գատաւորք. որք անաչառն եմք մատնեալ ատե-
նի։ Ոչ ոչինչ չափոնն որով մեք աստ չափեմք՝ չա-
փելոց է մեզ անդանօր անսուտ դատաւորն։ Բ.-
ԹԷ սիրեմք և զայն չափեմք, 'ի սեր վայելեմք.
եԹէ ոխս և ատելուն, զկշիռն ընդունիմք։ Բ.ը-
կեցուցանէ և զիս առակաւոր բանն՝ որ յաղաչս
ծառայիցն. ինքն 'ի տնէն բաղում ընկալաւ, և
առ ծառայակցին տկարուԹն ներել ոչ կամէր.
ելեալ ասէ խեղդէր զնա, և նա զերկայնմտուԹն
աղերսէր. իսկ զի ոչ կամեցաւ՝ սպատժեցաւ։ Ոչն-

պէս ասէ արասցէ և ձեզ Հայրն իմ երկնաւոր, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբարց ձերոց 'ի սրտից ձերոց զյանցանս նոցա։ Որ զարհուրելի վճիռս. քանիսո՞ն եմք 'ի ներքոյ այսմ դատապարտութեան, որք յանցանս ոչ ունիմք առ մեզ զեղբարսն 'ի ձեռս, և 'ի կարծիս զնոսա դատապարտեմք։ Ահեմք մեք ոչ նախանձարկու կամ վրէժխնդիր. մի՛ է դատաւոր՝ ասէ յակովբոս առաքեալ. նորայն ամենեքեան ակնկալցուք ատենի։

Տօնք և աւանդունք 'ի սիրոյ յառաջ եկեալ հաստատեցան, և ոչ թէ սերն 'ի տօնից. անվայելուչ է ապա զվանորոյ եղեն սոքա՝ եղծանել, առ ըզսոսին հաստատուն պահելոյն պատճառաւ։ Դանդի զեղման 'ի վերայ մեր՝ փրկչին շնորհայ, որ ըՀան նշանակք՝ գոհութիւնն սէր, և մեռանն սրբարարք, տօնք տերունականք, և որ 'ի սոսա յարմարին։ Արդ՝ զինչ կարծէք վայելուչ. 'ի նիւթոց նիւթ և 'ի ժամանակէ ժամանակ զսոսա փոխել, եթէ զնոյն յամառութիւն պահելով, զսաղաղութիւն միաւորուն եկեղեցւոյ քո՞ի լուծանել։ Լաւերևս ո՞չ զտերունական կամս ախորժէք առնուլ օրինակ. որ զշաբաթ՝ սահմանեալ վասն մարդոյն հանգստեան, իրաւունս վարկաւ լուծանել 'ի պէտս նորին առողջութեան։ Լուրեմն 'ի հրեականն եմք առասպելաբանութիւն կործանեալք։ Զգոյշ լիցուք եղբարք. մի գուցէ և զմեզ բանն կոչիցէ կեղծաւորս և քակտիչս օրինացն ոչ, 'ի պէտս ըզմերն հաստատելոյ աւանդութիւս։ Գուցէ և առ մեզ ոչ՝ 'ի մէջ ածցէ զեսայեայ յանդիմանութիւն։ Կեղծաւորք ասէ՝ բարիոք մարգարէացաւ 'ի վերայ ձեր Եսայի և ասէ. ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն. ուսուցանեն վարդապետու-

տուԹիս զմարդկան պատուհիրեալս։ Յոլեալ ասէ զպատուհիրանն այ՝ զձերդ կամիք հաստատել զաւանդուին։ Եւ զինչ է պատուհիրանն այ, ասիցէ ոք, զորսով զանց առնեմք մերով աւանդուէս։ Սկրն Եղբայր՝ որ առ միմեանս. զի զայս ասաց քո, ԹէՀ պատուհիրան նոր տամ ձեզ. և այսու զմեզ իւր աշակերտս ճանաչել՝ ետ տարացոյց. զոր ԹողումՀ 'ի պէտս աւանդուեց տօնից յօրէ 'ի յօր փոխելոյ. զորս ոչ ընկալաք 'ի քոնէ օրէնք. այլ մեք վասն զնա սիրելոյն սահմանեցաք. որ ԹէՀ պէտ է գեղեցիկ, բայց և ոչ յայնժամ՝ յորժամ զմեծ օրէնս՝ փոքրս տապալեալ քակտէ. զի 'ի քո յա՝ ասէ առաքեալն պօղոս, ոչ այլ ինչ՝ բայց միայն հաւատք սիրով յաջողեալք։ Զինչ ասես ոչ ճծայինդ պօղոս. ապա ուրեմն ոչ ժամանակք տօնից. և ոչ նիւԹք խորհրդոց, ոչ խտրուԹիք կերակրոց։ Եւ ոչ երբեք ասէ. մա զի ԹէՀ հաւատով և սիրով իւրաքանչիւրքդ կատարին, որպէս և լինիցին՝ և յորոյ նիւԹոց և իցեն, հաճոյ են այ։ Իսկ ապա եԹէ յայսցանէ կատարողքն վրիպին, զինչ և գործեն՝ 'ի նանիր դանդաչեն. զի նա ոչ ԹէՀ 'ի տարրն հայի, կամ 'ի նիւԹն՝ աննիւԹն բնուԹի, այլ 'ի հոգին և 'ի սէրն՝ որով տարրն ընծայի։

Եւ հա յայտ է ապա, ԹէՀ ոչ ըստ որում մեքս խորհիմք՝ խմորուն հայն ապականուԹի է 'ի քո, և ոչ որպէս նոքա՝ բաղարջն մեռելուն, ոչ ջուրն և՝ խորհրդոց առաւելուի. և ոչ անջուրն՝ նուազուԹի։ Զինին՝ նոր ուխտին արեան նշանակ։ Ոչ 'ի միւս ամիսն տօնելն միայն հաճոյ. և ոչ 'ի միւսն այլ՝ անարգեալ։ Եւ ապա ԹէՀ ոչ՝ ԹողեալՀ զամենայն ինչ, և զոր մա այսր 'ի գրոց բազմապատիկ զվկայուԹիս, էկ և զբնուԹի իրին քննեաս-

նեսցուք։ Այսինքն՝ զի յամ ամ շրջանակ տարոյ յառաջ խաղացեալ՝ զիւրաքանչիւրսն 'ի տօնիցն յորե յօր փոփոխէ, և որ յայսմ ամի օր ծննդեանն, 'ի միւս այլն՝ ոչ հանդիպի լինել օր ծննդեան, այլ յառաջ փոխի օր ըստ օրէ, և ոչ է հնար յօր կամ 'ի ժամանակ ծննդեանն քօի զնոյն կատարել, որպէս կարծեն ոմանք, 'ի հոլովման և 'ի փոփոխման ժամանակիս՝ որ զամ տօնս յօրե յօր շրջեալ խաղաղացուցանէ։ Այս և զմեծ զփրկագործն պասքայ՝ ոչ միայն յօրե յօր, այլ յամսոյ յամիս. բայց յորժամ հաւասար զնոյնն կատարեմք, ոչ երբեք խարուցք թերեհաւատեմք յիրերաց։ Այսպէս ուներ լինել և ծննդեանն օր, եթէ 'ի հաւասարուն եկեղեցւոյ խոնարհեաք։ Զինչ պարտ է և ըղսրբոցն բանս 'ի մէջ առնուլ առաջի իմաստնոցդ՝ մեզ 'ի կշտամբուն. զի ածաբանն այլևայլ խորհուրդս և աւուրս նոցին ցուցանէ. և սքն եփրեմ, յամենան յորում արեգակն բարձրանայ՝ ասէ զքն ծնեալ. և պրոկղ զստեփաննոս ընդ արեգակն արուսեակ ասէ ծագեալ. և այլք բազմք, որ սոցա համաձայնին։

Այսև զգինի, որոց որպէս հաճոյ թուէեցաւ՝ քքնեցին, և ոչ այլ ինչ զբնութիւն նորին սահմանեցին, բայց միայն ջուր 'ի ձեռն որթոյն այլ ինն որակութիւն փոփոխեալ յեղյեղմամբ տնկոյն։ Իսկ եթէ սկիզբն էութիւն նր ջուր է՝ որպէս և ցուցաւ, նա դարձեալ խառնելովն՝ զնարդ գործէ 'ի նմա ապականուն. զայոց մնաց արդարև այս կարծիք. և զի համէութիւն տարերք են, որպէս յոչ խառնելն նուազութիւն։ Զանազի ամ նիւթ 'ի չորից տարերցս է բաղկացեալ՝ 'ի հողոյ 'ի ջրոյ 'ի յօդէ և 'ի հրոյ. և մի գոլով 'ի նիւթոցս գինին, հարկաւորապէս ունի զչորս տարրն ը լինքեան խառնեալ.

նեալ. յորոց մինն է ջուրն։
Դարձեալ, զՀայ խմորեալ՝ ոչ եթէ մեք իբրև
զապականեալ անարգեմք. կամ զանխմորն իբ-
րև զմեռեալ համարիմք։ Լ.ուրդ՝ եթէ մեք ոչ
խորեմք, ՝ոծ զարարածս իւր որպէս զպիղծս ա-
նարգէ՞. մանաւանդ ոչ իմանաս, թէ և խմորուն-
և անխմորն է ապականելի՝ նիւթ գոլով զդալի։
Օ՛ի ամենայն նիւթոյ որ մարմին է՝ ապականուի
հետևի. և երկոքինն են մեռեալք, ոչ ունելով
հոգի կենդանի, այլ տարր գոլով անշունչ. և չէ՞
մին քան զմին պատուական կամ նուազ, այլ մի
հայ են և անուանին. և գիտեմք վկայուած մտաց
զասացեալս։ Լ.սպա ուրեմն ապականացու նիւթ՝
խմորեալն և անխմորն. սակայն եդեալ 'ի նոցա-
նէ զիւրաքանչիւրսն առաջի ՝այ՝ քան մարմնոյն յի-
շատակ, և աղօթիւքն սրբեալ, հաւատամբ 'ի
ձեռն ներգործութեան հոգւոյն լինել ապականաց-
ուին՝ միութեամբ հոգւոյն ՝այ՝ մեզ անապականութեան
խորհրդոյ կերակուր, և մեռելոյն՝ խառնմամբ
սրբոյ հոգւոյն՝ կենդանի։ Լ.ա զի թէ իբրև ըզ-
հրեայսն էաք՝ մինչև 'ի մարմին և 'ի մարմնական
նշանակսն ևեթ հայեցողս, գոյր այսոցիկ տեղի
քննուէ. ապա թէ յայնցանէ ամբարձաք, և ա-
մենայն մարմնական մեր անշունչ տարերց նշա-
նակք հոգւոյն կենդանանան, զիարդ ուր հոգի,
մեռելութեան գոյ կարծիս կամ ապականուէ։ Լ.-
սպացոյց առցուք ասացելոցս և զոր 'ի մեզ մարդս.
քանզի ապականեալ յայնժամ կոչի՝ յորժամ հո-
գին 'ի մարմնոյն որոշի։ Լ.սպէս և ՝ամ խորհրդ-
դածութիւնք որ առ մեզ քան, ապականուէ լծա-
կից և թերի յայնժամ են, մինչդեռ ոչ է հոգին
հաւատոյն և աղօթիւք ընդ նմա միացեալ։ Լսկ
յորժամ սովաւ դրդի մարմին նիւթոյն, և ըզ-

հոգին կենդանի 'ի նմա տալաւորէ, և իմացակա-
նապէս խառնէ՝ յորոց և իցէ նիւթոց, կատարեալ
լինի 'ի քո։

Բ. այս առցես ինձ և զվիւռանն սէր՝ ոչ 'ի նիւ-
թոյն անուշահոտեալ, այլ 'ի հոգւոյն սրբոյ քա-
հանայական աղօթիւք իմանալի անուշահոտու-
թեամբն լցեալ։ Ուրեմն արդարանայ 'ի բանս իւր
առաքեալ. թէ 'ի քո յս ոչ այլ ինչ, բայց միայն
հաւատք սիրով յաջողեալ։ Օ՛ի սա է՝ որ յան-
կատար նիւթն զհոգին խոնարհեցուցանէ. սէրն
առ ՅԾ, որոյ աղօթքն է պտուղ, և հաւատն է՝
որ զհինն նորին արկանէ, թէ ՅԾ մարդոյ աղա-
չանաց իմանալի բնութիւն իմացականին լսէ, նոյն
և զօրհնելն ընդունի։

Հաւատա՛ թէ որ զ'ինչն է հաց, յորժամ աղօթքն
նոՀիրեցաւ, մարմին է քոՀ, և է ՀՀմարտապէս։
Բ՛պա թէ ոչ հաւատաս, թէ՛ անխմոր լինի և կամ
իբրև զՀիւն սպիտակ՝ ՀՀամարիս. զի ոչ եթէ օրՀ-
նութիւն զտարրն յայլ էութիւն փոխէ զգալի աչացդ
'ի տեսութիւն հաւանուէ, այլ միայն իմանալի զо-
րութիւն նմին ընձեռեաց. և իմանալին հաւատովք
տեսանի. և հաւատոյն կար է և զխմորուն և ըզ-
քաղարջն սրբեալս օրՀնութիւնն ընդունել մարմին
քոՀ։ Բ՛պա թէ կարող ես զայս առնել, ընդՀր
դժուՀարիս կամ հակառակիս. ոչ ապաքէն զի Հեռ
և նախանձ ատելութիւն ունիս առ եղբայրն. և ուր
սոքա բնակին՝ ամենայն իրք չար և անկարգ է՝
ասէ առաքեալ։ Օ՛ի թէ վա՛ զեղբայրն անգոս-
նելոյ, և զնորա պատարագն որ 'ի խմորեալ հա-
ցէ, առնես զքոյդ պատարագն քաղարջ, թերի
ես 'ի հաւատոյն, և նախանձուն ծառայ։ Իսկ
ապա թէ պահես զքոյդ աւանդուն 'ի փառս ՅՀ,
և ընդունիս զնորայն 'ի նորին փառս, միոյ քոՀ
մար-

մարմին Աշմարիտ զ'ի խմորուն օրհնեալ հացէն և զբաղարջէն, այդ է գովելի կարծիք։ Եւ զայս ետ մեզ Տէր՝ և սրբոց իւրոց առաքելոցն՝ կատարիչ խորհրդոց զհաւատն և զսէրն, և ոչ այլ ինչ։ Եթան այսորիկ ոչինչ կարևոր համարեցան գրել զոք 'ի նիւթոցն ընտրելի, կամ անարդեալ. քանզի զինչ պիտոյ էր նոցա զկեանսն ունելով պաշտօնեայ, հուլթե նիւթոցն առնել ընտրութիւն։ Այլ տես առ այսոքիւք զիսրայել, որ ոչ եհաս այս շնորհի պաշտպանուն սքի հոգւոյն. այլ մինչև 'ի նիւթքն մարմնաւորք միայն էր նշանակք խորհրդոց նոցա, թէ զիարդ զամ նիւթոցն Աստուծի որոշեաց նոցա ՅԾ օրինօքն. այլևայլ պատարագք, և այլևայլ կերպարանք յօշելով, զոմանս միայն բոլորովին ողջակիզեալ, և զայլս ոչ այնպէս. զկէս միայն 'ի խորանն, և զայլսն 'ի սեղանն ընկալեալ։ Այլ մեզ և ոչ մի ինչ 'ի սոցանէ, այլ միայն հաւատ և սէր սուրբ մտօք։ Ինձ թուի այսպէս մեր և նոցա խորհրդոցս 'ի միմեանց անջատուի։ Օրորինակ թէ պարտիմ ոք գծագրութիւն գեղոց պատկեր նկարագրել, զպէս-պէս երանգս գեղոցն 'ի կիր ածէ. և ջանայ ուշիւ իմաստիցն զնա 'ի տիպ և 'ի հասակ և 'ի ձև կենդանեաց յօրինել, զի հաճելի և ցանկալի որպէս զկենդանի թուէեցի տեսողացն՝ անկենդանին։ Իսկ մարդ կենդանի՝ որ կրի հոգւով մարմինն, ոչ այսոցիկ Աշգրտութիւն երանդոց կարօտի՝ առ 'ի հրատարակել զիւրն կենդանութի. այլ բաւական է միայն հոգին ներգործող զշարժումն անդամոցն զայս հռչակել։ Արդ՝ զի խորայել էր անկենդան յարացուցին գծագրողն. ոչք 'ի մեղացն ադամայ տիրեալք՝ ոչ զօրեցին առնուլ պաշտօնեայ քահանայագործութիւն իւրեանց զհոգին այ, այլ կերակ-

բովք և ըմպելեօք և պէսպէս մկրտութիւք՝ մարմնոյ արդարութիւնքն ջանային զՀմարտուիս գծագրել։ Իսկ ապա եկեալ քո քահանայապետն հանդերձելոյ բարեացս՝ մեծաւն և կատարելեաւն և անձեռագործ խորանաւն. այս ինքն՝ որ ոչ էր յայսց արարածոցս, անդր եմուտ իւրով արեամբն 'ի սրբութիւն սրբոցն, որ է ծոցն Հայրենի. և անտանօր նաւթձեաց մեզ զյաւիտենական փրկութիւնն։ Իւ փրկելոցս պաշտպան՝ առ 'ի հօրէ, և առաքեաց զՀոգին սո՛ւրբ. ընդ ձեզ ասէ բնակեսցէ և ընդ ձեզ եղիցի յաւիտեան։ Օ՜ որ ունելով ընդ մեզ, ոչ կարօտիմք այլևայլ նիւթոց. այլ զորև կընքեմք Հոգւովն, քսի պատկեր և մարմին կերպացուցանեմք։ Իւ զի Հոգին է ընդ մեզ՝ ընդ ո՛մ քրիստոնեայս, յայտ է յանսուտ խոստմանէն որ ասաց. ընդ ձեզ բնակեսցէ մինչև յաւիտեան վախճանի աշխարհիս։ Զ՞ որդ՝ ուր Հոգին է կենդանարար, ձեռք և նիւթք մարմնական՝ նմա առ ինչ պիտոյանան. և եթէ էին կարևորք՝ ընդէ՞ր ոչ գրեցան մեզ 'ի մերոյ օրինադրացն, ոգ և հրեական ժողովրդեանն 'ի մովսեսէ։ Զ՞յլ թէ՝ զՀոգին մի՛ շիջուցանէք, և մի՛ տրտմեցուցանէք զՀոգին սո՛ւրբ ո՛ւյ։ Իւ ո՞ զնա տրտմեցուցանէ. դատարկաբանութիւն։ Զ՞որդ եթէ 'ի դատարկաբանութէն տրտմի, քանիո՞ն առաւել 'ի բամբասելոյն և 'ի նախատելոյն զքո՛ի խորհուրդն՝ որ 'ի մէջ այլոց ազգաց քրիստոնէից կատարի, զոր անխտիր առնեմք։ Իսկ յորժամ այսու զնա տրտմեցուցանես, և ևս յանձախելով զարհամարհանն՝ շիջուցանես. քեզ զի՞նչ օգուտ է անկենդան նիւթոցն պատիւքն կամ ընտրութիւք։ Զ՞ուաղ տգիտութեամ և արտասանելի մեր թշնառուես. յաղթեցաք որդւոցն խորայելի չարեօքս. զինչ արդեօք լինիցիմք եղբարք։

Սա-

Սակայն ասեն ոմանք. ահա զայս այսպէս հաւատամք, թոյլ տացեն մեզ 'ի մերս աւանդութիւն ճնալ անփոփոխ. և ինքեանք զինքեանցն պահեսցեն։ Եւ արդարև այսպէս. և իւրաքանչիւրոք 'ի ձէնջ մնայ գիտակցութեամբ զիմարտուն բանիցս վկայէ։ Բայց սակայն նուազեցոյց զիմաստն նախապատուութիւն, և զսէրն՝ հակառակութիւնն. և թէպետեմն հանդէս յարուցեալք՝ իւրաքանչիւրոք զյաղթողն լինել ախորժէ։ Պարձեալ և այլ պատճառս. զի հինն և սկիզբն են հաւատոց քրիստոնէից և կարգաց, և զնոյն յառաքելոցն և այսր ունին անշարժ աթոռով. և մեք զորս ունիմք 'ի նոցանէ ունիմք։ Այր անուանեցան իմաստուն, և յետ այնորիկ 'ի պօղոսէ առոգեալ ծաղկեցան։ Դիրք որ առ մեզ ածաշունչք, նոցա է սեպհական. և հարց նոցին ասացեալ. նեցուկ և սիւն հաւատոյ քրիստոնէից զաթոռ թագաւորութեան նոցա ետ քո՝ ըստ վկայութեան առաքելոյ. յորժամ նոցա վախճանելի իշխանութիւն դրդուի, քոի մշտնջենաւոր արքայութիւն տիրէ։ Այնչէն ասէ բարձցի հռոմայեցւոց տերութիւդ, ոչ եկեսցէ մարդն անօրէնութեան որդին կորստեան, որ 'ի ոնէ յոտ քոէ սատակեսցի։ Ցեսանեա՞ թէ որքան վկայէ առաքեալ նախապատուութեն։ Զայս ասելով՝ ոչ է թէ զմարմնական իշխանութիւն յարգեմ 'ի մեջ հոգևորացս և քոի տրութիւնն պարծելոցս, այլ ցուցանեմ իմաստնոց՝ թէ և զմարմնականն աթոռ ունին ընդ հոգևորին կամքն ոչ։ Սակս այնորիկ և զկարգս եկեղեցւոյ վայելչութեն անփոփոխ. և ըզփոփոխմունս 'ի փառս ոչ. զի միշտ հաւանին ասացելոցն. եթէ երկրորդին որ նատիցի յայտնեսցի, առաջինն լռեսցէ։ Իսկ մեք թէ որքան անիմաստ թագաւորաց վիճակեցաք. կամ ոչ՞ յանմիտ

միտ իշխանաց տապալեցան կարգք եկեղեցւոյ, անդուստ 'ի սկզբանէ տեղեակ էք 'ի պատմութենէն. և չէ՛ տմօթ զգրեալսն առ 'ի պէտս ուղղութեան, և ո՛չ թէ նախատանօք՝ երկրորդել։ Այլ զոբն սահակ՝ բրքիշոյի իրաւունս վարկան ընդ ձեռամբ կարգել. և զյաւէտ նախանձամաղ հովիւն այնպէս անդամանեցին։ Յորոց անիմաստութիւն միանգամ և երկիցս գրեանք աշխարհիս 'ի պարսից այրեցան. եկեղեցիք քանդեցան։ Մնաց թուի ապա, եթէ նախատեղեակութի՝ նոյ և աթոռոյն անշարժութի, վկայէ աւանդութենն ճշմարտութի։

Բ. Դ՝ յառաջի եդեալ գլխոյս՝ զոր ախտրժեմք, և կարող եմք բառնալ, ընկալցուք սիրով իբր ըզնախահարցն օրէնս, և ո՛չ որպէս զատարաց. հեզութիւն և ո՛չ դժուարութիւն. 'ի փառս ոյ հաւատացեալ՝ և ո՛չ յանարգանս։ Ոգիք մարգարէից, ըստ այլ՝ զի մարգարէից հնազանդին. և ո՛չ է ոճ խռովութի, այլ խաղաղութի. ապա ուրեմն ամ ինչ որ զխաղաղութի նիւթէ՝ է նմա հաճելի։ Ո՛չ է արտաքոյ բանիս և զայս ասել. յեցուսցուք ըզդրդոհեալ եկեղեցի մեր 'ի գաւազանն երկաթի. ստատացուք զօրավիգն գերութեն մերոյ զնպատակն աշխարհի։ Ցառապանքս՝ հաւատամք զի մխիթարի 'ի շտեմարանացն արքունի, և տարբերութիս 'ի նաւահանգիստն անմատոյց։ Ցեսցո՛ւք թէ հատուցանեալն 'ի մէնջ ազգ վրաց 'ի նոսա յեցեալ, ոբքան օրըստօրէ 'ի քո պայծառանան. արդ՝ գոնեա անագան և մեք զնոյն խոկասցուք։ Ո՛չ ասեմ փրկանս տալ մարմնոյ զհոգի. մի՛ ոք զբայս այսու ծեքեսցէ. այլ առ ոմանց տկարուն հայելով, քնի ոչակերտս վարգապետին ջանամ նմանել, որ զհոգւոյ բժշկութի ը մարմնոյն խառնեաց. և ես երկոքսումբք վրդովելոցս՝ երկոցունցն

խա-

խաղաղուն հաւատամ, և ջանիւ լինիմ աւետա-
բանիչ։

Ընդէր այսչափ զայլս խոտեալ՝ խորշիմք և խու-
սափիմք 'ի միմեանց քրիստոնեայքս. որ այլ աղ-
գաց վիճակեցաք կենակիցս։ Մինչև յերբ ան-
դամքս լեզուօք զիրեարս խոցոտեմք, թունիւք
իժին լցեալ զբերանս, այսքան յերկար ժամա-
նակս անխնայ զմիմեանս հարաք։ Դիտեսցէք եղ-
բարք և զայս. թէ այս թշնամութիւն օրէնք այ
էր, թերևս այսքան արձանացեալ էր հաստա-
տուն։ Ա՞յ ինձ, և զոր զայլս 'ի նոցանէ տեսա-
նեմք կացեալս հաստատուն. 'ի վաղուց հետէ
սկսաւ որոմն մեղաց յերկրի մեր ատոքանալ, և
սաղարթ օրինացն քոի թառամել։ Սակայն այս
ոչ եթէ ընդ բարեացն նուազի, այլ ընդ չարեացն
օր ըստ օրէ աճեալ զարգանայ։ Ուրեմն ապա յո-
րոմանցն է, և ոչ 'ի ճշմարիտ սերմանցն։ Կարող
է իմաստունն և 'ի պտղոյն զարմատն ճանաչել,
զի պտուղ սորա է կամքն սատանայի, հեռն բամ-
բասանքն ատելութիւն, զանձն արդարացուցանելն
և զայլս խոտել, և այլ որ ը սոքօք բերին։ Ոչ
իւրաքանչիւր ոք 'ի մէնջ փարիսեցի եղև աստա-
նօր։ Հայն միշտ սղաղակէ. ա՜ծ իմ գոհանամ
զքէն՝ որ չարարեր զիս Հոռոմ. և Հոռոմն զնոյն
բան երկրորդէ, թէ՝ որ ոչ արարեր զիս Հայ։ Ա՞զ
տմարդութիւնս, և անմիտ յանդգնութիւնս. և չար
վկայէք լինել 'ի բարւոյ սրարչէն. և այս՝ ոչ ըգ-
նուութ միայն, այլ զմարդ զոր ըստ պատկերի իւր
արար։ Ա՞նմիտ՝ կամք չար ստացան ոմանք 'ի
մարդկանէ, և ոչ բնուի ազգին է չար, Հոռոմին
կամ Հայոյն, կամ այլոց սեռից. զի և 'ի պար-
սից բազումք հաճոյացան այ՝ և ընտրին։ Ա՞յդ՝
քո այնքան կուրացեալ յատելութէն, մինչ զի ոչ

միայն զկարծիս աղդին , այլև զաղդն ողջոյն բամ-
բասես . և 'ի նմանէ գոհութիւն հրաժարես ։ Այլ
ով կարէ զայս ախտի չարութիւն թուել . բանս
յերկարութիւն արտաքոյ ելանել սահմանի , և ախտս
դեռևս 'ի սմանէ ոչ պարունակի . այլ մնան զա-
նազան չարութիւնքն անձառ 'ի սահմանի ։
Եւ այս դարձեալ յարբեցելոյս կարծեաց ատե-
լութիւն . թէ հարքն զհերձուածողն խոտեցին ,
յառնէ հերետիկոսէ հրաժարեցուցին ։ Ասաքեալ
ասաց . թէ ոք ոչ հնազանդեսցի թղթիս այսմիկ՝
նշանակեսջիք , և մի հաղորդիք ընդ նմա . և
այլ բազումս ։ Ո՞ր ոչ ասացից , թէ գիտեմ և
ես զայդ . լուռ լեր , մի ստերիւրեր զձեմարտու-
թիւն , և քումդ առնուս ախտի ջատագով . այլ ու-
ղիղ տեսցուք՝ և զամենի հարցուք . որպէս առա-
քեալ և սիրն զայս գրեցին . զի խորշելոցն 'ի հե-
րետիկոսէն՝ ամ եկեղեցւոյն՝ պատկառեսցի , և
յայլոցն միաբանութիւն եկեսցէ ։ Լակ այսօր բար-
ձաւ պատկառանքն , և տիրեաց միմեանց արհա-
մարհութիւն . և եղաք հերետիկոսք ամենեքեան ,
և ոչ թէ ումանք 'ի մէջ մեր . զի հերետիկոսն
հերձուածող թարգմանի . և ահա տեսանեմք
զամենայն ազգս քրիստոնէից 'ի միմեանց հերձեալ.
և պատառեալ . և իւրաքանչիւր եկեղեցի և ժո-
ղովարան , և աթոռ հաստատեալ ։ Լրդ՝ այժմ
չէ օգուտ 'ի միմեանց հրաժարելն , կամ ընդ ան-
հնազանդն ոչ հաղորդելն . զի եթէ խորշիս՝ ոչ
թէ ոչ ունի այլ եկեղեցի , և 'ի քոյոյդ արտաքս
ելանելն ամաչէ . այլ յանարգելն 'ի քէն՝ դնայ յիւրն
եկեղեցի և յաղդ . և վասն քո խոտելոյն , ոչ թէ
պատկառէ՝ այլ պարծի ։ Դարձեալ և դու տես
զքեզ . զի ոչ թէ վասն յուղղելի ածելոյ ոչ հա-
ղորդիս սիրով և վշտակցութիւն , այլ մեծապան-
ծութիւն

ծուԹՔ և արհամարհանՔ, խՔոխտալՔին յանձն, և զիս առ ոչինչ դնելով. որ ոչ է բժշկուԹի, այլ ԹշնամուԹի չար։ Այս էս չարագոյն այդ, զի ջատագով ԹիւրՔ մտացդ զուղիղն առնուս օրէնս առաքելական։ Խորշելով և հրաժարելՔին Թերևս 'ի քուս աղգէդ և 'ի քո եկեղեցւոյդ, կարես զոր յուղղուԹ ածել, կամ քեզ հաղորդ վասն ամաչեցուցանելոյն առնուլ. իսկ զայլ աղգ՝ որ հաւանեալ է ԹԷ քան զքեզ պատուական է և ուղիղ, ԵրԲ է հնար այլազգ հաղորդ ընդունել, բայց ԹԷ սիրով և խոնարհուԹՔ և քՔոի օրինՔն՝ հեղոյն և մարդասիրին։ 'Այն որ արարիչ էր, զիւր արարածս ոչ կամեցաւ բռնուԹՔ և սատիճուղղել, զի չէր հնար. իսկ դու այլ առաւել խելս քան զքՔոին 'ի քեզ խառնես։ ԱշտամբանՔ կամիս զոր 'ի սէրն կոչել. անձնիշխան մարդ կշտամբանՔ նուճաՔՔ. և ոչ երբէք. այլ մանաւանդ ես հակառակի. այլ պարտէ զնա և նուճաՔՔ սէր և խոնարհուԹՔն։ Այլ ասես, ԹԷ հրաժարեմ՝ զի մի պղծիցիմ 'ի նմանէ՝ որ հայն է, կամ ես որ հայս եմ՝ 'ի հոռոմէն։ Ոչ յանդգնուԹես. ոչ սատանայի կամացն սատարուԹես. քրիստոնեայն զքրիստոնեայն պղծէ։ 'Ի հեԹանոսաց ոչ խորշեմք և ոչ պղծիմք. և միմեանց անդամքս վասն մնոտի կարծեաց որպէս 'ի պղծոց հրաժարեմք։ Այս զի՞նչ է նորա պղծուԹՔն, կամիս քննեսցուք. ոչ վարք, ոչ գործք, այլ զի զքՔ՞ն ՔՔծ և մարդ խոստովանիմք. 'ի մի հաւատ կալով երկուց կողմանցս, վասն բայից և բառից զմիմեանս պիղծս համարիմք։ Ա՞յ մեզ՝ 'ի յանաչառն ատեան աչառանՔ ատելուն՝ օրինաց սիրոյն արհամարհողացս։ Դարձեալ ԹողցուՔ և զկարծեօք ատելն զգործս իրերաց. զգործս իւր կշռեսցէ՝ ասէ առաքեալ, և

ապա անձին իւրում տացէ պարծանս , և մի առ ընկերաւն . զի իւրաքանչիւր ոք զիւր բեռն բառնալոց է ։ Լ.ոդ զբեռնդ՝ զոր ոչ ես դու բառնալոց , էր վասն հոգաս և դատիս , և դատել այդպէս՝ ոչ վշտակցութիւն , այլ ատելութիւն ։ Լ.ուրկեղ խառնեա 'ի քեզ . մի գուցէ որպէս նա վասն մեղացն , և դու վասն դատելոյդ պատուհասեսցիս . որով դատաստանաւ ասէ՝ դատիք , դատելոց էք ։ Լ.ստրուն առնես կերակրոց . և սակս այնորիկ նախատես զայ մեծ եկեղեցին՝ պօղոսի աշակերտդ , որ ասէ՝ զայս գիտեմ և հաստատեալ եմ 'ի քո յն , թէ ոչինչ է պիղծ նովաւ . և նոյն . որ ընդ բերանն մնանէ , ոչ պղծէ զմարդ ։ Լ.պա յայտ է՝ թէ ոչ պղծէ զնա ծուլային զեռունքն , որ յորովայն երթայ՝ և արտաքս ելանէ . այլ պղծէ զիս խորհուրդ չար բամբասանացս , որ 'ի սրտէս արտաքս գայ . և սակս այսորիկ զնա 'ի հաւատոյն որ 'ի քո՝ տայ բամբասել որպէս թերի ։ Լ.յսպէս խօսեցարուք և այսպէս արարէք , որպէս զի ազատութիւն օրինաքն դատեցէք . և մի ծառայութիւն նախանձու ։ Այլ հոգին իմաստութիւն 'ի թշնամանող և 'ի հակառակող բերանոց փախչի , իսկ առ խաղաղարարն բնակէ . ըստ որում գրէ զսոյն յակովբոս , թէ նախանձ և հակառակութիւն դառնութիւնք գան 'ի ձեզ . մի պարծիք սուտ առնել զճշմարտութիւն . ոչ է իմաստութիւս այս իջեալ 'ի վերուստ , այլ երկրաւոր ընչաւոր և դիւական . զի ուր հեռ և նախանձ՝ անդ է անկարգութի և ամ իրք չարք ։ Լ.հաւասիկ դերև արար զհակառակութի հակառակողացն , զի այսոքիկ 'ի ընչաւորէն եկին մարդոյ յառաջ՝ և գան ։

Յորմէ տեղի տուեալ էղբարք , և երկնախումբ քահանայապետական աթ ժողով . բացցուք զբերան

բան, և ձգեսցուք 'ի պէտս առաջադրեալ ճծայինս գործոյ՝ զվերին իմաստութենն զՀոգի, որ է աղաստ աշ խաղաղարար հեզ դիւրահաւան, լի օղորմութիւ և պտղովք բարեաց. և խաղաղութիւ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն։ Զայս բարի սերմն Է՛զբաղբ սերմանեալ յանձինս, հնձեմք ըզպտուղ նորա 'ի կեանսն յաւիտենից ընդ ամ սէս։ Լ՚ըդ՝ տեսանեմ զի ոչ միայն օծութիւ հոգւոյն ընտրութիւն առնէք զանազան իմաստից հոգւոյն, այլինքն երկնաւորին և երկրաւորիս, այլև զպտուղ վերին իմաստութենն ակսայք տալ այսուհետև։ Զի ահա տեսանեմ զձեզ զսՀարթս դիմաք իբրև ըզմարգագետինս, 'ի ձմերայնոյ կապանացն ղերծեալս։ Զվ սքանչելեացս՝ ահաւասիկ զանազան ծաղիկք սիրոյ յանձինս ձեր փթթեալ, սկսան վաղվաղակի զՀոտն բուրել։ Զդէմս ձեր տեսանեմ ոչ որպէս յերեկն և յեռանդն. այլ նախ քան զբարբառ՝ հեզութիւ աւետարանիչս։ Լ՚էք ձեր ոչ զեռացումն արտի արեանց ցուցանեն, այլ զբաղցր արտասուսն ճնշեալ արտաքս բխեն։ Զ՚չինչ անիրաւիք սէ հաբք. արդարև արտասուՀաց արժանի աւուրքն մեր խռովութիւ անցեալք. բայց սակայն այսօր է օր զոր արար Տէր՝ օր ցնծութիւն և ուրախութիւն։ Զուրախասցի իսրայէլ յարարիչն իւր. որդիք սիոնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց։ Զի բորբոքեցաւ յերկիր մեր ճառագայթն սիրոյ ջահաւորեալ. և ելոյծ զձմեռն նախանձու։ Լ՚հաս ժամանակ իմաստուն երկրագործացդ յատելոյ զայգի եկեղեցւոյ քնի, և սրբելոյ զնա 'ի սաղարթիցն աւելորդաց։ Լ՚այսօր ճշմարտութիւն մեր՝ և օղորմութիւն Տէր պատահեն միմեանց, յորոց համբաւի ընդ տիեզերս արդարութիւն և խաղաղութիւ։ Զ՚աղթեսցուք այսուհետև՝ զի տացէ Տէր զքաղցրութիւն

թութի ևս առաւելագոյն , և աճեցուսցէ յերկիր մեր ցողով հոգւոյն սքեայ զայս սերմն . թերևս զօրութիւն նորա և զպտուղն կարասցուք տալ , որպէս կամաք այսօր՝ և յառաջի ժամանակս արդեամբք նորոգել զխաղաղութի եկեղեցւոյ քոյ ։ Զի և ընդ նմա նորին չնորհիւն լիցուք խաղաղարարքս որդիք քոյ հօր անվախճան խաղաղութեան , արժանաւորապէս փառաւորել զՀայր և զորդի և զսրբ Հոգին , յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Յոբին երանելւոյն Ներսէսի պարտոնի Եպիսկոպոսի ասացեալ. Բարեբանումնիւն Ներբողական գովումնէ 'ի համբարձումն Քրիստոսի։

ՅՆՕՐՀԱՒՈՐ ՀԱՐՄԱՆՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Խոհ եկեղեցի հեթանոսաց 'ի պատիւ յիշատակի փեսային քո քոյ խորհրդոց։ Պարեցէք ով մանկունք առաքաստիս այսօր ուրախութիւն, զի հաստատեցաւ սիրտ ձեր 'ի հանդէս փառաց նորա մեծութեան։ Օ՜ուշարձացեալ խրախոյս խնդուն հարէք 'ի մէջ տաճարիս՝ դասապետք դասուց հանդիսի ժողովոյս, քանզի ահա այսօր լուսն փափաքանաց ձերոց յերկինս երկնից կառուցեալ ամրացաւ։ Ով արեամբ փրկեալ անբիծ գառինն սեպհական ժողովուրդք քոյ, դուք որ ընդ խաչեալն խաչեցայք յօժարութիւն, և ընդ թաղեալն մեռայք անձկութիւն, և յարութեն հաղորդ եղէք դաւանութիւն. այսօր եկայք բարձրացէք սլացեալ ընդ նմին թևօք հաւատոց 'ի փառս երկնաւորս, յոր մտեալ նստաւ ընդ աջմէ հօր առ հաւատչեայ և ձանապարհ ամենեցուն ձեզ։ Ա՛յլ ինձ, որ զոտարտամուիս ընթադրեալ պաշտպան կացի աւուրս մեծի, ով տայր հաւասարել խորհրդոյս, և զամենեսեան դձեզ սխրացուցանել իմաստութիւն տօնելոյս։ Ա՛յն զի վերջացաք 'ի սահեցմանէ իրաց կենցաղոյս՝ նայել 'ի սքանչելի փառս այսր աւուր. յոր հրեշտակք ժողովեալ հպատակեցին,

ցին , և յեկեղեցի ուսեալք բաղմապատիկ խմաստս ՝ի՝ ժողովոյս մեր երգակցին ։ Այս և առաքեալքն սոքք 'ի սպասաւորել խորհրդոյս պշուցեալք սքանչացան . և մարգարէքն 'ի բացուստ տեսեալ՝ հրամանն ետուն ժողովոյս երգոց օրհնուն ։ Համբարձաւ ասէ դաւիթ՝ ՝ուծ օրհնուիցք , և ՝որ մեր ՝այնիւ փոդով ։ ՊՀ դուք եկեղեցւոյ մանկունք , բարձեալ զձայնս քաղցր եղանակաւ՝ սաղմոս ասացեք ՝ոյ մերում . սաղմոս ասացեք թագաւորին մերոյ . սաղմոս ասացեք ։

Ա.յլ աւաղ , զի հեղգուն մեր ծանրացեալ 'ի ըզբաղմանէ մարմնոյ՝ հաւանել հրամանիս վերջացաւ . և զձաշակ համեղ գիտուն՝ ջամբել անձին երգօք օրհնուիք յուլացաւ ։ Վանզի որպէս մարմնոյ , ոչ է մի՝ տեսանելն զյաղեցուցիչ իւր համադամն , և ՝ձաշակելն . այսպէս ոչ է հաւասար լսել զբանս ՝ոյ , և ոչ խուզողական հանձարոյն որոնել . զի այսու պարարեալ բերկրի , և այնու՝ երբեք ոչ մխիթարի ։ Յաղագս այսր նախախնամողն ՝ուծ որպէս մարմնոյ ետ զանազան որակս պտղոց , և երանդս կերակրոց , որ բաւական էր մինն առ 'ի կեանս , զի յիւրաքանչիւրոցն առանձինն ձգեսցէ համեղութի՝ երանգոյ՝ և հոտոյ , և զուարճասցի ։ Ա.յսպէս և հոգւոյ ետ առաւել քան զնոյն կերակուր , զզանազան տօնս ՝ուծայինս , իւրաքանչիւրոցն խորհրդոցն որակք գունոց՝ և անուշահոտ բուրմամբ առանձինն ։ Օ ի՝ի ՝ձանաչելն զնոսա անյագ լինի փափաքմամբ խորհրդոյն՝ 'ի զուարճացուցանել զմտաստս մտացն քմաց ։ Պ ան որոյ և դուք որդիք եղեմայ՝ որոց ետ ՝ուծ զամենայն ծառ գեղեցիկ 'ի տեսանել , և քաղցր 'ի կերակուր , եկայք կթեսցուք այսր 'ի ծառոյն կենաց քանզի զպտուղ գեղեցիկ նորին համբարձման . և բերկրեալ ցնծասցուք

'ի

'ի վր գեղոյ նորա վայելչութե, անմահական համոյն քաղցրութե, և հոտոյն բերկրութե։ Որպէս զի որք բևեռաք ը նմին խոցեցաք, և 'ի գերեզման մտեալ երկնեաք, և զնորհուրդ յարութեն 'ի գողութիւն համբաւեալն՝ լուեալ վիտացաք. այսօր տեսեալ ըզնոյն ինքն յերկնից ճանապարհն ինքնիշխանութիւն ընթացեալ, հաստատեալ սրտիւ պարեացուք, և բարձրաբաղուկ 'ի վերայ թշնամեաց մեր ճախրեսցուք։

Որ ես անզեղջդ 'ի չարիս բանսարկու. ուր դու զոպարտիչ դատախազ. եկ այժմ կաց մեզ առընթեր. ոչ իբր զսիրելի, այլ իբրև զթշնամի։ Տես և ողբա յանձն քո. տես և յամօթ լեր 'ի գործս քո. տես, սա այն է որում զկաչն մեքենայեցեր. որում զլեղին արբուցեր. զոր գողացեալ համբաւեցեր. ահա ակներև յանդիմանն քեզ և ամենեցուն՝ ոչ զՀզօր և զկարօղ յերկինս համբառնայ։ Յայնժամ մեզ էր տրտմելի, այսօր 'ի վր քո ցաւք և երր բազմասցի։ Յայնժամ 'ի ներն մեր մահն՝ ը մեզ և տարերքս սուգ զգեցան. այսօր 'ի համբառնալն նորա, և օդ և երկիր պայծառացեալ չքնաղ ցնծութիւն ընդունին զնա. և պարք լուսաւորացդ խոնարհեալք աստիճանք լինին ստեղծողին իւրեանց, որ փոփոխեալ զդարշապարս անցանէ վերայ նց 'ի յերկինս։ Յամօթ եղեր հրապուրող մարդկան 'ի սեր աշխարհի, զի ակներև սլաւցեալ ըզգրաւականն մեր յղարկեմք օրհնութիւն 'ի յերկինս, և 'ի վր նորա ամրանամք։ Ո՛չ ևս այսուհետև գերութեն դու իշխես. զի գերեդարձն զմեզ յերկնից քաղաքն ածեալ ամրացոյց։ Տկարացար անհաւատութե տոռամբք զմարդիկ պատրել. զի առ հաւատչեայ հաւատոց մերոց՝ 'ի ծոցն հօր ոչ ելեալ բաղմեցաւ։ Ո՛չ ներգործեն այլ՝ դարանակալիդ մեքե-

քենայք զյուսահատուն։ Վա՛ զի բարեխօսն մեր ընդ
աջմէ հօր նստեալ քաւէ զԺողովուրդս։ Ո՛չ կարես
'ի չարախօսելն այլ՝ զլանալ զնրաւունս. զի որ ըզ-
փորձն էառ քո հնարիցդ, է փորձեցելոցս օգնա-
կան։ Սարջացիր գոնէ անագան 'ի չարեացդ,
քանզի արտաքս ձգեցար յիշխանութէ աշխարհի։
Տէս, մարմին և արիւն է՝ որ յերկինս ելեալ բազմե-
ցաւ. և առ իշխանութէն յերկինս և յերկրի։ Ա՛յլ
գիտեմք զի ամենայն թաքչիս։ Գիտեմք զի մերկ
խայտառակ եղեալ յիշխանութէդ նշաւակիս։ Գի-
տեմք զի նկուն եղև լեզուդ, որ զոքանչելիսն՝ բե-
եղզեբուղաւ ասել սովորեիր. և զվարդապետունն՝
հակառակ ՝ի այ կարծեցուցանեիր. և զյարուն գո-
ղութէն հրատարակեիր։ Ա՛ն զի այսօր այն գոր-
ծոյ կատարիչ ՝ոչ միայն յերկնից տայ նշանս, այլ
ինքն ընդ երկինս թեթև սլացեալ, մարմնով համ-
բարձեալ, հրեշտակաց զօրօք յղարկեալ, ընդ աջմէ
հօր նստեալն նշան լինի հաւատոց, և զօրութիւն՝
կոխել զքո խայթոցս։ Գիտե՝ և զդատակնիք
պատուհասին քում հաստատե՝. թոյլ տամք և ըզ-
մեքենայս քո քեզ ժողովել։ Թէ ախորժես՝ և խոր-
հրդակից քո զհրեայն զօրավիգն կոչել. զի՞նչ ու-
նիք առ այս զրպարտութէն բաջաղել, յայտնեցէ՛ք։
Ա՞արդ էր, և զիարդ առանց օգնականի թեթև
թռուցեալ ՝ի երկինս վերացաւ. ՝ուծ, և զիա՞րդ ՝ի
աշակերտսն կերակրոցն հաղորդեցաւ։ Տէ՛ս քաջ,
՝ուծ մարդացաւ, և մարդն ՝ուծացաւ. դու խայ-
տառակեցար, և հաղբք քո հրատարակեցաւ. ի-
րաւամբք և արդարութէ՛ դատեցար, և 'ի մարմնոյ
յաղթեալ ընկճեցար։ Օ՛, այսոսիկ առ բանսարկու
թէնամին 'ի դէպ մեր՝ մեզ 'ի սկզբանս բարբաւել.
և զմխանաւոր յաչաղօղն 'ի ժողովոյս մեր ամենայն
արտաքս վարել. և ապա զհոգևոր սեղանս բարե-

1 Կաղաւոն
2 Բանսարկու կամ սատանայ
3 հաստ և 4 Հոգու հանգիստ, Հոգեւոր զաղանդ

կամացդ սփռել. և զամենեսեան կերակրել։
Եւ արդ՝ զի մի վայրապար լիցի խորհրդոյս տե-
սութիւն, ժուժկալել աղաչեմ, և անտուստ 'ի վե-
րուստ իմանալ, թէ զինչ հարկ ոչ իջմանն 'ի յեր-
կիր. կամ այսօր՝ ուր էին՝ 'ի յերկինս փառաւոր համ-
բարձմանն. որպէս ոչն ինքն ասաց։ Ոչ ոք ելյեր-
կինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ, որ
էն յերկինս։ Եւ առաքեալն նորուն գրէ. որ էջն
նոյն է, և որ ելն 'ի վերոյ քան զամենայն, զի լցցէ
զամ։ Այլ թէ ոչ նախ զիջանելոյն պատճառս
քննեմք, անկարէ մեզ զելանելոյն խորհուրդն ճշ-
մարիտ իմանալ։ Եւ արդ գիտեմք այսպէս. ստեղծ-
ուած եմք ոչ, և պատուիրանին զոր առաք՝ եղաք
յանցաւորք. յանցեաք ոչ իբր զպատրաստն մեր կամաւ,
կամ առանց ստրջանայ։ Այլ զինչ. յետ պատրա-
նացն ապաշաւ. և յետ խաբէութիւն յանցուածոյն, և
մահու դատապարտութեան, 'ի վտարանդի ծառայութի
նորին զղջմամբ ապաշխարողք. ոչ այն որ ասէ։
Տառապեցայ և խնարհեցայ, ուստի և զօրհանա-
պազ տրտում գնայի. և բարկութեամբ ոչն համբե-
ցիս, զի մեղայ նմա, մինչև հանցէ 'ի լոյս զիրա-
ւունս իմ։ Եւ ապա առ ոչ. զարթո՛ զքնոյ թիւ
քոյ. և եկ 'ի կենցուցանել զմեզ. արի՛ ոչ օգնեա՛
մեզ, և փրկեա՛ զմեզ։ Եւ թէ՝ հոգի երեսաց մե-
ցոյ տո՛ր քո. ոչ հովանեաւ նոր կացցուք և ապրես-
ցուք. և հեթանոսք որ զօրէնս ոչ ունէին՝ քնութ
զօրինացն գործեցին։ Այսն այսորիկ տեսեալ ոչ
զաղաղակ 'ի նեղութեն տարակուսեալ քնութեն,
արդար իրաւամբք կշռեաց զողորմութեն իւր՝ ընդ
կիրս ապաշաւանաց մարդկան մոլորելոց. և նիւթ
առեալ զբնական թախիծ մտաց նոցա, ողորմ-
ցաւ։ Հրեշտեն օրինակաւ. ոչ եթէ զմեղանչական
քնութիւն յայլ էութեն տարազ յեղաշրջեաց. և

կամ

կամ տկարայեալ զգայուն՝ զդպրի պարգևեաց զօրութիւն։ Վասն զի թէ այսպէս էր, զղջումն ելեւեցուցանէր նմա վասն առաջին արարչութեն, որում անմարթ է հետևել նախահայեաց բնութեն. և զիարդ զոր 'ի բարի ստեղծեաց բարւոյ արարիչն՝ ունէր յայլ ինչ փոխել, բայց թէ զխանդ ախտիցն, ընդ որ յետոյ թաւալեցաւ՝ մաքրել։ Այլ զի անհնար եղև այս այլ ուստեք, ասէ առաքեալն. Ահ զորդին իւր առաքեաց 'ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և վասն մեղաց։ Որ 'ի զինչ կատարել գործ. որպէս զի մարմին զգեցցի, և ըստ իւրում էութեն՝ անմեղ զնա ցուցեալ, զմեղս կոխեսցէ. և զհայր մեղացն դատապարտեսցէ անմեղ մարմնովն, ամ մարմնաւորացս մեղաց պարտական. և զսկամայ գերեալքս 'ի նմանէ զերծուցեալ յառաջին հայրենիսն վերստին փոխեսցէ։ Այսպէս բարեկամքս ծանեաք զխորհուրդ ոն մերոյ, գեր 'ի վերոյ քան զծառայական օրինօքն վարժեալսն։ Ա՛ն այսորիկ դառնին ոչ պատարագելն, և աշխարհի մեղաց ջնջելն. ոչ զի անպարան՝ զպարտականացս մահու պատիժն հատուցեալ, պարտաւորքս սրբեալ՝ առ ահ բարձրացուք։ Ա՛ն այսր և բարկուն ամենահօրն զինչաւ 'ի հաշտուն. զի 'ի մէնջ խաղաղուն պատարագն։ Այս զիշխան աշխարհիս դատապարտեաց. և արդարութիւն իրաւամբքն արտաքոյ ձգեաց. զի 'ի մարմին և արիւն ըստ բնական կրիցն ընթացիցն՝ ոչինչ եգիտ յիւրոցն սերմանց։ Զաղագս որոյ ոչ թողաւ ոգի նորա 'ի դժոխս, և ոչ մարմինն ետես զապականութի։ Զի յորժամ եհաս 'ի դժոխս, եկն իշխան խաւարին, և ոչինչ եգիտ 'ի նմա յիւրոցն. ծանեաւ ապա՝ թէ ոչ ըստ պարտեաց, այլ ըստ կամայ հօր մեռաւ փոխանակ աշխարհի։ Ա՛ն այսո-

այսորիկ զարթուցեալ զարդար դատաստանն , ած
'ի վերայ պատրաղին զպարտեցելոցս ոպատիժ . մեր-
կացոյց յիշխանութիւնն և 'ի պետութիւնն , նշաւա-
կեալ զնա անձին իւրոյ անմեղութիւն ։ Լուսորտա-
կեալ զնիգս դժոխոցն՝ արձակեաց զկապեալսն ա-
սելով . որ 'ի կապանս էք՝ ելէք , և որ 'ի խաւարի
էք՝ յայտնեցարուք ։ Զի որ ինչեսդ 'ի գբի նա-
խահայր ադամ , զի խափանեցաւ մահու յաղթու-
թիւն . լուսատու լիցի քեզ քո՝ որ յարոյցն զքնուի
քո այսօր՝ 'ի յանեղծն կենդանութիւն ։ Զդ՝ զայս
մեծ և փրկագործ աւարտեալ 'ի մահուն իւր քո
զնորհուրդ , եկն յետ այնորիկ երևեցաւ աշակեր-
տացն իւրոց , և հաստատեաց զնոսա 'ի յոյս յա-
րութեան մարմնոյն իւրով ։ Լատես զնոսա , և ուրախ
արար զսիրտս սիրելեացն իւրոցն , ուրախութիւն՝
զոր ոչ ոք կարէ հանել 'ի նոցանէ յաւիտեանս ։
Յարուցեալ թէ այսպէս անմբռնելի մնայ 'ի մա-
հուանէ նա՝ որ ոչն ըմբռնի յապականութենէ մե-
զաց . և զմեզս մեր ինքն եբարձ 'ի խաչափայտին ։
Լկաց ընդ նոսա զաւուրս քառասուն . և ուսոյց
զարքայութենն այ անձառ գիտութիւն ։ Լեր և արբ ,
և հաստատեաց զյոյս յարութեան մարմնոյ յետ մա-
հու . շօշափեցաւ և տեսաւ , զի նոյն էր Զմա-
րիամ՝ որ 'ի խաչին խոցեցաւ ։ Լու այն՝ որ էջ 'ի
մեռեալս՝ և աղատեաց զնոսա , եկն առ կենդա-
նիսն՝ և մխիթարեաց զնս ։ Պարտ էր , զի ընծայ-
եսցէ այնուհետև զպատարագն՝ զոր առ 'ի յերկ-
րէ , այնմ՝ որ հաճեցաւ ընդ նոսիբրեալն նորա ։
Պարտ էր՝ զի 'ի ձեռանն որ ստեղծ զմարդն անա-
պական դիցէ զնոյն՝ նորոգեալ զ առաջին վայել-
չութենն ։ Պարտ էր՝ զի արքային որ առարկու ե-
լեալ թշնամեացն յաղթեաց , վիճակեսցի նատել
ընդ աջմէ հօր յաթոռ՝ քահանայապետ յաւիտե-

zarabaro

նից , և բարեխօս նմին քաւութիւն ։ Պարտ էր առ-
հաւատչէի յուսոյն մտանել 'ի յերկինս . որպէս զի
մարդիկ 'ի նոյն խարսխեալ՝ 'ի նոյն փութացին
օթևանս ։ Պարտ էր՝ զի որոց շրջիմք 'ի մէջ օձից
և կարձաց , և մահացու թիւնիւքն խոցիմք , լի-
ցի արեամբն իւրով սրբիչ . և մեծի հնորհաց
հոգւոյն ընձեռիչ ։

Յաղագս որոյ 'ի դէպ ժամանակի առեալ ընդ-
իւր զգուշդս աշակերտացն , եկ 'ի լեառն ձիթե-
նեաց . 'ի վայրն՝ ուր ուսան զձառս նորին թշնա-
մեաց , և ուր լուան զբանս չարչարանացն՝ և եր-
կեան , ծանուցեալ զփառաւոր համբարձումն բերկ-
րեցան ։ 'Ի լեառն՝ ուր տեսին զնա յաղօթս տա-
բակուսանօք , անտի տեսին զնա ալացեալ ըստ ամպս
լուսեղէնն փառօք ։ 'Ի տեղւոջն՝ ուր խոնարհ եդ
յերկիր զանծային երեսն արտասուօք , անտի վեր-
համբարձաւ հրեշտակացն օրհնութիւն և փառօք ։
'Ի պարտիզէն՝ ուր կապեցաւն նախատանօք , ան-
տի սաւառնեալ շքեղացեալ՝ ձանապարհ առնէր
ըստ ամպս գարշապարօք ։ 'Ի ձորն՝ ուստի փախեան
'ի նմանէ առաքեալքն վշտօք , անդանօր ժողո-
վեալ օրհնեցան յամենայն աջոյն պանծանօք ։
'Ի ձիթատանին՝ տրտմեալ ոչ կարէին տանել ըզ-
ձառս մահուն զարհուրանօք . անդ եբաց զմիտս
նոցա իմանալ զգիրս , զոր ելից հրաշալի իւր գոր-
ծովք ։ 'Ի կեդրոնեան ձորոյն՝ ուստի տարան ըզ-
նա 'ի խաչ սուսերօք , 'ի նմանէ ամբարձաւ 'ի կաւս
քրովբէից նուրբ հոգմոցն թևօք ։

Ո՞այրն՝ ուր խոցեցաւ յայնժամ 'ի նախատանացն
սայրասուր սլաքօք , այժմ տեսանէ զորդին իւր
թագաւոր պճնեալ պսակօք ։ Ո՞արիամ՝ որ ժո-
ղովէր զամ բանս , խելամուտ լիներ 'ի սրտին խոր-
հրդովք , ետես այսօր զելս ամ տարակուսանաց
իւրոց

իւրոց հրաշալանօք։ Եւ Ծնութեան՝ որում ակն ունէր որդւոյն հաւատովք, եղև ակնարկող այսօր ըզգալի իւր աչօք։ Թագաւորութեան՝ զոր խոստացաւ նմա հրեշտակն աւետեաց, նայեցաւ ՀՐՇՄարիտ՝ 'ի նստել անդբանկին յաթոռ բարձրելոյ հօրն փառաւք։ Սան այսորիկ ցնծայր, հրաշալեր, և այսպիսի ինչ 'ի բարձրանալն որդւոյն զկնի բարբառ արձակեր։ Այսօր սիրտ իմ հաստատեցաւ. և բերան իմ յարձակեցաւ 'ի վերայ թշնամեաց՝ ով անդրանիկ իմ և ՀՈՐ, որ կատուցեալ տատաներ 'ի քո յանձառն խոնարհութէ։ Այսօր բարձրացուցեր զգլուխս մեր քոյ փառաւք՝ որդի իմ և ՀՈՐ, որ լռութիւն կորանայր 'ի բամբասելն զկասութեն իմ յուռթի բժժանօք։ Այսօր պայծառացուցեր զդէմս իմ նշուլից հետոց ոտինդ ՀԱՌԱՔԱՅԹԻՒԲ, որ 'ի ժամ չարչարանաց քոց զդեցաւ սուգ՝ մթին ստուերօք։ Այսօր լցեր զկանխասաց բանս աղախնոյ քոյ սքանչելեօք. զի ահա յայսմհետէ տան երանի ինձ ՀՈՐ ազգք լիով բերանովք։ Այսօր ՀՈՐՀ ունիմ գաբրիելն ողջունին՝ զոր ետ աւետեաց. զի տեսանեմ զքեզ 'ի հրեղէն

Նորա դասուց պաշտեցեալ երգովք։

Օ այսոսիկ մայրն ՀՈՐ զկնի երից որդւոյն հնչելով, դառնայր ապա 'ի դասս սաւաքելոյն հաղորդս կոչելով 'ի ցնծութեն սրտին զնոսա։ Եվ պետրոս՝ ընդդէմ լռեաց. ահա հրեշտակք ակումբ առեալ եղանակեն շուրջ զվարդապետաւն քո զՀՐՇՆուիս. ՈՒՌ զգունդս քո, և խառնեսա՛ 'ի պարս նոցա. երգակցեա՛, տալով օրհնութեն այնմ՝ որ օրհնեաց զերկիր գալստեամբ իւրով, և պայծառացոյց զերկինս ընթացիւք իւրովք։ Մեծ մեծ 'ի վերայ ՀՈՐ երկրի սկնարկեմք զվերացեալն 'ի յերկրէ զՀՈՐ, շարժեցէք զլեռս ընդ բանակս զՀՈՐ թնոյն զո-

1 զգեցեալ
2 սանդարամետ

բաց՝ սաղմոսելով նմա գովութիւն։ Դաւիթ այժմ զնոյն տեսեալ համբարձեալ օրհնութիւն, և զնոր ձեր ձայնիւ փողոյ հրեշտակաց, խրախոյս տայ ձեզ սաղմոսել նմա քաղցրաձայն. և ահա անփոյթ արարեալ հրամանին՝ պակուցեալ պշուցել ընդ գնացսն նայիք։ Զդդ ահա արտափայլէ 'ի փառաց նորա. և երկինք խոնարհի ընդ ոտիւք նորա, և բարձեալքն նորին բանան զդրունս մտից նորա. դուք մինչև ցո՞ր վայր պշուցեալ՝ կամիք տեսանել զընթացս նորա։

Եւ նոքա պշուցեալ հայեին ընդ երկինս երթալոյ նորա, սքանչելի ինն հիացմամբ սոսկացեալք 'ի յանձինս։ Օ՛ի թէպէտ և տեսօղք եղեն սքանչելեացն, խորհրդակիցք յարուցեն. սոսկայն տեսչութի կամայն ծածկեաց զորքանուն փառաց իւր 'ի նոցանէ, առ 'ի համարձակ ընդ իւրև շրջել։ Զանոր սյն պետրոս՝ որ դաւանեաց զնա որդի ՝ոյ, և ետես զհաւատ դաւանութենն 'ի թափօր, սասանեցաւ 'ի չարչարանսն, և շաղփաղփ բանս կարծեաց զաւետիս յարութենն. և յորմէն ըզլոկ կտաւան մնացեալ՝ գողացեալ զյարուցեալն հաւատաց, առ 'ի յոչ գիտելոյ զգրոյ զօրուն։ Եւ նոքա յետ տեսանելոյ զնա յարուցեալ՝ և շօշափելոյ ձեռամբ թումայի, զի՞նչ. զուռկանսն առեալ դարձեալ 'ի գործ որսոյ ձկանցն ընթացաւ, մոռացեալ զասացեալն՝ թէ այսուհետև զմարդիկ 'ի կեանս որսայցես։ Որոյ առընթեր կացեալ՝ մանկունս ՝ոն պառնայներ. մանկունք, միթէ ունիք ինչ ուտելոյ. և ասա տուեալ զքանչելի պտուղ վաստակոյն, եկին և ՀՀաշեցին 'ի միասին, գիտելով զի ՝ոն է. և ո՛չ իշխեին հարցանել՝ զի մի՞ որպէս առ կոպեանսն աներևութացի փափաքելին 'ի միջոյ։ Այս ո՛յս որպէս. զաւուրս քառասուն բաղում նշանօք՝

որ

1 Ոչ սաղբարանաւ

որ ոչ գրեցաւ, դատիարակեաց վնասս. և ա-
ռեալ 'ի գալիլեայ ած յերուսաղէմ և ասաց. այս
բանք են զոր խօսեցայ ընդ ձեզ նախ քան զչար-
չարանսն, թէ պարտ է լնուլ գրելոցն յօրէնսն մով-
սէսի և 'ի մարգարէս՝ և 'ի սաղմոսն վասն իմ.
և բացեալ զմիտս նոցա իմանալ զգիրս։ Իսկ յայն-
ժամ որպէս 'ի քնոյ զարթուցեալ դասք առաքե-
լոցն, տարածեալ ուսելով առաջի իմանալի աչաց
զբանս մարգարէիցն մեկն և պարզ գիտութեամբ՝
աքանչանային հիացեալք յանձինս՝ ել զարմանալի
իւրեանց պատահումնն։ Օ իարդ սա՝ առ որ հայ-
եցեալ մուխս ասաց, կեանս մեր կախեալ զփայ-
ատ, մեք որպէս զմահկանացու մարդ համարեաք։
Ինդէր ժղրհեցաք զառ 'ի յեսայեայ բազուկ օր
անուանեալս, և առ մեզս մեր մատնեալ. յերե-
միայ՝ հոգի երեսաց պատմեալ, և փայտ 'ի հաց
նորա արկեալ. 'ի մաղաքիայ՝ արեգակն արդարու-
թեն կոչեալ. և բժշկութի 'ի թևս բարձեալ. որ-
պէս զընկեր մի դոյզն հասարակաց կերակրոյ և
ըմպելւոյ կցորդ ունել։ Ի.հա սա է, վնչ ասաց
գաւիթ. աթոռ քո ած յաւիտեանս յաւիտենից.
և քո են երկինք՝ և քո է երկիր. և մեք կենցա-
ղակիցք սորա համարձակեցաք լինել՝ և խօսակից։
Ի.ս այնուհետև սկսան յայլ դէմս կերպարանաց
պատիւ ոն և վարդապետին առնել. 'ի նայելն ել
նա զարհուրելին, յիշելով զթև ասքողեալ սերով-
բէն։ 'Ի խօսելն պատկառելին, զմտաւ ածեալ ըզ-
պաշտօնեայ զուարթունքն։ Լսել ել նմա զիարդ
էր յայնմ հետէ ժպրհելն, զոր 'ի ծոց հօր նայելին
յաթոռ փառացն բազմեալ։ Սերն բորբոքեցաւ
'ի սիրտ նոցա նորոգապէս. և երկիւղն խորշեցու-
ցանէր 'ի սիրելւոյն սքանչելապէս. և մինչ ակն
ունելին ընդ նմա յերկար ժամանակս լինել, և

արժանատէս հպատակութիւն զառաջին սխալանսն
բժշկել, առ զնա, և ընթանայր 'ի քաղաքն ան-
տի 'ի բեթանիայ։ Լորոգ բորբոքեալ սիրով և
տեսութիւն ընդ նորոգ տեսիլ ածութեն, յայսկոյս
յայնկոյս ընթանային ամօթխածութիւն, և հայէին
'ի դէմս նորա անյագ փափագմամբ։ Լրանի մեզ
այսուհետև ասեն յաշակերտուին, և ցնծասցուք
'ի նորոգ գիտուին։ Լհա ամ մարդարէքն 'ի բանս
իւրեանց՝ իմանամք՝ զի սմա ցանկային. և մեք
եղբարք 'ի փափաքանս նոցին վայելեմք։ Լու զայս
խանդաղակաթ սիրոն ընդ միմեանս 'ի Ճանա-
պարհին, հասին մերձ 'ի բեթանիայ։ Այնժամ
համբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա. և ան-
դէն փութանգ մեկնեալ՝ սկսաւ վերանալ յերկինս։
Լակ նոքա սրտաթափ յուսակտուր խոնարհեալ,
զերկիր համբուրեալ՝ շնորհ ունելով օրհնութեն,
յարուցեալ փութապէս և երագ պշուցեալ նայե-
ին ընդ երկինս 'ի յերթալն նորա։ Լու ձայնէին
առ միմեանս. զինչ էր պատահմունս, որպէս ըն
Ճանաչելն զՃշմարտուին՝ և անծանօթացաք. որ-
պէս ընդ յայտնելն զորպիսութի փառաց իւրոյ՝
գտաւ փափաքելին 'ի մէնջ թաքուցեալ. զիարդ
յորժամ սկիզբն արարաք զգուշութիւն պաշտելոյ,
գտաւ պաշտեցեալ վարդապետն 'ի մէնջ վերացեալ։
Լորև զմի օր համարեալ է մեզ ժամանակն, յորս
տգիտուիք շրջեցաք ընդ նմա. ահա եկն օրն՝ յորս
ցանկամք տեսանել մի յաւուրց քոց, ով որդի աստ
և մարդոյ, և ոչ տեսանեմք թշուառական ա-
շակերտքս։ Լու ասպա յիշեալ ումն զգեղջն վայել-
լութի՝ հոգւոյ ելաներ։ Լայլ ումն զբանիցն քաղց-
րութի, և ինքն ըն անձին իւրում ոգորեր։ Ամ իսն
զչարչարանսն զոր կրեաց անպարտ, և 'ի յիշատակ
նորին հեծեծէր։ Լումն զչուՃելն ընդ երկինս աղօտ
ակն-

անկարկեալ՝ ձեռամբ մատուցեալ ընկերին իւրում
ցուցաներ։ Եւ որչափ նա բարձրացեալ 'ի բացեայ
'ի ստորնայնոցս լիներ, սոցա յակձիռս եղեալ 'ի
նկատելն՝ աղէտ սիրոյն տուչորեր։ Եւ զի ելք փա-
փաքանացն ընդ մարդկային հնարս արտաքս ելա-
ներ, միայն զանթարթափ պչնուլն աչօք իւրա-
քանչիւրոք սփոփանս անձին համարեր։ Եթե
միւսն լքաներ 'ի աչսուէն, յորժամ ընկերն վերա-
տին զնոյն նմա նշանակեալ ցուցաներ, որպէս յան-
մահուն ուրախութեն փոխեր։ Թէ այլ օր ձկտեալ
կորովն բբօք զչուռեալ նորա նշմարեր, ամենեցուն
աչք ընդ նմին յուսով յուղերձեր։ Աղցր էր նո-
ցա պչնուլն ընդ երկինս ընդ երկար ժամանակ,
թէ ոչ ամպն 'ի ստորև մնացեալ զդեր 'ի վերոյ ե-
լեալն ծածկեր։

Այլ զի այս եղև փութապէս, և էր աշխատուն
նոցա 'ի պչնուլն ընդ երկինս մեծապէս, եկին
հրեշտակքն բարեկամք՝ կրկին երևմանն յուսով
սփոփել զմիտս նոցա։ ԵՒ յաշխատութենէն ընդ եր-
կինս հայելոյն դադարեցուցանել։ Այլ դալիլեա-
ցիք, այժմ զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս՝ անչըբ-
պետութիւն ամպոյդ որոշեալք 'ի սիրելւոյն։ այս յո-
ր վերացաւս 'ի ձէնջ՝ սոյնպէս դարձեալ եկեսցէ։
Այլ՝ դարձիք սպասեցէք սորա կրկին դալստեանն,
զի հանդերձեալ էք վերատին տեսանել զսա եկեալ
փառօք։ որպէս և այժմ համբարձեալ։ Պատուա-
խանեցին։ ԵՒ զի՞նչ լեցուք աշակերտքս յանկարծ
բաժանեալք 'ի վարդապետէն։ Զղիսկ՝ զի զպաց
կանխաւ զեղիայի վարդապետին իւր վերանալն,
կրկին զհոգին որ 'ի նմա՝ խնդրել ընկալաւ։ Պ՝եղ
զի՞նչ տայք միութեար ոչ զուարթութիւնք՝ 'ի տրտմութե
և 'ի ցնծութե միջի վարանեալ աշակերտացս։ ղն-
ծութի՝ զի տեսաք զնա յայնպիսի փառս ձոխա-
ցեալ։

ցեալ. և տրամութիւն՝ զի ստորև 'ի նմանէ եղաք ասա մնացեալ։ Ակսան ապա նոքա սփոփել զմիտս նոցա՝ և ասել. արք գալիլիացիք մի՛ հիանայք՝ այլ ցնծացէք. զի գայ համբարձեալս 'ի յերկիր, և պատկէ զամենեսեան զձեզ 'ի նորոգութի՛ յարուցեն հրաշապէս։ Ա՛յ է այս սքանչելի, զի տեսեք զայս յո՛ 'ի յերկինս համբարձեալ. այլ յորժամ տեսանեք զնա յերկնից յերկիր հայրական փառօք ստորիջեալ. յորում երկինք գալարի, և երկիր տագնապի. հրեշտակք թափուր թողեալ զերկինս՝ ընդ նմա իջանեն. և դուք 'ի գերեզմանացն թռուցեալ ամպօք ընդ առաջ ընթանայք։ Ա՛րք գալիլիացիք՝ զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս, համբառնալս յոի զոր տեսանէք՝ ո՛չ է ըստ ածային փառացն, այլ ըստ մարդկային խոնարհութենն։ Զանգի ահա դուք միայն տեսօղք ելիցն նորա. ո՛չ սպասաւորք յառաջընթացք, ո՛չ գոչումն փողոյ կարապետ, ո՛չ կառք քառադէմն. ո՛չ հրեղէն անիւք պատուանդան. քանզի 'ի սեպհական հայրենիսն երթայ։ Ա՛յլ երևումն տեսանելոց էք զնորա սքանչելի, յորժամ գետք հրոյ ելանէ առաջի նորա՝ ընդ իջանելն. յորժամ պատմեն երկինք զվայելչութի՛ նորա, և տեսանեն ամ ժողովուրդք զփառս նորա. յորժամ հազարք հազարաց պաշտեն զնա, և բիւրք բիւրուց կացցեն առաջի նորա. յորժամ հնչումն զօրաց նորա դղրդէ զերկիր, և ձայն փողոյ աւետեաց նորա զարթուցանէ զմեռեալս. յորժամ խաչ նախատանաց նորա Ճառագայթից արեգականդ յաղթէ. և վերք ձեռին նորա զհայեցօղ թշնամին սուզէ։ Ա՛հա տեսէք թէ ո՞րպէս սլացաւ, և զոդս թեթև ընթացիւք իւրովք սքանչելապէս կոխեալ բարձրացաւ. և 'ի մարմնական աչաց ձերոց ստորակայութի՛ամ-

1 ստորագնաց

ամպոյդ ծածկեցաւ։ Լ.ըդ՝ այժմ բացէք զիմա-
նալի աչս մտաց, և յառեցէք 'ի յերկինս՝ ուսա-
նել խորհուրդս անպատումս։ Զանգի ահա իշ-
խանութիւնք հրեշտակաց՝ ցնծութիւն եկին նմա ընդ
առաջ. ոմանք զդրաւնս աւետարանեն համբառ-
նալ. և ոմանք զթագաւորին հարցանեն ուսանել։
Յերքինքս անուանեն զնա թագաւոր փառաց. և
վերինքն տարակուսին, թէ ո՞վ է սա թագաւոր
փառաց, որ ելեալ երկինս Ճանապարհ 'ի յերկրէ ա-
ռանց օգնականի՝ ինքնիշխանութիւնն հաղորդեաց։
Գաբրիէլեանքն աղաղակէին, Ո՞ր զօրութիւն իւրով՝
տի կարօղ 'ի պատերազմի. և միքայէլեանքն հիա-
նան, և զի՞նչ դիմիր ունի հանդերձ զ'ի գոյն ա-
բեան և մարմնոյ։

Լ.սօր այլայլեցաւ սովորութի կարգաց հրեշտա-
կաց. զի վերինքն ուսանին, և ստորինքս վարդա-
պետեն. քանզի ՝ծ 'ի ստորնայնոցս 'ի վեր ելա-
նէ, ձեր փրկութիւն աղագաւ խոնարհեալ։ Ա՞ՆԾ
է առ երկնաւորս այժմ փրկութիւն ձեր ուրախութի.
զի ահա զխորհուրդն մարդեղութեան՝ այ, որ ծածկեալն էր յաւիտեանցն և յաղագս, այժմ յայտնապէս տեսանեն. և շուրջ զնովաւ պարս բոլորեն։
Տ՚ր ամենակալ՝ աղաղակէին, մինչև յերբ ո՞չ ողորմիս վերինս երուսաղէմի, և քաղաքացն դրախտին. ուստի արտաքս ձգեցեր գերի զանակիչն զադամ, և անտես արարեր թողեալ ամայի այս եօթնեակ դարուց եօթնից։ Լու լուսան այսօր պատասխանի՝ բանս բարեաց և միխիթարութեան, զի ասէ. փրկեաց զնոսա բազուկ իմ, և սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ։ Ցնծան և հրճ-
ուին նահապետութիւնք հրեշտակաց՝ յղաբերկաւորք
եղեալք առ 'ի ձէնջ համբարձեալ արքային. և
նչէն առ վերհաղոյն իշխանութիւնս և պետութիւնս՝
երա-

երագել հորդել նմին Հանապարհ։ Համբարձէք զդրունս ձեր 'ի վեր, համբարձէք ասելով նահապետութիւնք երկնայնոց, զի մտցէ փառաց թագաւորն՝ որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի։ Համբարձէք քրովբէք հրաբերանք զհրեղէն սրով դրունս առ 'ի ձէնջ պարապեալս, զի մտցէ թագաւորս պսակեալ խաչի փայտիւն կենաց։ Համբարձէք սրովբէք վեցթևեանք զդրանդիս դրանց երկնից խորանայ. զի մտցէ նստցի յաթոռն փառաց որդին ծոցածին սրտի հօրն սիրած։ Իսկ նոքա հարցանեն. ո՞վ է սա թագաւոր փառաւոր գիմեալ յերկրէ, այսինքն յեգիպտայ. շքեղ կարմրազարդ յազգէ բոսորայ, անաղտ պատմուհանի մարմնոյն գեղն ցոլանայ. և բուռն զօրութիւն ը երկինս ընթանայ։ Լութեամբ յօդաւոր բնութիւն նիւթական, զիարդ միայնակ ընթանայ առաջի ձեր, և ոչ հրեղէն կառօք և հեծելոք օգնեալ։ Լուեալ պարզ բնութիւն անմարմին՝ կարմրաներկ պատմուհանաւ մարմնոյ, որպէս զարդարեալ իբր զիեսայ ընդ առագաստ երկնից սիգալով ընթանայ։ Լուսուցէք մեզ ո՞վ վերակացուք մարդկան աղգի՝ դասք հրեշտակայ. ո՞վ է այս թագաւորս՝ որ ծագեաց իբրև զառաւօտ, գեղեցիկ որպէս զլուսին, ընտիր իբրև զարեգակն, իբրև զհիացումն կարգեալ։ Պիտեմք և զայլս 'ի մարմնաւորաց ելեալս 'ի յերկինս, բայց ոչ այսպիսի բուռն զօրութիւն։ Լնովք յորժամ փոխեցաւ առ մեզ՝ դուք եղէք նմա վերբերողք։ Լզլիայի 'ի ներքոյ զձեզ տեսաք կառս և երիվարս հրեղէնս լծեալս. փոքր անկար է մարմնոյ՝ ընդ թեթև շաւիղս անմարմնոցս կոխել։ Իսկ այս թագաւորս, ո՞վ է որ ելանէ յերկրէ՝ զգեցեալ ծիրանիս՝ պսակեալ խաչի՝ պաճուճեալ արեամբ՝ մարմին նիւթական՝ գեղով վայելուչ,

լուչ , բուռն ընթանայ անմարմնոյդ առաջի ։
Մարդ է , և առանց օգնականի չուէ ։ Լրիւն է
զգեցեալ , և զհետս անարեանց համարձակ ըն-
թացուք կոխէ ։ Յեղեմայ գայ և յերկրէ , և
բուռն զօրութիւն զերկինս գողացուցանէ ։ Որանց
ոչ կարօտանայ բանալոյ , զի ահա բանիւ զսուսա
տապալէ ։ Սակայն թէ ով է պա՝ ուսուցէք մեզ
ովվ հրեշտակք , որոց և մեք միշտ զխորհուրդն ոյ
'ի սատրև հեղեալ ցուցանեմք ։

Յայնժամ սկսան նոքա զայս ասել . Որ զօրութեց
և երկնից է սա , թագաւորն՝ որոյ դուք սրով-
քեբդ աղաղակէիք . սբ սբ սբ Տր զօրութեց , լի
են երկինք և երկիր փառաբ քոյ ։ Տէր փառացն է
սա , որում դուք քրովբէբդ երգէիք . օրհնեալ են
փառք ան 'ի տեղւոջէ իւրմէ ։ Լրքայն է սա յաղ-
թող՝ որում դուք չորեքդիմի աթոռքդ՝ հանգիստ
փառացն լինիք ։ Սա երևեցաւ յերկրի մարմնով ։
և արդարացաւ հոգւով , հաւատարիմ եղև աշ-
խարհի . և դարձեալ գայ յերկինս փառաբ . և զի
ոչ խանարհեցաւ յերկիր որպէս զմարդ՝ գոլով մարդ ։
ոչ կարօտանայ բարձրացուցանողի ընդ երկինս՝
գոլով ճշմարիտ աստ ։

Լու մինչդեռ հրեշտակք և հրեշտակապետք , և սե-
րովբէքն և քերովբէքն սկսեալ զայսոսիկ խօսէին ,
ինքն որ առաջի ընթանայր , ակսաւ ընդ առաջ
եկեալ վերնոցն դասուց՝ զայս պատասխանել ։ Լ՚ս
եմ որ խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկու-
թիւն ։ Լ՚ս եմ որ իրաւամբք և արդարութիւն յաղ-
թեցի , և կոխան զթշնամին հակառակամարտ ա-
ռարի ։ Լ՚ս եմ որ զգերեալ ազգ մարդկան փրկ-
կեցի , և դարձեալ զայս նոցին յերկինս ուղղե-
ցի ։ Լ՚ս եմ որ զթշնամուն 'ի մարմին իմ սպա-
նի , և զխաղաղութիւն յերկինս և յերկրի արարի ։

Եւ զի՞ կարմիր են ասեն՝ պատմուձան քո, և հանդերձ քո իբրև զհնձանահարի՝ լիոյ հնձան կոխելոյ. այսինքն թէ՝ այդ գործ ոչ էր մարմնաւոր բնութիւն կարելի. իսկ ՅԾային զօրութիւն քոյ ամենայն հնարաւոր է։ Եւ զի արարեր զայս ամենայն ՅԾապէս՝ հաւատամք. մարմնոյ հանդերձ աբրիւնոտ ընդէր զգեցեալ ես 'ի վերայ ՅԾութիւնդ փառաց, և բոսորատիպ գունովդ զնոյն պատուական։ Եւ զանգի և մեք բազում պատերազմունս մղեցաք. մինս 'ի մէնջ հարիւր ութսուն և հինգ հազար անձն յասորւոյց սատակեաց. և երկուս՝ զսոդոմայեցւոյց քաղաքն հրդեհեաց. և զի կարելի է՝ աքանչելի գործ յերկրի անմարմնոյ զօրութեց՝ հաւատամք, բայց դու ահա զի տկար պատմուձոնաւդ վանեցեր զմեծամեծ մարտս՝ հիանամք, և զյեղանակ բազմապատիկ իմաստիս քոց՝ ուսանել ըղձանամք. յայտնեա՛ իշխանութեց և պետութեց երկնայնոյց զնորոգ արուեստի քոյ իմաստս, ՅԾ մեր և տեր։

Ա՛յլ թէ որպէս դուք կարծէք ասէ, ՅԾային զօրութիւ՛ն իմ, ո՞վ երկնաւորք՝ 'ի գլուխս ածեալ ըղմարդկան փրկութի՛ն ուղղեցի. և ո՛չ թէ կառք և երիվարք հրեշտակացդ ինձ 'ի մարտս պաշտպանեցին. և ո՛չ թէ փրկեալ ինև հեթանոսք՝ 'ի փրկագործութենն վաստակ օժանդակեցին։ Ա՛յլ փրկեաց միայն բազուկ իմ. և սրտմտութի՛ն արդարութե մարմնոյս իմոյ միայնակ առանձինն կացեալ ընդդէմ՝ կոխեաց զթշնամին։ Ա՛իայն 'ի լեառնն պեսպէս փորձութեցն յաղթեցի, և զադամայ պատրօղն՝ 'ինոյն հնարս կոխեցի։ Ա՛իայն ընդ մաքսաւորսն ՅԱշակեցի, և 'ի ՅԱնապարհս վաստակեալ քրտնեցի, և 'ի սուգ սիրելեացն լացի, և զմարմինս բնական կրիւքն արդար պահեցի։

1 Ն Կրաշնաւ ռնիկաւ

ցի։ Մ'իայն 'ի խաչին չարչարանս դիմեցի, և յերկիւղէ մահուն սարսեցի, և կամաւ զնոյն կրեցի, և զիշխան աշխարհի իրաւամբք դատապարտեալ արտաքս ձգեցի։ Մ'իայն 'ի պիղատոսի յատեանն կացի, և կատականացն արհամարհեալ զամօթ ժուժեցի, և յերկոտասան բիւրուց ձեր զոք ինձ 'ի թիկունս չածի։ Մ'իայն 'ի փայտ խաչին հեղուսայ, և զգիրս մարգարէիցն լցի, և զպատմուճանս իմ յարիւն իմ թաթաւեցի, և զթշնամին՝ կոխան ոտից իմոց եդի։ Օէն ոչ առի 'ի ձեռս զհրեղէն ձեր սուր, այլ տկար մարմին։ Պահան՝ ոչ զաննիւթ ձեր բնութիւն, այլ արիւն թանձրամած. և այսպէս պատերազմեալ յաղթեցի աշխարհի։ Պ'ը այսորիկ արդարութիւն իմով և կամաւոր մահուամբ՝ զմեղայ մարդկան զմեւրհակն պատառեցի. և այժմ եկանեմ նստել ի աջմէ հօր, քարեխօս և քահանայ հօտին իմոյ, զոր պատուհասկան արեամբ իմով գնեցի։

Օ այս լուեալ գունդք հրեշտակացն՝ սքանչանային ընդ անհաս խորհուրդ բազմապատիկ իմաստութեան նոյ. զի մինչև ցայնժամ ոչ տկարութիւն և խոնարհութիւն գիտէին զնա յաղթող, այլ կարողութիւն և փառաք. իսկ այժմ ուսեալ ոչ միագիմի զիմաստս նոյ, այլ բազմապատիկ։ Օ'ի առ՝ փոխանակ կարողութեանն զտկարութիւն. և փոխանակ զօրութեանն՝ զխոնարհութիւն մարմնոյս, և յաղթեալ պատանայի իրաւամբք և արդարութիւն։ Պկսան ապա նոր երգանակաւ զերգս նմին վերերգել. և զմարդիկ 'ի կցորդութի օրհներգութեան իւրեանց ժողովել։ Օ'ապէս հարեալ ասեն՝ աղգք հեթանոսաց՝ համաձայն քաղցր երգոցս հրեշտակաց. և աղաղակեցէք ընդ մեզ՝ փառաց թագաւորիս 'ի ձայն ցնծութեան գովութեան օրհնութեան։ Օ'ի թագաւորեաց 'ի վերայ ամենայնի իրա-

1 որ սեռեաց ասեն

իրաւամբք և արդարութիւն, և հնազանդ սրտիր ըղձեալ ընդ մեզ՝ աւետարանաւն խաղաղութիւն։ Օ՛ի զինեաց յերկինս զհամբառնալ իւր ՝ի ծածկեալս զօրութիւն, և հաստատեալ յերկիր զաւետիս իւր՝ առհաւատչեալ մարմնոյն վերացմամբ։ Դարձիք նրստարուք յերուսաղէմ մեծաւ խնդութիւն. և սպասեցէք զգենուլ զօրութիւն 'ի գալ հոգւոյն սրբոյ 'ի բարձանց։ Զ՛հա մնանէ քահանայապետս առ ՝ի ծածկեալս պատարագաւն հաշտութիւն, և առնէ խաղաղութիւն ընդ ձեզ հոգւոյն սրբոյ առաքմամբ։ Զ՛ատի բարեխօս ընդաջմէ հօր հանապազորդ մարդկան քաւութիւն, և առնէ խնդրուածս վասն ձեր փրկութեան։ Զ՛այր՝ կամիմ զի ուր եմն եմ 'ի ծայրագոյն գահոյս վերոյ ՝ամ անուանեալ, մոցէ եկեղեցի իմ տեսանել զփառս զոր ստացայ՝ ընդ խաչի չափ քեզ հնազանդութիւն։ Զ՛այր՝ կամիմ զի անդամք իմ որ 'ի ստորին վայրս ցնդեալ կան, բարձրացեալ յօդեսցին 'ի հասակ մարմնոյ իմ լրման։ Զ՛այր՝ զորս ետուր ինձ գինք արեան՝ ժողովուրդ սեփհական, սիրեցի 'ի չափ սիրոյ քոյ ընդ միածնիս հաճութեան, և բարեխօսեմ ածել զնոսա 'ի պատիւ փառացս իմ հաւասարութեան։

Ո՞վ մեծի շնորհիս, ո՞վ անձառ երախտեացս, ո՞վ անկշռելի երախտեացս. որում արժանի գտար եկեղեցի 'ի համբառնալս քոյ. զի ՝ամ 'ի մեր կոյս է, և ո՛չ ոք է մեր հակառակ։ Զ՛այր արդարացոյց զքեզ միածնին արեամբ ձրի շնորհօք, և նովաւ հանդերձ այսօր զերկինս ամենայն երկնային փառաքն շնորհեաց քեզ։ Ո՞վ դատապարտե զքեզ կոյս սէ՝ որ խօսեցար հարսն քոյի, և յանդիմանն կացեր նմին հաւատով։ Յորժամ ՝ամ ըզքեզ արդարացոյց, և ընդ նմին յարուցեալ յերկինս նստոյց. յո՛ քո՝ մեռաւ վասն սիրոյ քո՝ և

յարուցեալ եւ այսօր յերկինս , և նստաւ ընդ աջ-
մէ հօր բարեխօս վասն մեր . զի՞նչ է յերկրային
հեշտութիւնն՝ որ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ նո-
րա : Լա՛ց զաչս քո , և տես թագաւորին քո ըզ-
փառս . և 'ի նոյն փութացեալ երագեա : Լ՚ուկ 'ի
բաց զքօղ տգեղութիւն երկրաւոր սահեցման , և
մուտ ընդ յոյսն քո՝ 'ի ներքոյ վարագուրին տա-
րածման : Խարիսխ քո յերկինս . դու ընդէր 'ի
ստորինս կորանաս : Մ՚ագաւորն քո՝ յաթոռն փա-
ռաց և շնորհաց . դու ընդէր մնաս՝ զ առաջի նո-
րա հեղգանաս : Կարապետն յո՝ զերկնից դուռնն
այսօր մտեալ՝ քեզ եբաց . ժողովուրդ նորա և
հօտ , ընդէր ՀՀմարիտ Հանապարհաւն՝ առ նա
Հանգչել յուլանաս : Լ՚ստի օ՚ն հրաւիրեցար գնալ
'ի յերկրէ յերկինս , յապականութենէ յանապական-
նութիւն , 'ի միջոյ կարՀաց 'ի հրեշտակաց դասակ-
ցութիւն : Դարձիր յունայնութենէ , և կացո՛ զոտս
քո յուղիղ պողոտայն . զի գնացեալ ՀԷ նոյն այժմ
հաւատով , արժանի լինիցուք յետ ելիցն աստի՝
երկնային տանն օթեվանացն հոգւով , և յաւիտե-
նական կենացն 'ի հանդերձեալ գալուստն մարմ-
նով : Շ՚նորհօք և գթութիւն՝ տն մերոյ յՅի քնի .
ընդ որում՝ հօր ամենակալի և կենդանարար սՀ
հոգւոյն 'ի մի փառս , 'ի քնութիւն , և յանծութիւն
վայելէն պատիւ և իշխանութի այժմ և յաւիտեանս
յաւիտենից : Լ՚մէն :

Ղորին երանելոյն Ներսէսի՝ Ներբողեան ասացեալ 'ի Հրաշալեաց գալուստ Հոգւոյն սրբոյ։

Սիրելիք 'ի Սիրոյն Սրտիս Բարձանաց՝ նուիրել զբանս աղքատ մտաց իմոյ՝ աւուրս մեծի։

Հանգանակեցէք տկարութիւնս իմոյ զպարգևս աղօթիւ՝ հանդիսացեալ ժողովուրդք։ Տուք ինձ զաւուրեանս այսօր շնորհս աշխարհի. որպէս զի անվեհեր արկից զանձն իմ 'ի խորս իմաստից գիտութիւնն այ, և սեղանաւորեցից զանապական կերպարուր՝ հոգւոյ պարարիչ։ Զիր առատ հեղեալ այսօր յերկրի. մաղթեսցուք նշուլից նորա ճառագայթել 'ի հայեցուածս մըտաց մերոց, և առաջնորդել ընդ շաւիղս ճշմարտութեան։ Որ սքանչելեացս. զոր ցանկային ընդ աղօտ ակնարկութիւն նկատել հրեշտակք, այսօր շնորհօք ինչեալ՝ 'ի ստորին գաւառս սփռեցաւ։ Լու ոչ ոք ոչ յուսացի՝ հաւատով 'ի պարգևս նորա վայելել։ Հոգին սքանչելի՝ որում բերանաբաց կալով 'ի փափագմանն դասք սերովբէից և քերովբէից՝ զորքանութիւն նորա ոչ կարացին նկատել, յայսմ աւուր իսկապէս ինչեալ յագեցոյց ըստմարդիկ 'ի գիտութիւն անճառ խորհրդոց իւրոց։ Ընդ որս և ես ասասեմ յառատութենէ նորա կաթիլս իմաստից ընդունել։ Լրդարև ձգեաց 'ի փայտն կենաց մարդն զձեռն իւր, որ յառաջն 'ի

բաց

բաց առաքեցաւ 'ի նմանէ. առ Եկեր, և զյա-
ւիտենականն անձին սեպհականեաց զկենդանու-
թիւն։ Եւ ո՞ այսր շնորհի միջնորդ և մատակարար,
ով այլ ոք, բայց եթէ տէր մեր յս քս. կեանքն՝
լոյսն՝ ճանապարհն՝ դուռնն՝ հովիւն՝ քահանայա-
պետն՝ միջնորդն՝ յոյսն՝ բարեխօսն, և կարապետն։
Որ անց ընդերկինս երկնից ինքնիշխան զօրութ, և ե-
մուտ հրաշափառապէս 'ի ներքին կողմն վարագու-
րին անձառելի հիացմամբ. և եդ յանդիման նոյ
հօր զառհաւատչեայն 'ի մարդկանէ բարեխօս վասն
մեր. ուստի առեալ փոխարէն զձիր առատ՝ տա-
բաժեաց 'ի յերկիր։ Յորմէ զմայլեալ արբեցաք,
և զերկուսն տրտմութեամբ նախամօրն յաւէտ մո-
ռացաք։

Ի. յսօր խաւարաւ պատրանաց աշխարհի ընկլու-
զեալ՝ ընկալաք զլոյսն իմանալի պայծառացու-
ցիչ հոգւոյ՝ և առաջնորդ յերկիրն կենդանեաց։
Ի. յսօր զզգեստ թախծութեան՝ զոր ընկալաք 'ի հօ-
րէն մերմէ ադամայ՝ մերկացաք. քանզի նորն
ադամ զարդարեաց զմեզ յոսկեհուռն պատուական
և պսակեալ։ Ի. յսօր հուր աքանչելի՝ երկնաւոր
բոցաձաձանչ նշուլիւք արտափայլեալ 'ի յերկիր՝
այլայլութք արծարծեալ կիզեաց 'ի մարդկանէ ըզ-
փուշն, և զսատակիչ պատիժս պատուհասի մե-
զացն անիծից։ Ի. յսօր լեզուաց հրեղինաց վիճա-
կի գտեալ արժանի ազգ, որ հաւասար էր ա-
նամոց անմտից, դարձեալ ստացաւ վերստին ըզ-
շնորհն բանի, պատկերակից գտեալ արարչին իւ-
րոյ։ Ի. յսօր հնչիւն սաստիկ հողմոյ և քաղցր ցո-
ղոյ հոգւոյն սրոտաց յերկիր, և զբարբառ անի-
ծիցն՝ որ շարժեցաւ վասն ադամայ՝ դարձեալ փո-
խարկեաց յօրհնութիւն։ Ի. յսօր հոտ բուրման ա-
նուշահոտ կնդրկի անապականութեամբ ծաւալեալ՝ ըզ-

1 շառատ

ծուխ մահու մառախլապատ թանձրութիւն յեղաշրջեալ յանմահուն հաստատեաց։ Այսօր զգալի պատարագի՝ զոր առաքեաց աշխարհս զգալի 'ի գաւառն իմանալի, որ նորոգեաց զաստր սրին զգալի 'ի ձև պատկերի անանիւթն քաղաքի։ Որ մեծի տուրևառուն շահի երկնայնոցն և երկրայնոցս։ Օ՛ի սոքա եառուն մարմին, և 'ի նոցանէ առին զհոգին։ Զունս ադամայ ընծայեաց ըզքո՝, և տունն ՝այ հատոյց ամս փոխարէն զմխիթարիչ սքՀոգին։ Արդիւք եառուն զմարդն ՝այ, և ՝ած ետ զ՝ած մարդկութիւն։ Այս է տուրևառութի՝ ՝այ արդարուն քարոզ։ Լ՛ախ 'ի մէնջ 'ի ծառայիցս պատարագ հնազանդութիւն. և ապա 'ի ՝ոնէն պարգևք խաղաղութիւն։ Լ՛ախ 'ի մէնջ խաղաղութիւն քՀ՝, որ քակեալ զմիջնորմն ցանկոյն՝ արար զերկուսինն մի. և ապա յ՝այ աւետեաց հընչումն, որ աւետարանեաց խաղաղութի՝ հեռաւորաց և մերձաւորաց։ Յառաջագոյն յորդւոյ նուճաՀեալ քնութի՝ զկամս հօրն 'ի քաղցրութի՝ դրրոդեաց. և ապա հոգին տկարութի՝ մերոյ հասեալ 'ի թիկունս՝ առ հայր բարեխօսեաց։ Լ՛ախ քՀ՝ մահու խաչի հնազանդեալ՝ զթշնամութիւն յանձն իւր նահանջեաց. և ապա եկեալ հոգին՝ զերկրաւորքս 'ի հանդէս երկնայնոցն խառնեաց։ Խորհուրդ լայն և ընդարձակ, առաւելութի՝ գիտութիւնն ՝այ տեսանի Եղբարք. զի լերինք են արդարութի՝ նորա, և իրաւունքն խորք քՀՀմք. որպէս և վկայեաց մարգարէն։ Պօղոս մաղթէ զայս խմասստից հոգի՝ աշակերտացն ընդունել, որ հիացուցանէ զքՀնողս, և յաՀախէ զիրեն փափագանայ՝ որ առ ՝ած։ Լ՛ռ ինչ մարմնանալն որդւոյ. և վասնէր ընդ մարմնանալն ոչ եղև փրկուի՝ աշխարհի։ Այր աղագաւ անսպարտականին խաչն նախա-

խատանայ ; և ընդհէր ոչ յետ այնորիկ մարդիկ կատարեալ։ Այն էր ընդ որդւոյ շրջեալ և բնակեալ աշակերտացն՝ և անիմաստ մնացեալ. և վասն որ պատճառի միայն ընդ իջանել հոգւոյն այնքան շնորհիւ զարդարեալ պսակեցան։ Զ.ռ ինչ քան այնքան մեծամեծ նշանաքն ոչ զոք հաւանեցուցեալ. և պետրոսի յայսմ աւուր միով քարբառով զթիւ երից հազարացն աշակերտեալ։ Զոր քննել արժան է, և զդանձս խմաստութեանն այս յընտրեմարանս սրտից ամփոփել, առ 'ի կարօղ լինել նախ սրտիւ հաւատալ յարդարութեան, և ապա բերանով խոստովանել զփրկութեան։ Զանազի փրկագործութեան յեղանակ ոչ է զօրութիւն, այլ իրաւամբք և արդարութիւն։ Որպէս զի ընդ ամենակարող զօրութեան այ՝ և ամենաբաւական ողորմութեանն յերկինս և յերկրի հաստատեսցի։

Զանազի այն օր արար զմարդն 'ի սատկեր բարեբարութեան իւրոյ բարի՝ և ետես զնա 'ի նախանձուէ բանսարկուին դաւաճանեալ և մեռեալ, ըստ արդար իրաւանցն ոչ կամեցաւ զպատրանաքն ըմբռնեալն թողուլ 'ի ձեռս սրսողին։ Զ.սաց ընդ բանն համագոյական. էջ հաղորդեաց ընդ բնութեանն՝ զոր ստեղծաք 'ի բարի. մի արդեաք բնաւորապէս բղխէ զծուխս չարութեան՝ որ առաջի իմ բարդի։ Զանիր, զի թէ ըստ բնական կրիցս տկարանայ առ օրէնս իմ, անմեղադրելի է 'ի պատուհասէն՝ զոր նա սահմանաւն ածէ 'ի վերայ նորին։ Իսկ եթէ օտար 'ի բնութենէ, և եկամուտ ունի զայն արկածք, զպատրողն յանդիմանեալ դատապարտեա՛, և զնա ողորմութիւն և գթութիւն նորոգեա՛։ Զայս պատուէր առեալ 'ի հօրէ բանն՝ հաղորդեցաւ ընդ մարմնոյ. և մարմնոյ խառնեցաւ ընդ այ, խառնումն անձաւ. և յատկութիւն

էուէցն անշփոթ։ Որպէս զի սպառընթաց մարմ-
նոյն՝ անձամբ անձին փորձեալ ծանիցէ։ Այլ
նուազ զամս երեսուն. և ոչ հաղորդեցաւ օտար
'ի բնութենէն 'ի ներգործութի։ Այլ 'ի յորդանան՝
նոր իրեալ զամենակատար մաքրութին հօր, և դա-
ւանեցաւ 'ի նմանէ հաւատարարապատիւ որդի սիրե-
լի։ Պարեցաւ 'ի հոգւոյն առ բանասարկու թշնամ-
ւոյն 'ի մարտն հանդիսի. և ծանեաւ զմեքենայս
նեռից օձին թունաւորի, որ պատրեր զսոսա ըստ
բնութեան օրինի 'ի խոտորումն մեղացն վրէի։ Պահեաց
'ի կերակրոյն հաւատար դասուց պղծարոցն դնդի.
և թոյլ ետ մարմնոյն շարժիլ ըստ հարկաւորն իւր
ըղձի։ Լակ թշնամին առընթեր կացեալ սպասէր.
և սրչափ նա անձնիշխան կամաց 'ի փափաք կե-
րակրոցն ոչ ձգտեր, և ոչ զմեքենայսն ձգել 'ի
նպատակն ուժել ժպրհէր։ Այլ յորժամ շարժե-
ցաւ, զնեռս սրեալս 'ի պատկանդարանէն՝ ձգել
'ի տրն յուսացաւ։ Տաց՝ ասէ, արա զբարինագ զօ-
րութիւն քո, որ զայդչափ ժուժկալութի պահոց
տոկացեր. և լիր արարիչ հակառակ ոյ։ Այլ
լուեալ, եթէ քանիւ ոյ կեաց մարդ ուռաւել
քան հայիւ՝ է գրեալ, գրովք զնա հնարեր գո-
ղանալ։

Յայնժամ ծանեաւ զկաղբան, խայտառակեաց ըզ-
մեքենայսն, պատառեաց զպարուրեալ թակարդն՝
որով սովոր էր որսալ զմարդիկ. Պ՝եկնեաց առա-
ջի հօր իւրոյ՝ և հրեշտակաց. և ինքնիշխանութիւն
'ի բաց վարեաց զպատրողն՝ պատրած բնութեանս
օրինաց։ Պ՝անուկն դանիել արդար դատեցաւ դա-
տաստան. յամենի արար զծերսն չար՝ զպատրիչ
մարդկութեան, որք զմեզս իւրեանց սմա համբա-
ւէին։ Այ հնացեալ ասէ՝ աւուրքդ չարութեամբ,
այժմ եկին հասին մեղք քո՝ զոր գործէիր յառա-
ջա-

1 դրոշմբ[illegible]

ջագոյն. զի դատելիր դատաստան անիրաւութիւն, և զանմեղ բնութիւն մարդկան՝ քեզ կցորդս դատապարտելիր։ Լախանձ քո չար պատրեաց զքեզ. և ախտ մարդատեցութիւն շնչեաց զսիրտ քո։ Յոպեն խաբելիք զորդիս մարդկան. և նոքա առերկիւղի հաւատարելին կամաց ձերոց. բայց ոչ և որդի երկնաւոր հօրն կալաւ յանձին զանօրինութիւնս ձեր։ Այս ասելով, և առ ոտն կոխելով զօձն ծերացեալ՝ յայտ արար զառաջին յաղթութիւնն, և զանմեղութիւն բնութեան առաջի հօրն իւրոյ և հրեշտակաց։ Յայնժամ մատեան հրեշտակքն, և պաշտեին զնա հարկաւորօքն, յորժամ յաղթեաց չարին բնաւորականօքն. և արդարացեալ բնութիւն՝ տիրեաց 'ի վերայ դիւացն հակառակորդաց՝ զօրաւորն բազկօք։

Երդ՝ քանզի նա միայն գտաւ անփորձ 'ի չարէն՝ և հաճոյ ոչ. վասն այսորիկ սկսաւ կոչել զմարդիկ յապաշխարութիւն կենաց՝ արքայութեն յուսով։ Սակ նոքա խաւարեալք 'ի պատրանացն՝ դժուարեին հետևել կոչողին. և ծանրանայր սահեցեալոցն յերկիր՝ նայել ընդ երկինս։ Եւ պատրեալքն 'ի ցանկութիւն աշխարհիս՝ ոչ ախորժէին զփառս վերին. և բռնութիւն ձգել անմարթ էր՝ անձնիշխան զնոսա ստեղծողին. և նշանօքն և վարդապետութիւնն սակաւք եկին 'ի հաւանութիւն։ Երպա զինչ առներ. ով աբանչելեացս. քանզի պատժոյ պարտական էին մարդիկ, և պարտ էր զսատիժն հատուցանել, և ապա յարդարուէին ոչ զարմանի արժանի գտանել, նա՝ որ անսպարտականն գտաւ առաջի հօր իւրոյ և հրեշտակաց, 'ի գործ արկեալ զբաղմապատիկ իմաստութիւնն իւր՝ մեռաւ պարտականացս աւիւն փոխանակ. և ընդունեալ պատառեաց զձեռագիրս մերոյ յանցանաց։ Եւ 'ի

գժոխս՝ որում ոչ էր հնար ըմբռնիլ 'ի մահուանէ. և արձակեաց զմեռեալսն։ Այլն առ կենդանիս նոյն ինքն՝ և հաստատեաց զնոսա։ Այլ զորս յանցանօքն ադամայ 'ի ներքոյ եին դատապարտութեան մահու, շնորհօք անմեղութեան իւրոյ վերածեաց յարդարութիւն կենաց, և յերկիրն պարգևաց։ Զանազի այսոքիմանամբ 'ի պօղոսէ յայտնեալ զմեծ խորհուրդն ածպաշտութեան, որ երևեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ 'ի հեթանոսս, հաւատացիմ եղև յաշխարհի, և համբարձաւ փառաւք։ Այլ մտեալ 'ի ներքին կողմն վարագուրին՝ ընծայեաց պատարագ հօր՝ քահանայն մեծ զպատուական իւր արիւնն։ Անոյշ և զդաւանանողին պատրանս, և բարեխօսեր առնել զխաղաղութիւն ընդ մարդկան։ Իսկ հայրն բարի հաճեալ ընդ գործս աքանչելի որդւոյն սիրելոյ, և լուծեալ զկնիք դատապարտսնէ ադամայ հօրն նախնոյ, ետ 'ի նա ըզհոգին, սիրեալ 'ի վերայ արեամբ գնեալ իւր հօտին, և լուսաւորել զհայեցուածս մտաց 'ի յոյսն վերին։

Յայնժամ առեալ միածինն զմխիթարիչն՝ ցողել 'ի սաղիմ, և ձիւնացոյց 'ի նա զգուշարեալ թագաւորն՝ ըստ նախագուշակ երգողին։ Որ եկն և բնակեցաւ 'ի սիրտս նոցա. և լուսաւոր սրաբ ըզլայնութիւն և զերկայնութիւն առաւելութեան սիրոյն քոյ։ Այլ զի շնորհ էր ձրի փոխանակ մահուն քոյ, յաղագս այնորիկ հաւասարապէս յարժանաւորս և յանարժանս տարածանի։ Աստի և 'ի միոյ բարբառոյն պետրոսի անձինք երեք հազարք այսօր աշակերտին։ Զպա յիրաւի վկայեաց բանն՝ սքանչելի գոլ զշնորհ աւուրս մեծի։ Օ՜ի որպէս քան զսերմանելն՝ ժողովելն է ախորժելի, նոյնպէս

պէս և ՝ամ սեր մանց քնի խորհրդոյն 'ի յայսմ ա-
ւուր պտուղն կթի։ Այս է հոգին սբ, որում
ինքն վկայեաց՝ ուսուցանել մեզ, և յիշեցուցանել
զամ առ 'ի յինքենէ ասացեալսն։ Այս ցող քաղց-
րութեան զՀարթացոյց զբոյսս բանիցն քնի. և օրհ-
նեալ պսակեաց զամս տնօրինական իւր գոր-
ծոցն։ Այսն որոյ աղաղակէ եկեղեցի. ՀՄեռնէ
էանց. այգիք մեր ծաղկեցան, և ետուն զՀոտ
անոյշ։ Յայսմ առաւօտու հայեցաւ հայրն երկ-
նաւոր 'ի յերկիր. արբոյց զսա յորդառատ գետով
սբ հոգւոյն. և փթթեալ ծաղկեցոյց զանազան
բոյսս առաքինութեանն 'ի բազմապատիկ տնկոց ար-
մատոց. որպէս և վկայեաց մարգարէն։ Այս ձիր՝
որ ոչ չափի. և պարգև՝ որոյ ոչ կշիռ գործոյ
զուգակցի։ Այս տուր՝ որոյ խակութեան բնութեանն
ոչ պարփակի. և հնորհ՝ որոյ ոչ զեղումն գերա-
զանց մտաց սահմանի։ Այս ողորմութեան առատ.
որ ՝ամ թագաւորութեան աշխարհիս հաւասարեալ՝
փոքր գտանի. և մխիթարութեան՝ որոյ ոչ ուրա-
խութիւն մարմնաւոր լծորդի։ Այանզի ո՞ՀՀ կա-
րաց ընդ տիրելն աշխարհի՝ և զանապականութեան
ստանալ. կամ որ՞ՀՀ թագաւորի եղև ձեռնար-
կելի զմահ 'ի կեանս փոխել. կամ ՀՀ երանութեան
մարմնաւոր՝ կարաց զկեանս յաւիտենականս ընդ-
գրկել։ Իսկ նա յիշանելն այսօր 'ի վերայ դասուց
առաքելոցն՝ զօրայոյց զբազուկս նոցա, զայսոսիկ
հանուրց տիեզերացս բաշխել։ Այանզի սովաւ նոքա
առլցեալ՝ ատուՀերաւ զՀիւանդս բժշկեցին, թաշ-
կինակաւ զցաւս փարատեցին, ձեռօք զմեռեալս
յարուցին, զկաղս գնացուցին, զկոյրս լուսաւո-
րեցին, առաւել զՀոգւոց աչս՝ քան թէ զմարմ-
նոց յերկինս հրաւիրեցին. անվախճան փառացն
ժառանգորդս զմարդիկ արարին։ Այնա ապա

յայտ եղև , եթէ ոչինչ յերկրաւորացս երկնայնոց տրիցն գտաւ զուգահաւասար ։ Որ ոչ միայն 'ի բանականացս եղև ազգ սմա ներքնդունակ . այլ և անշունչ տարերք գեր 'ի վերոյ մարդկան զբ-տան սովաւ զօրացեալք ։ Որ և նոյն ինքն յիջա-նելն՝ նախ զտունն ելից աքանչելապէս , և ապա հանդեաւ 'ի նոսա սիրողապէս ։ Այանզի ասէ ։ Լու 'ի կատարել աւուրցն պէնտէկոստէից՝ էին միա-բան ամենեքին 'ի միասին ։ Լու եղև յանկարծա-կի հնչիւն յերկնից եկեալ իբրև օաստիկ հոզմոյ . և ելից զամ տունն՝ յորում նստէին ։ Լու երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև 'ի հրոյ , և նստաւ իւրաքանչիւր 'ի վրա նոցա ։ Լու լցան ամենեքեան հոգւով սրբով . և սկսան խօսել յայլև այլ լեզուս , ոյլ և հոգին տայր նոցա բարբառել ։ Այ՝ հաբան էին ամենեքեան 'ի միասին՝ ասէ , ոյլ զի ցուցցէ՝ եթէ ոչ երկոտասանքն միայն , այլև ՅԾԾԱԾԻՆ կոյսն ընդ նոսա , հանդերձ կանամբքն՝ որք պաշտէին զյս 'ի գալիլեայ՝ և տեսողք եղեն յարութեան ։ Այնդ որս և հօթանասնիցն գունդք հանդերձ ՅԱՄ ծանօ-թիւք ։ Այրդ եկն 'ի վրա նոցա հոգին սբ՝ ըստ նախ խոստմանն քոյ , որ ասաց ։ Այհա ես առաքեմ զաւետիս հօր իմոյ 'ի ձեզ . և դուք նստարուք 'ի քաղաքիդ երուսաղէմ , մինչև զգենուցուք զօրութի 'ի բարձանց ։ Լու հնչիւն որոտման հոզմոյ եհար , որով ցուցանէր զառաւելութի հեղմանն ։ Դարձեալ զի և նոյն հոգի էր , որ 'ի սկզբան շրջէր 'ի վերայ ջուրցն . ելից զտունն ընդ իմանալի զօրութեանն և զդալի տեսակ հրոյն 'ի աքանչացումն տղայաբարոյիցն ։ Լու ապա բաժանեցաւ 'ի հրոյն յայնմանէ լեզուք . և հանգեաւ 'ի վերայ իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ . որով նշանակէր զպարգևս շնորհի այլատարազ լեզուաիսօսութեն ։ Ասէ

տի և ընդ հանդէլն 'ի վերայ նոցա՝ զգալի մարմ-
նոյն զգայարանաց տեսանելի լեզուքն հրեղէնք ,
միտք նոցն խմանալի զօրութիւն խմաստնացեալք՝ սկսան
յայլատարազ խօսս զլեզուսն շարժել ։ Բաստ որում
ասէ . խօսէին յայլևայլ լեզուս , որպէս և հո-
գին տայր նոցա բարբառել ։ Ոչ եթէ վասն զի
լեզուացն շնորհ նախամեծար էր , այլ քանզի առ-
ընթեր ոչ գոյր այլ նշանակ , զշնորհն՝ որով զօ-
թացանն , հրատարակել ։ Իսկ այլատարազս խո-
սելով՝ զբովանդակ ամբոխս քաղաքին ած 'ի վրն նոցն
հիացեալ . ըստ որում և ասէ , եկին միաբան ամ-
բաղմութիւն , և խռնեցաւ . և աքանչանային ամե-
նեքեան զարմացեալք . և այլք վասն աքանչելի
այլափոխմանն ասէին , թէ արբեալք իցեն ։ Բ.ուրդ՝
վասն ամենեցուն այսպէս գիտելի լինելոյ շնորհիս ,
ոչ ներքդործեաց 'ի նոսա հոգին ընդ իջանելն՝ ըզ-
խոստումն քոյ , այլ զլեզուսն ։ Օ ի նա ոչ ասաց՝
եթէ 'ի լեզուս խօսիք հոգւովն . այլ՝ եթէ ուսուս-
ցէ ձեզ , և յիշեցուսցէ ձեզ զնամ , զորինչ ասա-
ցի ձեզ ։ Բ.յլ արդ՝ եթէ զայս առեալ էին 'ի
սկզբանն , ոչ այնպէս ամբոխեալ էին և զբաղ-
մութիւն 'ի նշաւակ տեսութեն իւրեանց այլատա-
րազ խօսիւքն ձգել ։ Ա ման որոյ ամենիմաստն նախ
որպէս զմանկունս 'ի խնջոյս խաղուց՝ զարմանալի
փոփոխմամբ շփոթեաց զնոսա ։ Օ ի որք երէկ և
այսօր արք գալիլեացիք գոհեցիկք և շինականք՝
ահա ասեն՝ իբրև զիմաստուն հելլենացիս ձար-
տարաբանեն . և այլք 'ի պարթևական տարաշ-
խարհիկ բարբառս նոցա պատասխանեն ։ Պետրոս՝
որ 'ի կափարնաուս մնեալ , լսեմք՝ զի ընդ հռով-
մայեցւոց լեզուն խրոխտալով արշաւէ ։ Բ.ս փի-
լիպոս՝ որ 'ի բեթսայիդա գալիլեացւոց՝ արաբաց-
ւոց բարբառովն զնոսս իւր յօդէ ։ Յ ոհաննէս որ
'ի

'ի նազարէթ մնեալ՝ զիարդ կիլիկեցւոց ձայնիւն զմեզ հարցանէ։ Եւ թողմասու օրքս լեն, որ յեթովպացւոց լեզուն զբանս մարգարէից յիշեցուցանէ։ Մատդէոսն այն տխմար՝ տեսէք, որքան վայելուչ մեծաց հայոց բառիւքն զբանս իւր յօդէ։ Եւ բարդողմէոս մանուկ՝ երբ թէ 'ի մարս ծնեալ՝ զնոցին խօսսն հնչեցուցանէ։ Ո՞վ սքանչելեացս. 'ի զանազան գաւառս ծնաք, և աշխատուլթք 'ի բարբառս նոցին վարժեցաք։ Եւ ահա որքին՝ որք ոչ տեսին զայն քաղաքս՝ անաշխատ ըզնոցին ձայնս հնչեն։ Ո՞եծ է ասեն՝ արուեստ սքանչելեացս. և թէ առ ի՞նչ ունի աւարտել՝ ոչ կարեմք նկատել։

Յայնժամ յարուցեալ պետրոս հանդերձ մատսանիւքն համբարձ զձայն իւր. և սկսաւ տարակուսանացն լուծումն շնորհել։ Ընդ հրէաստանեայք, և ամենեքին որ բնակեալ էք յերուսաղէմ. այս ձեզ յայտնի լիցի, և ականջն դիք բանից իմոց։ Ո՛չ է արբեցուլթիւն այս գինոյ յերեք ժամու աւուրս. այլ բաժակ է բերկրուէ, առհաւատչեայ անապականուէ, մարգարէիւք նախագուշակեալ, և ապա խորհուրդն 'ի լրումն եկեալ։ Ո՞վ օրէնսուսոյցք, և մարգարէից աշակերտք. այս այն է 'ի յոլովեալ ասացեալն. զոր միշտ ընթեռնուք՝ կատարեցաւ։ Ընդ ոտանդի ահա յաւուրս յետինս եհեղ ասծ յոգւոյ իւրմէ 'ի վրայ զանազան հասակաց մարմնաւորաց, և մարգարէանամք։ Այսր նազովրեցի՝ որ երևեցաւ առ ձեզ նշանօք և արուեստիւք, և տարապարտ խաչեցաւ, եկ յերկինս՝ և նստաւ ընդ աջմէ այ. և զայս պարգևս ընկալեալ հոգւոյն սրբ 'ի հօրէ, սփռեաց 'ի վրայ մեր։ Զա՝ յորժամ համբարձնայր յերկինս փառաք՝ մեզ ուխտեաց. և մտեալ յերկինս՝ հօր և հոգւոյն հաւասար նստեալ՝ զայս

ասաց։

անաց։ Լաս զգործան՝ զոր ինձ հաւատացիք՝ կա-
տարեցի յերկրի. զանուն հօր իմոյ փառաւորեցի
առ մարդիկ. զեղծեալն 'ի մախանաց չարին ըզ-
պատկերակից մեր՝ ընդ բնուն ածուեաս մեր խառ-
նեալ՝ սրբեցի սքանչելապէս։ Զմահ իմ փոխա-
նակ ողորմելի և տառապեալ աղգի մարդկան տը-
հեալ՝ զերծուցի զնոսա յանիծիցն. և այժմ նո-
վին մարմնով եկեալ՝ առնում զերկրպագուն յերկ-
նաւորացս։ Զ.յսուհետև քեզ եկեալ եհաս ժա-
մանակ գործոյ, ով փառակից իմ հոգի. պարտիս և
զքոյդ մարդասիրուն ցուցանել 'ի յերկրի։ Զ.յսու-
հետև քեզ ապաստան առնեմ զանուն ածուեաս մեր
յարդել առ մարդիկ։ Հայր իմ ներեաց և եթող
զպարտն՝ որով դուն խափանեցար 'ի հեղլոյ առ
նոսա, մարմնոյ իմ պատարագաւն. տա առ զիս առ-
հաւատչեայ 'ի նոցանէ. և տայ նոցա զքեզ խա-
զաղութիւն։ Զ.ՀՀ այժմիկ սիրոյ աղբիւր՝ սիրով առ
նոսա. և մխիթարեա՝ զորս 'ի պանդխտութիւն վայրն՝
նժդեհ և անցաւոր կենաց տառապին։ Զարձն զնա
'ի նանրութենն. զոր 'ի զուր խռովեցուցանէ թշնա-
մին, նայել յայս բաղմապատիկ օթեւանս՝ զոր
պատրաստեցաք նոցա։ Զաշխեա նոցա իմաստութիւն
առաւ, զի մի եղեռնագործն մոլորեցուցցէ ըզ-
նոսա։ Հաղորդեցայ կարեաց նոցա, և ծանեայ
փորձիւ՝ զի տկար և դիւրակործան բնութիւն են
վիճակեալ. վասն այնորիկ աղաչեմ, անմեկնե-
լի լեր 'ի նոցանէ. և զօրացո զնոսա ընդդէմ ա-
մենայն փորձանաց։ Զ.ահանջեա զկամս մարմ-
նոցն, և զօրացո զկամս մտացն։ Զ.եզ տամ ըզ-
նոսա. քեզ յանձն առնեմ զնոսա. զքեզ խոս-
տացայ նոցա. և այժմ 'ի քեզ ամրափակեմ զնոսա
զամենեսեան. որպէս զի մի լեցի ինանիր հեղումն
արեան իմոյ, որ վասն նոցա։ Զ.ատացո 'ի նոսա

ՅԼ

1 Հաստատեալ

ոմ համագոյակից իմ հոգի՝ զշնորհս բժշկութիւն, զմարգարէութի, զխորհէլն զվերինս, զատելն զերկրինս։ Զոս թէպէտև բազում անգամ խօսէի զՀառս արքայութիւն երկնից, ոչ մատուցանէին զունկն սիրով՝ առ 'ի լսել։ Զ.ՍԼ յորժամ բժշկութիւնս կատարէի, մեռեալս յարուցանէի, կաղս գնացուցանէի, զկուրաց աչս բանայի, ամենեցուն սէրն առ իս ահեալ առատանայր։ Զ.Հաց հոգւոց զբանս իմաստուէ տայի, և ոչ ոք զգաստանայր։ Զսկ յորժամ զՀաց մարմնոյն առատապէս ետու 'ի յագումն նոցա, այնչափ յորդորեցան 'ի սէր իմ, մինչ կամէին յափշտակել, և թագաւոր զիս կացուցանել։ Զ.յս է Հանապարհ մտաց ազգի մարդկան, զոր փորձեցի. անկարացեալ են՝ զայս նոցա խոստացեալ վերին բարեացս խորհել։ Զ.Ոչ են ծանօթ երկնաւոր փառաւորութեան. այլ միշտ ընդ երկիր յածին. և կարծեաք ունին զայս Հրաշմարտութի. և այն է համարեալ առ նս կեանք վայելուչ։ Զ.ման որոյ դու զտղայութի մտաց նոյ նախ նշանաք և սքանչելեաք զարմացո, և զկարծիս նոցա 'ի Հաւատս Հաւանութե՝ բժշկութեան շնորհին ուղղեա։ Զ'ի արդելցես զառատուէ քո շնորհս, 'ի փառս և 'ի գովեստ ՀԾութեանս մեր բաշխել։ Զ'ԵԾ է, զի ոմն երկինս՝ նոյնպէս և երկիր լցցի փառաք ՀԾուէս մեր. և ոմն զՀրեշտակս՝ սոյնպէս զմարդիկ ստացուք անուանս մեր օրհնաբանիչս։ Զ'Ոչ է զարմանք, եթէ զմեր արարածն մոլորեալ՝ մերով բազմապատիկ զօրութեամբ առ մեզ նուՀաՀեսցուք։ Զ.Դդ՝ էջ աղաչեմ էջ, զի պաշարէէ է տարակոյսն զնոսա։ Փոքր ինչ 'ի անօրէնութե մահուն մերկնեցայ. և երկունք որպէս զծննդականի պաշարեաց զիմ աշակերտս, մինչ երագեալ զյաբութինն՝ մխիթարեցի զնոսա։ Զ'ինն 'ի մետասանիցն

նիցն ոչ էր անդ. և տասանցն վկայելոյ ոչ հաւատայր վասն յարութենն, մինչև դարձեալ յայտնեցոյց նոցա. և զխոցուածդ կողիցս՝ հաւատ նմին մատցն ետու շօշափել։ Լու այժմ իմ Ճանապարհ արարեալ ընդ երկինս, մի՛ կարձմտուի նոցա գայթակղեսցի՝ ի մխիթարուէ քո յուսոյդ։ Ապան որոյ երագեալ մխիթարեա զորդեակսն իմ՝ և զաշակերտսն։ Գնա՛ հանդի՛ր ի նոսա, որպէս խոստացայ նոցա. և վարդապետեալ յիշեցո՛ նոցա զամենայն առ յինէն ասացեալսն։

Յայնժամ սլացեալ ամենակարն զօրութի, փրկականն առատութի, հեղութե աղբերն, մարդասէր շնորհն, բարութե հոգին, հեղումն առատութենն ա՛յ, անցաներ ահեղ որոտմամբ ը դասակարգութիւնս անմարմնականացն պարուց. և աքանչացեալ պակեան հիացմամբ նահապետութիւնք երկնաւոր զօրացն։ Ապան զի զոր ցանկային ընդ աղօտ տեսանել, նայեցան իսկական էութենն գիմեալ՝ ի վե՛ր երկրածին ազգի մարդկան սփռեալ։ Գանզի էջ բոլորովին անձնաւորութի հոգւոյն սո՛ր այսօր՝ ի դասս աւաքելոցն գնդի, որպէս միածինն՝ ի յարգանդ կուսին։ Լու որ եկն, այլ ոչ մեկնեցաւ. այլ մնաց յեկեղեցի քոի. ը անսուտ խոստման իւրն փեսայի, որ ասաց. ը ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի յաւիտեան։ Որ և զօրացոյց այսօր զաւաքեալսն, և նոցա մատակարարութենն զընդհանուր տիեզերս։ Օ՛ի և սմա առաւել քաղցրացաւ Ճաշակ մարդկան փրկութե, ընդ որս եկաց և բնակեցաւ։ Որսոյ և պետրոս կրեալով յինքեան զՀոգին, զստերն անանիայի՝ ոչ մարդկան տայր, այլ ա՛յ։ Ընդհանր ասէ՝ եդիք՝ ի մտի ստեալ ա՛յ, և փորձել զՀոգին ա՛յ՝ զիս կամելով դատապարտել. ոչ մարդկան ստեցիք, այլ ա՛յ։

Սո-

Որպա՛ չնորհն՝ 'ի դնելն զձեռս առաքելոցն՝ հան-
գեաւ 'ի վրայ ստեփաննոսի ։ որ և անդէն զօրացաւ
առնել նշանս և արուեստս մեծամեծս ։ Այս արդարև ոչ թագաւոր եկեղեցւոյ՝ որոշեր զպօշոս
և զբառնաբաս 'ի գործ բանին իւրոյ սպասաւորութենն ։ Այս զոմանս ընտրեաց յառաքելութիւն,
զոմանս 'ի մարգարէութի՛ն, զայլս 'ի հովուութի՛ն
և 'ի վարդապետութի՛ն ։ Այլ մնատութեայ զառաքելութի՛ն վիճակեաց, և ազարեայ և տիմոթեայ՝
զմարգարէութի՛ն, և երիցանցն եփեսոսի եկեղեցւոյն՝ զհովուութիւն և զվարդապետութի՛ն ։ Օգոյշ
լերուք ասէ՝ հօտիդ. որում եդ զձեզ հոգին սուրբ
տեսուչս և վարդապետս ։ Այս սրձակեալ համարձակեցոյց զլեզուս նիւթեղէնս՝ կոչել հայր զնոսա.
որնստի 'ի կուռս հրեղէնս. և թեւասքողեալ պաշտի 'ի հրեղէն յանմարմնականացն ։ Օ՛ի առաք ըզ-
հոգին որդեգրութի՛ն, որով աղաղակեմք, աբբայ
հայր ։ Լոյն ինքն հոգին՝ վկայէ հոգւոյս մերոյ՝
եթէ եմք որդիք նո՛յ ։ Այս ուրեմն տայ բան իմաստութի՛ն, այլում բան գիտութի՛ն. միւսումն հաւատք
զկերինս փոփոխելոյ. այլում զօրութի՛ն՝ սքանչելի
գործս կատարելոյ ։ Այս օծանէ զմիտս մեր՝ ըստ
յովհաննու. և առնէ քրիստոնեայս, և քո՛ ընկալս. և յայսմ օծութի՛ն զօրանամք գիտել զնա՛մ ։
Այս լուսաւոր առնէ զաչս սրտից մերոյ՝ գիտել
զոյս կոչման մերոյ, և զմեծութի՛ն փառաց ժառանգութե՛ն, և զլայնութի՛ն և զերկայնութի՛ն սիրոյն
քո՛ի ։ Այսն որոյ արհամարհեցաք զերևելիս. և
փափաքեմք անտեսութեան ։ Լու՛ հոգւովս՝ քո՛ 'ի մեզ
բնակեալ մեռոյց զզգայարանս մարմնոյ՝ հեշտութե՛ն
մեզաց. և կենդանացոյց զբանական հոգիս՝ արդարութի՛ն խորհրդոցն յուսով ։ Որով զօրացեալ
կոխեցին մարդիկ զնեղութի՛ն և զանձկութի՛ն՝ զհա-

լաճանա՝ զսով՝ զմերկուն՝ զսուր՝ զորկանս՝ զհան-
դերձեալսն. պայծառացեալ հոգւոյն 'ի գիտուն
սիրոյն քոյ։ Այ՝ որ քննէ զլսորս ոչ՝ քննէ և
զսիրտս մարդկան. և տեսեալ զտկարութիւն բնու-
թեանս՝ 'ի թիկունս հասանէ տկարութիւն մերում.
և բարեխօս լինի 'ի հեծութիւս անմռունչս վասն
եկեղեցւոյ առ ած։ Այ՝ ինքն սիրողացն զած յամ
գործս բարիս գործակից լինի հանապազ։ Յ՝մե-
նեցուն կամի զփրկութիւն, ամենեցուն սպասէ հա-
ւատոց. որպէս զի 'ի նոսիրեալն՝ զհաւատոյ սեր-
մանեացէ 'ի նոսա զշնորհս հոգւոյս։
Կամիս գիտել զչափ սիրոյ սորա առ մարդիկ. յա-
րեաց 'ի կառս ներքինոյն, ոչ երբեմն փիլիպպոս։
Տես թէ որպէս միով հաւատով հարցմանն՝ տուհաւ
հոգին փոխանակ։ Տէր ասէ, ապաչեմ զքեզ, մի
իւր ասէ մարգարէն զայս, թէ վասն այլոյ ու-
րուք։ Զ՝ուռն եղև ուղիղ հարցումն մտից հոգ-
ւոյն յանձն ներքինոյն. և պատրաստեաց տեղն
բանիցն փիլիպպոսի, մինչ եկաց ջրոյն առ ըն-
թեր. և իջեալ հոգին ուսուցիչ ներքինոյն, աւե-
լորդ համաբերեալ այլ աշխատ առնել զփիլիպպոս։
Յ՝այս է հոգւոյն սէր պաշտպանելն աշխարհի. այս-
քան է նորա մխիթարելն զմարդիկ։ Այ՝ զեթով-
պային խտրէ. ոչ զհեթանոսս անարգէ. ոչ զհրե
այս յարգէ. ամենեցուն զէիրն հաւասար ընձեռէ։
Այ՝ինայն զհաւատս յօժարութիւն սրտի՝ նիւթ շնոր-
հին իւրոյ 'ի մէնջ տալ՝ փափաքէ։ Այ՝ 'ի նոյն
փայլատակեալ ջահս զանազան շնորհի՝ զեկեղեց-
ւոյ մանկունս Ճառագայթէ։ Այ՝ գրգռեալ զնոսա
շնորհօք՝ առ սեր հօրն ձգէ 'ի հեշտութիւն զբաղ-
մանց աշխարհի։ Օ՝ի տղայոց խաղալիկ՝ նշանքն
և լեզուհախօսութիւնն 'ի հոգւոյն տուհեալ. և կաթն
մանկանց՝ շնորհք բժշկուն, և աջողութիւք զօրութեց

իսկ կատարելոյն մատակարարել հաստատուն կե-
բակուր , որ է սերն ՝այ ։ Արդեւ աղաղակէ՝ որ ձա-
շակեացն . եթէ ունիցիմ մարգարէութիւն, և գիտիցեմ
զամ գիտութիւն , և հաւատս՝ մինչև զլերինս փոփոխե-
լոյ , և սէր ոչ ունիցիմ , ոչինչ օգտիմ ։ Օ սոյն և
աշակերտացն ըղձանայ յասելն . աղօթս առնեմ և
ծունր դնեմ , առնուլ ձեզ՝ ոչ հոգի նշանագոր-
ծութիւն . այլ զհոգին իմաստութիւն . որ լուսաւորէ
զաչս սրտից 'ի գիտութիւն լայնութիւն և երկայնու-
թիւն , բարձրութիւն և խորութիւն սիրոյն քրիստոսի ։ Զ՝
այսորիկ և նշանաց և լեզուաց ազգութիւն 'ի հոգ-
ւոյն՝ իբրև զանօգուտս՝ պակասեաց 'ի միջոյ ։ Իսկ
հոգին իմաստութիւն և հանճարոյ՝ միշտ ներգործէ
'ի մէջ եկեղեցւոյ . և զսերն քրիստոսի պայծառաց-
ուցանէ յորդւոյ սորա հոգիս ։ Զի՞ որ կարծես-
ցէ թէ անուանել զայն , եթէ ոչ 'ի նմանէ նախ
զազգութիւն ընկալցի ։ Զ՝այս թէ որ մատչի յա-
ռաջ առանց կոչման սորին հրամանի , իբրև ըղ-
կախարդն սիմոն փորձող սէր հոգւոյն՝ 'ի դաւթէ
տաճարիս հերքեսցի ։ Զնիք է ամուր 'ի վերայ իւ-
բաքանչիւր անդամոց եկեղեցւոյ սրբոյ քրիստոսի , որ
պարսպեալ պահին սովաւ յիւրաքանչիւր պատիւս
շնորհի ։ Զ՝անցի որ հաստատեաց զմեզ ձեռք հան-
դերձ 'ի քրիստոս , ՝այծ է . որ եւ զառհաւատչեայ հոգ-
ւոյն 'ի սիրտս մեր , և կնքեաց զմեզ ։ Զարդա-
պետ է , ուսուցանել և յիշեցուցանել զառ՝ 'ի քրիստոս
ասացեալսն ՝ամ ՝ճշմարտութիւն . որպէս խոստացաւ ,
թէ յորժամ եկեսցէ նա հոգին ՝ճշմարտութեան ,
առաջնորդեսցէ ձեզ ՝ամ ՝ճշմարտութիւն ։ Զ՝արտա-
բապետ է իմաստուն , որ շինէ զօտարս և զպան-
դուխտս՝ 'ի վերայ հիման առաքելոց և մարգա-
բէից , առ 'ի ինուլ զչափ հասակի կատարմանն
քրիստոսի ։ Զետ է յորդառատ՝ առուգանող մտաց մարդ-
կան ,

կան, որ արբուցանէ զակօսն խմաստից մերոց, և զուարթացուցանէ ցօղո

Ով ամ յայ, և նորոգօղ ամի սքՀոգի. 'ի քո խնամս պահպանութեանՀովիՀն քաղ զՀնոս իւր արար ապաստան. և սիրեաց զՀառագայթ քո յեկեղեցի իւր մինչև ցյաւիտեան։ Ի քէն շարժին լեզուք մեր 'ի պատարագս օրՀնութեան, և անձինք մեր կարգեցան 'ի սպաս զանազան շնորՀաց քոց պաշտաման։ Օ քեզ աղաչեմք ամբին միաբան, և խօսիմք ընդ քեզ համարձակ՝ որդիք երկանց արգանդի քո ծննդեան։ Մի դարձիր 'ի Հատէ քումմէ վասն Հոտոյ մեղաց զաղրութեան. և մի տրտմիր վասն անպարկեշտ բանի բարբառման։ Լայլ մնա ընդ մեզ Հաշտութիւն մինչև 'ի կէտն աւարտման. և լեր ուղեկից յերկնային քո խորանաց։ Ով տէր, և զարտաքսեալ քս 'ի վայրս նժդեհութեան, պտրապեալ պահեա 'ի թշնամեաց նեռոյ խոցոտման։ Ունիմք զօրութիւն Հանդիսանաք 'ի մարտ ՀգնութիւնՀ. խնդրեմք Հառաչմամբ՝ մի տար զմեզ 'ի փորձանս դարանակալին չարութեան։ Տուր ծարաւեացս զգինի սիրոյ քո արբեցութեան, զմատուռմակեալն այսօր 'ի սքՀ վերնատան։ Օ ի միսիթարեսցուք 'ի խշտիս մերոյ տրտմութեան, և 'ի Հանդերձեալ կենացն յոյս կալցուք ապաստան։ Ով բարերար սքՀ Հոգի, և յայս նուէրս՝ որ 'ի քոյոյս քեզ բուրումն օրՀնութեան, Հոտոտեա քաղցրութիւն, ամ իմ, Հոգի Հեզութեան։ Լու քեզ օրՀնութիւն 'ի մէնք մի բերան, ընդ Հօր և որդւոյ 'ի մշանջենաւոր կեանսդ, և անվախճան։ Լ մէն։